

15697

891.99

7-29

17 4127 P. 3. 1822

2003

891.99

7-29

ՍԻՒԼԻԿ

(նախնիական պատմություն)

ՏԻԿԻՆ ԵՒ ՆԱԺԻԸՏ

(Վ Է Գ)

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՂԱԲԱԼԵԱՆՅ:

ԹԻՖԼԻՍ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԻԷԼԵՆ ՓՈՂՈՑ, Տ. 1 | 2

1885

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7/7-1922
ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ԱՂԱԲԱԼԵԱՆՅԻ

1002
5616

1885. 28
Ե-Պ

3455

ԽՈՐԻՆ ՅԱՐԳԱՆԱՅ ՆՈՒԷՐ

ՄԵԾԱՐԳԻ ՊԱՐՁՆ,

ԲԺԻՇԿ ԹՈՄԱՆՈՍ

ՄԻՂՎԵԼԵԱՆՅԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿԶԻՑ.

Дозволено цензурою. Тифлисъ, 4 Февраля 1885 г.
Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1/2.

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

ՏԻԿԻՆ ԵՒ ՆԱԺԻՏ

ՏԻԿԻՆ ԵՒ ՆԱԺԻԸՏ

ՏԵՏՐԱԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



Սա տարուայ եկաւոր ժողովուրդը այնքան շատ էր իստէնթուքումը, որ ամեն փոքր ի շատէ օրինաւոր տուն, բնակարան կամ հիւրանոցի սենեակ կրակի գին ունէր, այնպէս որ երեք ամսուայ տալու վարձով կարելի էր այնտեղ և եթ մի փոքրիկ սեպհական տուն շինել՝ հիմքից մինչև կոուրը. ուրեմն կամայ ակամայ ստիպուեցայ բաւականաչափ մի փոքրիկ խցիկով, որը վարձեցի մի պառաւ ուռս կնօջմէ: Առաւօտ և երեկոյ այդ պառաւը պարտաւոր էր ինձ համար ինքնաեռ դնելու. և այդ բանի համար պիտի տալի նորան ամսական երեսուն մանէթ: Սաստիկ դժգոհ էի, բայց ինչ անէի. այս մէկ ժամանակաւոր հարկ էր, որ ամենքս (հանքային ջրերով բժշկւողներս) ստիպուած են տալու Կաւկասեան բժշկարար ջրերուն:

Մի օր այս պառաւր, ձեռքը մի հաստ տետրակ բռնած, ներս մտաւ ու ասաց ինձ.

— Պարոն հրամանքդ ռո՛ւս ես, թէ այլազգի ես, մեր հաւատէն չես:

— Ես հայ եմ, պատասխանեցի:

— Եթէ հայ ես, ուրեմն այլազգի ես, մեր հաւատէն չես:

— Հա՛, այդպէս է ասացի, ես ո՛չ ձեր ազգէն եմ ոչ ձեր հաւատէն. ինչ ես ուզում ինձանից:

— Ձեռք կարող արդեօք իմանալ՝ այս ինչ լեզուով գրած է. (ցոյց տուեց ձեռքի տետրակը). ոմանք ասումեն թէ վրացերէն է, այլք ասումեն՝ թաթարերէն է, ուրիշները ասումեն՝ չէրքէզերէն է. բայց տեղեակ ոչ ոք չգիտէ: Գուր որովհետեւ ռուս չես այլազգի ես, անշուշտ պիտի կարողանաս կարդալու: Դատ անգամ ուզեցել եմ հնոցը ձգել այրել, կամ ձմեռուայ պատուհաններս թղթել, բայց յետոյ փոշմանել եմ և միտք եմ արել թէ՛ կարելի է մի մարդ գտնուի, որին դա պէտք գայ, ինչո՞ւ փչացնեմ այս տետրակը. անշուշտ մէկ մարդ սորա վրայ աշխատութիւն թափել է ու օրերով աչքը խաւարացրել է, գրել է: Նայէ՛, պարոն, ինչպէս հաստ տետրակ է: Ձեռքս առի տետրակը, նայեցայ՝ տեսնեմ հայերէն է. շատ ուրախացայ:

— Մայրիկ, ասացի, եթէ այս տետրակը քեզ պէտք չէ, ծախէ ինձ, ես քեզ լաւ փող կ'ուտամ:

— Ինչի՞ս է հարկաւոր, ասաց պառաւր. բայց եթէ փող կուտաս ու կառնես՝ այդ ինձ համար ա-

ւելի լաւ է, ես խեղճ կնիկ եմ, մէկ քանի կոպէկը երբէք ինձ համար աւելորդ փող չէ:

— Կուզե՞ս տասր մանէթ տամ:

Պառաւր աչքերը վառուեցան ազահութիւնից, այդպիսի առատ վարձատրութիւն երբէք չէր սպասում նա մի անպիտան տետրակի համար, որ ամեն լոպէ պատրաստէ եղել հնոց ձգելու ու այրելու: Բայց արի տես որ մարդկային ազահութիւնը սահման չունի եղած:

— Տո՛ւր տասնը հինգ մանէթ, ասաց պառաւր, ինքն էլ վախենալով այս պահանջմունքէն, ու անքեզ տետրակը:

— Լաւ է, մայրիկ, ասացի, կուտամ քեզ տասնը հինգ մանէթ և կառնում տետրակը. բայց ասա՛, խնդրեմ, ինչ կերպով դա քու ձեռքը ընկել է:

— Գուր ուզումես իմանալու ինչ կերպով իմ ձեռքը ընկել է այս տետրակը, ասաց պառաւր, ահա՛ լսէ: Ես մէկ փեսայ ունէի, որ վեց-եօթը տարի առաջ հիւրանոցի մէջ սպասաւորութիւն էր անում: Այն տարի մի օտարազգի բժիշկ եկաւ Խոսէնթուք և վարձեց այդ հիւրանոցումը մի սենեակ, և քանի մի ամիս կեցաւ. երբ որ նա իւր տեղը դնաց, սենեակը մաքրելու ժամանակ, փեսաս գտաւ այս տետրակը պահարանի մէջ և, կարծելով որ մի օր սորա տէրը կսկսէ պտրելու և գտնողին վարձ կ'ստանանայ՝ պահեց իւր մօտ. բայց փեսաս շուտով մեռաւ. աղջիկս էլ նորանից յետ շատ չապրեցաւ. նոցանից մնացած մի քանի լաթերի և հին հալաւների հետ միասին այս տետրակն էլ ինձ

մնաց: Ահա այս տեսրակի բոլոր պատմութիւնը:
Տուր փողը և բարի վայելէ:

Ես իսկոյն տուի տասնը հինգ մանէթը և տես-
րակը իմ սեպհականութիւնը դարձրի:

Սէ-Լէ-է:™

Էսսէնթուք

10-ն Յուլիսի 18**



ԱՌԱՋԻՆ ՏԵՏՐԱԿ

Տա-Ջ-Ե, Յ-Ն-Է 10.



ատ ճախորդ պարագաներով մտալ Տաք-
Ջուր: Անպակարբը, որն մեզ «Հանքային ջրերէն» բե-
րեց այստեղ՝ դուրս թափեց ամենիս փողոցի մէջ-
տեղը և ինքը գնաց հեռացաւ: Մանր, սառ, թափան-
ցիկ անձրևը անգաղար շաղումէր. գետինը թաց, տեղ-
տեղ ջրշեղջներ կանգնած. ծառերից ամէն մի քամի
փչելիս յորդաՀոս թափում էին խոշոր կաթիլները.
մարդիկ գէմքերին հոգս նկարած՝ շտապում էին
իրանց գործին. խանութի տղերք ծոյլ-ծոյլ կանգ-
նած էին խանութների դրան մօտ, անց ու դարձ
անողներին մինչև անգամ չէին հրաւիրում ապրանք
գնելու, իմանալով՝ որ ամեն մարդ այժմ մի բան է
ցանկանում, որ է՝ պատսպարուիլ այս անտանելի օդէն:

Այսպէս իմ մուտքս բարւեց Տաք-Ջուրը:

Մի Հայ խանութապանի օգնութիւնով քաղաքի
յետ ընկած թաղի մէջ ծանր գնով վարձեցի մի Հա-
ւարուն և փոքրիկ պալուսակս ու իրեղէններս ներս
տարի: Եւ շատ ուրախ էի, որ գոնէ ցուրտ անձրե-
ւէն կարողացայ ինքս ինձի սղատելու:

«Տաք-Ջուրի երեք ամիսը կերակրումէ նորա ամբողջ տարին»:

Որպիսի ահագին հարկ պիտի տայ ամեն մի ճանապարհորդ, որ կշտացնէ մի ամբողջ քաղաք, բնակարանի վարձէն բռնած մինչև վերջին իրը քառապատիկ զին ունի այստեղ՝ համեմատելով ուրիշ տեղերի: Պիցուք թէ հարուստ մարդը կարող է զիարդ և իցէ տանել այս ծանրութիւնը. ինչ անէ ողորմելի չքաւորը: Ահա խնդիր, որն վճռելու համար շատ փիլիսոփաների գլուխներ պիտի ցաւին ունայն:

Մեր կողմի մարդոց շատ յայտնի Բ* գտել է այստեղ իւր շուալ ապրուստը բաւականացնող առատ աղբիւր: Նորա անյադ ստամոքսը լցնելու համար որքան նիհար քսակներ ու զրպաններ պիտի քամուին:

Այսօր պղտոր եղանակի պատճառով երաժիշտների խումբը նուազելու չէ. ուրեմն ճեմելիքների մէջ զբօսնող ժողովուրդ չի լինիլ: Կմնամ տանը և շփոթած գլուխս ու պայուսակիս մէջի իրերը կարգի կբերեմ:

Ինչպէս կուզէի իմանալ՝ եկել է «նա», թէ ոչ, և կամ այստեղ է, թէ՛ գնացել է Էստէնթուք, կամ Թթու-Ջուր, կամ Երկաթ-Ջուր...

Յօդ 11.

Այսօր բոլոր օրը անցուցի ճեմելիքների, հասարակական զբօսանքների մէջ և լողարանների մօտերը ման գալով, յոյս ունէի կամ «նորան» տեսնել, կամ

նորա հօրը, կամ նաժշտին և կամ ծառաներէն մէկին, բայց իմ մանրակրկիտ հետախուզութիւնները ի դուր կորան. նա դեռ ևս եկած չէ:

Չատ կառապանների էլ հարցուցի՝ արդեօք այս ու այս նշաններով մարդիկ բերել էք հանքային-ջրեր ասուած իջւանէն. նոցա պատասխաններէն եզրակացուցի, որ իմ պտուածներին նոքա ոչ տեսել են և ոչ հանդիպել են: Ի՞նչու այսքան ուշացան, ինչ է պատճառը, ինչ արգելք է հանդիպել: Իմ կարծիքով նոքա ոչինչ պատճառ չի պիտի ունենային Ռոստով ալդքան երկար մնալու:

Քուռները թէև մայիսի առաջին օրերէն սկսած են, բայց ժողովուրդը շատ սակաւ է: Ասում են թէ այժմ Կաւկասի ջրերն այցելելը աւելի թանգ է նրստում, քան թէ արտասահման երթալը: «Կոյրն էլ գիտէ, որ կիրակին տօն օր է:» Երբ որ լուր տարածուեցաւ, որ մեր մեծամարդիկը Կաւկասի ջրերն տուել են բազդախնդիր Բ. ձեռք՝ ամենքը միաբերան ասացին, որ ջրերու բանը պրծաւ. ժողովրդի նախագուշակութիւնը շուտ և ճիշտ կատարուեցաւ. թէև Բ. դորանից ոչինչ վնաս չ'ունի: Ո՛վ գիտէ, նա իւր տան խորշում նստած և հաղարները համարելով, քթի տակից որքան կուշտ ծիծաղում կը լինի, ասելով. «Թող իմ բանը աջի, ով կուզի հաջի»:

Քաղաքիս իսկական անունը Խաբարդացիների լեզուով Ըսար-Սու է, որ նշանակումէ Տաք-Ջուր. իսկ ռուսաց Փեթիքօրսկ անունը առած է Բէշ-Փաւ սարէն, որ լիբաւի հինգ գագաթ ունի և որ քաղա-

քիս Հիւսիս-արեւելեան կողմումն է 8—10 վերսթ հեռաւորութեամբ: Ինքը քաղաքը Հիմնած է Քաշուի սարի լանջի վրայ, նորա ստորոտը և այն ձորի մէջ, որն կաղմուել է Մաշուի ծոցէն բխող Հանքային ջրերու փորելէն:

Հանքային ջրերու բժշկարար գորութիւն ունենալու մասին, մեր օրերում, երկար օրէն խօսիլն անգամ աւելորդ աշխատանք է. իսկ Վաւկասի Հանքային ջրերու օգտաւէտութիւնը խորին հնութեանը ևս յայտնի էր: Բայց ես տարօրինակ կարծիք լսեցի, որին թէև չեմ հաւատում, բայց այստեղ լիշելը աւելորդ չեմ համարում: Ինձ շատ տեղացի ծերեր ասացին որ՝ առաջուայ ժամանակները Տաք-Ջուրի բժշկարար ոյժը աւելի էր. Հէնց որ սկսան նոքա նորանոր կարգերը մտցնելու՝ ջրերն էլ քանի գնաց աւելի և աւելի կորցրին գորութիւնը: Դարձեալ կրրկնումեմ, այս խօսքերին ես հաւատ չեմ ընծայում, բայց նոցա տակը ամուր գծումեմ: Սորա նման մի ուրիշ կարծիք կրէք Թիֆլիզի ծերերից եղանակի ցրտանալու մասին: Այս ինչ բան է:

Յօդ 13.

Երկու օր անտանելի օգեր էին՝ սոթ, քամի և փոշի. բոլոր այդ ժամանակը ոտքս սենեակէս դուրս չդրի. ինքս ինձի տկար էի զգում: Խոսէնթուքի ջուրը մարդուս շատ արթուն է պահում, այնպէս որ՝ նորա խմողը իւր բնականէն շատ պիտի չհեռանայ:

Այսօր որ դուրս եկայ՝ առաջին գործս եղաւ հարց ու փորձ անել Սօֆիայի մասին. երբ որ իմացայ, որ տակաւին եկած չէ՝ գնացի ու առաջին անգամ մտայ Տաք-Ջուրի երևելի ծծմբային լողարանը. թէև միայն տասն ըոպէ մնացի մէջը, բայց երբ որ դուրս եկայ՝ ասես թէ կեանքիս վերայ տասը տարի աւելցուցած զգացի: Երանի՛ այն մարդոց, որոնք Աստուածային այսպիսի շնորհը տարին տասներկու ամիս քթերի տակ ունին...

Առաւօտները բազմութիւնը ժողովվումէ Եղիսաբեթեան աղբիւրի կամ ինչպէս շէնքի վրայ գրած է՝ Եղիսաբեթեան սրահի մէջ, ուր եօթը ժամէն մինչև ութը նուազումէ երաժշտաց խումբը: Հիւանդներէն շատերը այդ միջոցին են խմում որը մի և որը երկու բաժակ ծծմբային ջուր և մարսելու համար՝ ամբողջ ժամ առաջ ու յետ ման են գալիս սրահի մէջ: Երբ որ երաժիշտները դադարումեն նուազելը, բազմութիւնն էլ ցրվումէ: Այնուհետև սովորաբար սկսումէ ժողովրդի կամ աւելի ճիշտ ասեմ՝ Հիւանդների մեծ մասը լողարաններումը լուացուելու:

Երբ որ աղբիւրին մօտեցայ, որ Հանքային ջրէն խմեմ, մի կտի դէմքով, բայց բաւականին գեղեցիկ երեսով ու բարեկազմ մարմնով երիտասարդ սպայ ինձ յետ մղեց և իւր բաժակը ինձանից առաջ տուեց աղբիւրէն ջուր հանող աղջկան, որ լցնէ ջրով: Ես վրդոված նայեցայ սպայի երեսին. նա էլ նայեցաւ պալքար հրաւիրող կերպարանքով, ասես թէ մեղաւորը ոչ նա, այլ ես էի: Ես լուեցայ, սպան քաջա-

վերուեցաւ և առաւել համոզուեցաւ, որ «համարձակութիւնը քաղաքներ առնող է»: Այս սպան ինձ բռնորովին անծանօթ չէր: Ես շատ անգամ տեսել էի սորան երկու մայրաքաղաքի մէջ: Օթէլների մէջ մեծածախ ճաշի կամ խորտկի մասնակցող, զիններուքի մէջ շիշ ու գաւաթ փշրող, ծառայ ծեծող, հայելի կոտրող, թաթրոնում չհաւանած դերասաններին և դերասանուհիներին թրջած խնձոր զցող, լիխաջով չափ-տուող մայրաքաղաքի հռչակաւոր քօքօթների ետևից և այլն և այլն, միով բանիւ՝ այնպիսի «շքեղ ստահակութիւններ» անող, որոնց համար մինչև այժմ, այսինքն մինչև տասնութներորդ դարս չի կարմրում այնպիսի սպան: Ասում են թէ՛ այս սպան մի առանձին յատկութիւն ևս ունի, որն հետո բերել է Փարիզէն իւր վերջին ճանապարհորդութենէն, այսինքն՝ լաւ վարձով ալֆօնսութիւն անել: Այս նորամուտ բառ է եւրոպական լեզուների մէջ. եթէ սորա ճիշտ մեկնութիւնը կուզէք իմանալ՝ հարցուցէք հարուստ այրիներին... Այս երիտասարդ սպայի անունն Վլադիմիր Դրօզդով էր:

Սիրտս վրդոված գնացի նստայ բազմոցի վրայ. իսկ Դրօզդովը մի ուրիշ սպայի հետ կռու-կռի տուած՝ քանի-քանի անգամ առաջևիցս անցաւ և ես երկու-երեք անգամ լսեցի նորա բերանից ինձ վերաբերեալ հայհոյանք: Պատուասիրութիւնը բարձրաձայն խօսեցաւ մէջս. բայց վերջը հովացայ և կուլ տուի Դրօզդովի այս նախատինքը: Ութը ժամին, երբ որ երաժիշտները դադարեցան նուագելու և ժողո-

վորդը խումբ խումբ սկսաւ վերէն վայր իջնելու, ես էլ միայնակ տխուր սկսայ իջնել, և ուղղեցի քայլերս դէպի բնակարան: Երմօլովի լողարանին որ հասայ՝ յանկարծ առջևէս երեք ֆաէթօն սրնթաց անցան, վերջի երկու ֆաէթօնները ծանր բեռնաւորած էին, մէջերը նստողներ չկային, իսկ առաջինի մէջ նստած էին չորս հոգի. երեքի երեսը չտեսայ, բայց նոցանից միինն ես նմանեցուցի Կատեային՝ Սօֆիայի հայ նա-ժըշտին: Սիրտս սաստիկ թոււնդ տուաւ. մոռացայ Դրօզդովին էլ, իմ այն առաւօտ կրած անարգանքն էլ, — բոլորը բոլորը մոռացայ. Սօֆիայի ներկայու-թիւնը ասես թէ բոլոր քաղաքի մէջ երջանկութեան հոտ և լոյս տարածեց. ծառերն էլ աւելի դեղածի-ծաղ էին երևում, մարդոյ երեսն էլ աւելի բարի և աղնիւ:

Գաղտնիք չէ, որ ես սիրահարուած եմ Սօֆիայի վրայ և զլիաւորը՝ սիրահարուած եմ առանց յոյսի: Սօֆիան որ կայ՝ միլլիօնատէրի միակ ժառանգ է. իսկ ես մի խեղճ երիտասարդ, համալսարանէն հէնց այս ամառ արձակած բժշկի վկայագրով: Երկինք և երկիր իրար աւելի մօտ են, քան թէ ես ու Սօֆիան:

3-նիսի 18.

Հինգ օր անդադրում զիշեր ցերեկ անձրևներ են գալիս. ո՛չ մի վայրկեան չի պարզեցաւ երկինքը, ու գետինը չը ցամաքեցաւ, որ ես կարող լինէի ոտքս շէմքէս դուրս դնելու ու Սօֆիայի մասին ինչ ու ինչ

1002
5616

իմանալու՝ իրան նա էր եկողը, թէ՛ ես խաբուեցայ՝ մի օտար աղջիկ կատեալի տեղ ընդունելով և այդ շատ հաւանական էր:

Ձանձրութիւնը և հոգեկան վիշտը խեղդումէ ինձ, սիրտս ուզումէ տռաքել: Ֆիրք չ'ունիմ, որ կարդամ. ծանօթներ չ'ունիմ, որ հետերը նստեմ, խօսակցիմ, սիրտս բացուի. եղանակը պարզ չէ, որ իջնեմ մարդ տեսնեմ: Բանդարկեալի նման չորս պատի մէջ փակուած, յօրանջելով և հեկեկելով մնացել եմ:

Որովհետեւ առաջևս պարապ ժամանակ կայ (մինչև Սօֆիայի գալը) և ես մէկ ուրիշ օգտաւէտ գործ չունիմ կատարելու, լիշեմ իմ անցեալը, որն այս ներկայիս հետ անխղիւ կապ ունի:

Համալսարան մտած տարիս հայրս մեռաւ. հօրեղբայրներս, որոնք հօրս կենդանութեան ժամանակը նորա խանութի մէջ հասարակ սպասաւորներ էին, չգիտեմ ինչ խարդախութիւն բանեցուցին, որ մեռելը դեռ ևս սեղանի վրայ կեցած՝ չայտնեցին, որ հօրս մեծ հարստութենէն բացի չիսուն հազար Մոսկովցիների պարտքէն ուրիշ բան մնացած չէ: Մայրս, քոյրս և ես մնացինք որը և աղքատ: (Հօրս մահէն յետ սոքա էլ շատ չապրեցան, մի տարիից մեռաւ քոյրս և տարի ու կէսից մեռաւ մայրս): Քանի մի ժամանակէն աղքատ հօրեղբայրներս դարձան մեր քաղաքի առաջնակարգ հարուստները. իսկ մայրս ու քոյրս իրանք իրանց աղքատին ապրուստը ստիպուած են եղել կար-կարկատով ճարելու: Այսպէս՝ ես Մոսկովումը հեռի մայրենի քաղաքէս, հեռի սիրելի բարեկամ-

ներէս մնացի անտէր, լքած ու օրական հացի կարօտ:

Այն ժամանակները Մոսկով մի բարի քահանայ կար՝ անունը Մովսէս: Այս տէր-Մովսէսը՝ իմանալով իմ նեղ վիճակը, առանց ինձ բան ասելու, գնացել է մի նորեկ հարուստ հաշտարխանցի հայ վաճառականի մօտ և պատմել է իմ որպիսութիւնը: Իսկ և իսկ այդ վաճառականին էլ իւր միակ աղջկայ կրթութեան համար այդ միջոցին պէտք է եղել մի վարժապետ: Եւ այդ կերպով տէր-Մովսէսը և Ասատուր-աղան իրանց մէջ պայման են դրել՝ ամսական տասներկու մանէթ ռոճկով ինձ կարգել վարժապետ: Երբ տէր-Մովսէսը ինձ չայտնեց այդ բանը՝ այս նեղ դրութեանս մէջ այս պայմանն էլ երևեցաւ ինձ Աստուծոյ ամենամեծ ողորմութիւնը, թէ՛ և այդ ամենամեծ ողորմութիւնը ամեն օր խլումէր իմ թանգազին ժամանակից ամբողջ երկու ժամ, որն ուսանողի համար անսխալի ներքի կորուստ է: Ո՛չ միայն այդքան, այլ և Ասատուր-աղան աջ ու ձախ քարոզումէր, թէ նա մի հայ ուսանողի մեծ բարերարութիւն է անում, այսինքն՝ տալիս է նորան ապրուստ, ոտից գլուխ հագցնումէ և լցնումէ նորա բոլոր պիտուքը, և խոհեմութեամբ լուումէր իմ ծանր աշխատանքի մասին:

Սօֆիան (Ասատուր-աղայի տասներեք տարեկան աղջիկը) բաւականին երես առած աղջիկ էր. և մինչև որ նորան դասի կարողանում էի նստեցնել՝ իմս էլ ինձ էր հասնում: Առանց մէկ պատճառի կամ գլուխն էր ցաւում, կամ արամաղրութիւն չէր ունենում պարապելու, կամ դասերը պատրաստ չէր լի-

նում, կամ գիրքը կորցրած էր լինում. եթէ խրատում կամ աղաչում էի՝ սկսում էր լալու ու հաղար ու մէկ նազեր էր ծախում: Սառ քրտինք էր գալիս վրաս մինչև կարողանում էի ամեն բան կարգի բերել ու սեղանի առաջն հանգիստ նստեցնել: Աշխարհագրութեան, կամ քերականութեան, կամ թուաբանութեան դասերի ժամանակ ամեն անգամ ստիպուած էի անտեղի հարցմունքի պատասխաններ տալու: «Աղջկան ինչ հարկաւոր է, թէ Լոնդոնը թէմս գետի կամ Վոլգայի վրայ է, աղջկան ինչ հարկաւոր է, որ թագաւոր բառի սեռականը թագաւորի է և ոչ թագաւորայ, աղջկան ինչ հարկաւոր է, որ մէկ փուղի մէջ կայ երեք հաղար-ուժը հարիւր-քառասուն զօլթնիք. մայրս խօսյո՞ւք ամենը ոչ սովորել է և ոչ գիտէ. բայց նա շատ լաւ մայր է»: Եթէ ես նորան մեկնում էի թէ՛ նորա մօր աղջկութեան ժամանակ այդ ներելի էր, այժմ ուրիշ ժամանակ է, և աղջկանից աւելի է պահանջվում. նա իսկոյն ասում էր՝ «ուրեմն իմ մայրը քիմար է, ուրեմն իմ մօր ծնողքը անպիտան մարդիկ էին, որ չէին կրթել նորան»: Զատ անգամ խաթուն Օսաննան (Սօֆիայի մայրը) ևս ինձանից սիրտը ցաւած էր լինում, և ես ստիպուած էի լինում գլուխս ցածացնել արդարանալով այնպիսի գործերում, ուր ամենևին յանցանք չունէի:

Զարմանալի բան. քանի աւելի տանջում էր ինձ Սօֆիան, այնքան աւելի սաստկանում էր համակրութիւնս դէպի նորան. համակրութիւնս ժամանա-

կաւ ուրիշ դարձաւ, իսկ սէրն փոխադրուեցաւ կրքի: Այն, այս երես-առած աղջկանը ես կրաւոր կերպով սիրեցի: Որէ օր նա զարգանում էր մարմնով. առողջութիւնը խոշոր կայլակներով կաթում էր նորա թշերից, լայն լանջերից ու բաւականին բարձր իրանքից. և երբ որ լրացաւ նորա տասնևեօթը տարին և հինգերորդ դասարան մտալ՝ Սօֆիան արդէն հարսնացու էր: Սէրի կամ սովորութեան նման մի բան նորա կողմից ևս նկատում էի արդէն դէպի ինձ. բայց ծնողաց յօժարութեան մասին բոլորովին յուսահատուած էի: Եւ ունէի պատճառ:

Մի օր Ասատուր-աղայի մօտ հաշտարխանից հիւրեր էին եկել, երեկոյեան թէյն էին խմում: Ես եկայ Սօֆիային դաս տալու: Այդ միջոցին Սօֆիան տանը վեց տարեկան կլինէր, ես էլ չորրորդ դասարանի ուսանող էի: Հիւրերէն մէկը հարցո՞ւց, (երևի ականջը փոքր ինչ խուլ էր, վասն զի նկատած է, որ խուլը կարծելով ուրիշներին խուլ՝ միշտ պինդ պինդ է խօսում):

— Էս ինչ մարդ ա՞հայ ա: Կը իմաստ րոյց զի Է.

— Հայ, հայ ա: Կը իմաստ րոյց զօ՞ւր աղա՞յն, մեծ յո՞ւստ:

— Ի՞նչ գործի ա: Եւ որտեղ զի գործի մի զո.

— Աղջկանս վարժապետն ա, սովորացնում ա: Կը իմ.

— Զատ ջահել ա, չես վախենո՞ւմ: Կը զմեզ իմաստ.

— Քու տունը Աստուած չի քանդի, ինչից պէտքա վախենամ, Սօֆինկէս էն հօր մօր դաւակա,

որ էգպէս ողորմելիների վերայ թքել չի ուզիլ. չէ

թէ մէկ ուրիշ բան: Կը մի օր իմաստ րոյց զօ՞ւր աղա՞յն,

— Նայիր, սախտ կացիր, Բուդղան Նիկիտիչ, կրակը ու բարութիւն մին մինի մօտ չեն տինում, մէկ էլ տեսնես բիրդան կտուաքի հա: —

— 2է, Սիմօն Մալխասիչ, էդ գումանից գու միամիտ կացիր: —

— Սօֆիական իմ մէկ հատիկ զաւակն ա, աչքիս լուսն ա, իմ միջին ժառանգն ա, ես գիտեմ, որ նորան էս աղքատիւ տամ. ինչ եմ հոգում, որ նա բժիշկ ա, գլուխն էլ քարը. հիմա էդպէս քանակալներով քաղաքները մօտիկ են անում, պակովնիկներ, եսեռալներ, գուրէրնաթուներ քիչ են ինչ Ռուսաստանումը: —

— Հալբաթ, ասաց Սիմօն Մալխասիչը, Սօֆին կալի բանը ջուկ ա. սաղ աշխարք որ պտրես, Սօֆին կալի նման բառիշնա ետ մէկը քիտես, ետ էրկուսը: Այդ միջոցին Սօֆիան գիրքը առած ներս մտաւ, ես գուռը փակեցի և էլ չը լսեցի այս խօսակցութիւնը: —

Ասացի որ՝ ես Սօֆիայի վերայ սիրահարուած էի, բայց սաստիկ կը սխալին մարդիկ, եթէ կը կարծեն, որ նորա հօր հարստութիւնը իմ սիրոյ մէջ մի որ և է դեր էր խաղում. ամենեւին ոչ: Ատուծոյ առաջն կարողեմ ասել, որ ոչ մի բոպէ նորա հարստութիւնը ինձ չէր շլացրել, և ես ոչինչ ցանկութիւն չունէի երբ և իցէ տէր լինելու այն միլիօնին, որ նա մի օր իւր հօրից պէտք էր ժառանգէր: Իմ պատմածից երևում է, որ Սօֆիան մի առանձին հոգեկան արժանաւորութիւն ևս չունէր, որով կարող

լինէր ինձ հրապուրելու: Ո՛չ. ես (թէ և ամօթ է խոստովանելը) շատ սոսկական կերպով սիրել էի նորա գեղեցկակալմ, շնորհալի արտաքինը: Քանի որ նորան տեսնում էի՝ աչքս մութ էր կոխում, արիւնս եռ էր գալիս, սիրտս պինդ պինդ բաբախում էր ու ջիւերս քաշքշվում էին: Եւ ինչ զարմանք. ինքս էլ այն ժամանակ քսան և երկու տարեկան էի: Հոգի իմ մէջ էլ չէի նշմարում, ինչպէս կուգէք, որ ուրիշի մէջ որոնէի: Ես բոլորովին համոզուած եմ, որ «առաջին սէր» անուած զգացմունքը, իսկ և իսկ այն է՝ ինչ որ ես զգում էի այդ պատանեկական հասակիս մէջ: Այս, ինչ որ ես ասում եմ, գուցէ ուրիշները չ'ապեն. բայց այդ ոչինչ չէ՝ նշանակում, այդ միայն ապացուցանում է, որ նոքա ինձ պէս սրտաբաց չեն: —

Բոպէի մէջ սիրել չէ՝ կարելի, բայց սիրահարուել կարելի է: Բոպէի մէջ երևում է մարդու արտաքինը և ոչ թէ հոգին: Հոգի ճանաչելու համար շատ տարիներ են պէտք: Մենք սիրահարվում ենք արտաքինի և ոչ թէ հոգու վերայ: Հաւանիլ, սիրահարուել, սիրել — պատանեկի և աղջկայ համար միանշան գաղափարներ են. միայն չափահաս տարիքը կարողանում է որոշել և ամենին իւր տեղը ու աստիճանը տալ մարդկային յարաբերութեանց մէջ: Ստում է տղան, եթէ ասում է թէ՝ այս ինչ աղջկայ հոգին սիրեցի, նոյնպէս և աղջիկը տղի համար. մի հաւատաք. նոքա հաւանել են միմեանց աչքը, ճակատը, մարմնուզոյնը և այլն: Պատանիի և դեռահաս աղջկայ բե-

րանումը հոգին մի անորոշ գաղափար է: Կարճ՝ ես սիրահարուած էի Սօֆիայի վերայ, բայց նոյնը չեմ կարող ասել Սօֆիայի կողմից: Ի հարկէ, չորս տարուայ ընթացքում, գրեթէ ամեն օր չորս-հինգ ժամ միասին անցնելով, նա եթէ չգրար էլ դէպի ինձ սէր, գէթ ընտելացել էր իմ ներկայութեանը: Ինձ տեսնելով՝ ուրախ էր լինում, եթէ երեք-չորս օր հիւանդութեանս պատճառաւ չերևայի նորա անքին, հարցնումէր՝ ինչու եկած չէի... և այսքան: Երբէք նկատած չէի, որ նորան վշտացնէր իմ բացակայութիւնը և կամ թէ մեծ ուրախութիւն պատճառէր իմ ներկայութիւնը: Եւ այսպէս...

Մի երեկոյ, ըստ սովորութեանս, զնացի նորան դաս տալու: Բայց տանը չի գտայ: Հօր ու մօր հետ միասին չգիտեմ ուր էր գնացել: Որովհետեւ յոգնած էի՝ չուզեցի իսկոյն բնակարանս վերադառնալու, ու մնացի նորա սենեակի մէջ: Պատի վերայ կախած էր նորա լուսանկար պատկերը, աչքս դարձուցի վերան ու երկար ժամանակ նայում էի: Երբեք վերաս մի անմեկնելի տրտմութիւն եկաւ, աչքերէս ակամայ սկսաւ արտասուք գալու: Հանեցի զրպանէս թաշկի-նակս, սրբեցի աչքերս ու նորից անդադարաւ նայում էի պատկերի վրայ: Դարձեալ բոլորաց արտասուքի աղբիւրը: Այդ միջոցին մի մարդ գուռը բացեց, ներս մտաւ, բայց ես ուշք չգրի այդ բանի վերայ: Դարձեալ և դարձեալ, աչքս պատկերին յառած լալիս էի: «Պարոն՝ ինչու ես լալիս, պարոն՝ մեղք ես դու, պարոն՝ կաթէ՞ եղ աղջիկը, որ դու

նրա վերայ մաշվումես», ասաց ինձ մի քնքոյշ և և ոշոքական ձայն: Յետ դարձայ և տեսայ՝ որ առաջև կանգնած էր Կատեան՝ Սօֆիայի նաժիշտը: Կատեան տարիքով հասակակից էր Սօֆիային, չար լեզուները, (դուք նկատե՞լ էք, որ չար լեզուները մեծաւ մասամբ ճշմարտախօս են լինում) չար լեզուները ասում էին, որ Կատեան Նատուր-աղայի մօտաւոր ազգականներից մինի որբն է, Մոսկով գալիս առել, բերել են հետերը: Ուրեմն չորս տարիւց աւելի էր, որ ամեն օր տեսնումէի նորան, բայց, զարմանք բան, ինչ մի անգամ արժանի համարած չէի նորան իմ ուշադրութեանը, տեղեկացած չէի թէ՛ ինչպէս է կենում, ինչպէս է զարգանում, ինչ պիտի լինի սորա ապագան, մինչև անգամ մտադրութեամբ նայած չէի երեսին և չգիտէի՝ սիրուն է թէ տգեղ և եթէ փողոցի մէջ հանդիպէի նորան, շատ կարելի է որ չճանաչէի ևս:

Երբ որ Կատեայի ձայնը ականջիս հասաւ՝ առաջին անգամ նայեցայ երեսին և ինչ տեսնեմ. առաջև կանգնած էր, թէև աղքատին հագուստով, բայց շատ գեղեցիկ աղջիկ: Հասակը երկու-երեք մատ բարձր Սօֆիայից, երեսի գոյնը առաւել վարդագոյն և առողջ, լանջերը աւելի ձոխ զարգացած, մազը աւելի թաւ, վարսը աւելի հաստ ու երկայն, բագուկները մոտ, առողջ և ուժեղ, մէկ խօսքով՝ Կատեան այն հազուագիւտ կանանցմէն էր, որոնք յաջողակ դիպուածներին հսկաների մայրեր են լինում: Բայց ես նորա վերայ ուշադրութիւն չ'դարձրի. ազ-

նիւ ուսանողին շատ անվայել էր շքեղ բամբիշին փոխել մի մրոտ աղախինի վերայ:

Անհամբերութեամբ սպասում էի մայիս ամսին, երբ հարցաքննութիւններս աւարտած, բժշկի վկայականը ծոցս, օրինաւոր քաղաքացի դարձած՝ պիտի ներկայանայի Ասատուր-աղային և նորա պատուական Ստաննա խանութին ու յայտնէի, որ ես ի վաղուց հետէ հաւանել եմ աղջկանը և ահա այժմ ուսաց պետութեան աստիճանաւոր եմ, ապրուստս լիովին ապահոված է, առաջուայ պէս ողորմելի երկտասարդ չեմ. ուրեմն ինդրումեմ նոցա աղջկայ, գեղեցիկ Սօֆիայի ձեռքը: Այս մասին քանի, քանի անգամ խօսել էի Սօֆիայի հետ, և որքան միտս էր դալիս, թէ և նորա կողմէն մէկ հրճուալի ցնծութեան նշաններ տեսած չէի, բայց «չէ չեմ ուզում քու կինը լինել» ևս լսած չէի նորա բերանէն, այնպէս որ, կարծում էի թէ՛ մեր ամուսնութիւնը ոչինչ արդելք չունի, գոնէ իմ և Սօֆիայի կողմանէ:

Վերջապէս մայիսը հասաւ, և ես վերջին հարցաքննութիւններս փառաւոր կերպով տուի պրծայ. վկայականս ծոցս դրի և ուրախ-ուրախ վազեցի Սօֆիայի ծնողաց մօտ:

— Հը՞, ի՞նչ ա, բարեւեց ինձ Ասատուր-աղան:

— Պրծայ, պրծայ, ասացի նորան ուրախ-ուրախ:

— Զատ լաւ ա, շատ լաւ ա, ասաց նա. — Հիմի ուրեմն մեր հինգ տարուայ արած լաւութիւնը փուչ տեղը չգնաց, մենք էլ, փառք Աստու, պրծանք մեր պարտքից: Հիմի ի՞նչպէս գիտես՝ էնպէս կառավար-

րուիր. այսուհետեւ ումուտդ մեր վերայ մի. դնիր. ինքդ քու գլխու ճարը արա՛ւ:

Ես ամենեւին այսպիսի պատասխան չէի սպասում. այս խօսքերը լսելով, ասեա թէ՛ գլխուս սառ ջուր թափեցին: Բայց ես ինքս ինձի ժողովեցի ու յետոյ ասացի.

— Մեծապէս շնորհակալ եմ ձեզ՝ իմ վերայ ունեցած ամեն երախտիքի համար, բայց ես ձեզ մի ուրիշ խնդիրք ունիմ յայտնելու:

Խնդիրքի անուն որ լսեց, Ասատուր-աղայի երեսի գոյնը թռաւ:

— Հինգ տարի էսքան լաւութիւն անելից յետոյ՝ էլի բան ա մընքմ, ասաց նա դժկամակութեամբ:

Այժմուայ խնդիրս փողի բան չէ, ասացի:

— Ապա ասա, տեսնենք ի՞նչ խնդիր ա:

— Ասատուր-աղա, ասացի կմկմելով, ձեզ յայտնի է, որ ես այժմ անկախ մարդ եմ, այսուհետեւ ինձ ոչ առուտուր է պէտք, ոչ դէս ու դէն ման դալ՝ աշխատանք ու ապրուստ ճարելու համար, ոչ պէտք է հոգամ թէ՛ վաղը ի՞նչ ուտեմ, կամ միւս օր ինչ հագնեմ, փառք Աստուծոյ, այժմ իմ առաջը ամեն դոճեր բաց են, իմ կեանքը և ապրուստը բոլորովին ապահոված է...

— Լաւա՛ւ, ասաց Ասատուր-աղան, ձայնը ձգելով ու ճակատի տակից երեսիս նայելով, էտի որ ասումես՝ յետոյ ի՞նչ ես ուզում հասկացնի...

— Այն եմ ուզում հասկացնել, որ ես այժմ ազատ մարդ եմ...

— Թէ որ աղատ ես, շատ բարի, քու ձեռք յովա փրու՛նմ... գնա՛ ուր որ ուզումես, էլ ո՛ր ես մարդու բեղարացնրմ. ասաց ու բարկութեամբ երեսը շուռ տուեց և ուզումէր հեռանալ...

Տեսայ որ՝ ինչ ուզում էի հասկացնել՝ խօսքերիցս այն դուրս չեկաւ և շփոթուեցայ. բայց ոչ մի վրաս ժողովելով, նորից սկսեցի։

— Ասատուր-աղա...

— Էլ ինչ հալա չը պրծա՛ր...

— Ես մէկ բան ունիմ ձեզ յայտնելու...

— Ասա, տեսնեմ, ինչ ես ուզըմ յայտնել, ապաց ու երեսը և մարմինը կէս դարձուց գէպի ինձ։

— Ասատուր-աղա, մի բարկանաք վրաս, ես ձեզ մի գաղտնիք պէտք է յայտնեմ...

— Փրէէէ, սպանեցիր վեր տիրար, օրթնած մարդ, էս քանի վախտա, անկա՛ճ եմ տինրմ՝ դատարկ խօսքերից դայրագ բան չեմ լրսըմ. ասան պրծիր ես ժամանակ չունեմ քու առհաջութիւնները միտիկ անելու...

— Ես... ես... ես սիրումեմ մաղմուագել Սօֆիային... յօժար էք, որ նա իմ կինս լինի...

Ասատուր-աղայի երեսը սպռնեցաւ, մեռելի գոյն եղաւ. աչքերը արիւն կոխեց, ճակատը քրտինք տուաւ։

— Դո՛ւ... Սօֆիային... դո՛ւն... իմ, իմ Սօֆիային... իմ Սօֆիան քու կինը իլի... իմ Սօֆինկէն, միլլիօնեռ աղա Ասատուր Բէյթումալովի աղջիկը մէկ էշի զըխկու Սալմաստեցի — Խոյեցիի կնիկ իլիիլ...

անտա՛ խելքդ տանել ես տուել, թէ ինձ գիժես կարծրմ... Քեզ յով իրաւունք տուաւ էդպէս անամօթ, լիրբ բաներ մտքից անցկացնելու։ Միտիկ արա՛, պարոն հէքիմ, դու հալա ջահիլ ես. էս անգամին կիլի քեզ ներել, ամա թէ որ միւս անգամ էսպէս անմարդավարի, պիապուռ խօսք լսելեմ բերանիցդ՝ էն վախտ, խնդրեմ, ինձանից բեղամախ չիլես. նօքարներիս կը հրամայեմ վզակօթիդ տալով՝ տանիցս դուրս անեն։ Հիմի էլ, խնդրեմ, վախտ բէ վախտ տունս մի գալ, այսուհետեւ վարժապետութիւնդ պրծաւ, էլ դու ո՛չ Սօֆիայի վարժապետն ես, ո՛չ Սօֆիան քու աշակերտը։ Հիմի զնա՛ քու բանին, կուզես՝ ղուլուղ մը տիր, կուզես՝ էնպէս հէքիմութիւն արա՛, կուզես՝ քու վաթանը — Սալմաստ ա, Ղարաբաղ ա, ինչ մարաքա եա — գնա՛ ու քու գործիդ իլիր. էս էլ լաւ իմանաս, որ Սօֆիական քու բերանի թիքան չի. նրա վրայ խօսողը՝ առաջ մէկ լաւ բերանը պէտքա լուանայ, իստակի, ապա թէ իրաւունք ունենայ խօսելու։

Այսպիսի անպատիւ վարմունքից ու խօսքերից յետ ինձ ինչ էր մնում անելու։ Գնացի փակուեցայ իմ փոքրիկ սենեակի մէջ և ժամերով ազդողորմ լաց եղայ։ Սօֆիայի յիշատակը ինձ անողորմ հալածումէր. աչքս թէ փակ լինէր և թէ բաց՝ նորա երեսը կենդանի կեցած էր իմ առաջ, և ասես թէ մեղադրելով ինձ ասումէր «այսպէս ուրեմն տկար է քու սէրը գէպի ինձ. միթէ մի ծեր մարդու երկու-երեք կշտամբանքը կարողացան սառեցնելու քու սէրը, որն

ես անբողջ հինգ տարի արծածել ու բորբոքել էի»։
Իսկոյն տեղից վեր թռայ, մի նամակ գրեցի
նորան, այն օրուայ նորա հօր հետ ունեցած խօ-
սակցութիւնս բառ առ բառ գրեցի և հարցուցի նորա
խորհուրդը թէ՛ ինչ պէտք է անեմ այսուհետեւ։ Նա-
մակը որ պրծայ՝ կնքեցի և գնացի Ասատուր-աղայի
տուն, ետեւի սանդղիքով մտայ խոհանոց ու կամա-
ցուկ սպրդեցուցի Կատեանի ձեռք, խնդրելով որ իս-
կոյն Սօֆիային հասցնէ։ Կատեան ոչինչ չասաց.
մեղքանալով նայեցաւ աչքերին մէջ և դուրս գնաց
խոհանոցից։ Ես էլ գնացի բնակարանս։

Երեկոցեան թէյի ժամանակ կամացուկ ներս
մտաւ Կատեան, ու տուեց ինձ մի փոքրիկ թուղթ,
ուր մատիտով գրած էր ռուսերէն՝ «Այս օրերս մենք
գնալու ենք Տաք-Ջուր. եթէ կարող ես՝ արի այն-
տեղ, կարելի է դիպուած գտնես մէկ հնարով հօրս
հետ հաշտուելու։ Իմ վերայ յոյսեր մի դնիլ։ Ես քեզ
ոչինչով օգնել չեմ կարող. նմանապէս չեմ կարող
ծնողացս կամքէն դուրս գալու. այդպիսի գոհ ինձա-
նից մի պահանջիլ»։ Նամակի տակը ստորագրու-
թիւն չկար։

Կատեան սպասումէր։
Լաւ է, շնորհակալ եմ, ասացի, սպասախտնե-
լու բան չունիմ։ Ներէ, որ քեզ անհաճագոտութիւն
պատճառեցի։

Կատեան տեղիքը չշարժեցաւ։ Ես տեղէս ելայ,
նորից շնորհակալութիւն ասացի նորան, բայց նա
զարձեալ անշարժ կեցած էր, ու աչքը արտա-

սուք ուղիղ աչքիս մէջ էր նայում։ Ես զարմացայ։

— Կատեա՛ւ ի՞նչ եղաւ քեզ, ի՞նչու ես լալիս։

— Աղա՛ւ ես քեզ խնայումեմ, դու մեղք ես,
ի դուր տանջւումես. Սօֆիան քու ոտքի հողին չար-
ժէ. նա փուչ աղջիկ ա, նահախ ես պատիւդ ոտնա-
տակ անրմ։

— Ի՞նչ ես ուզում ասել, Կատեա-ջան, ասացի.
ինչու ես վատաբանում քու խանութին, էստեղ նա
ի՞նչ մեղք ունի. եթէ կայ մեղաւոր՝ էդ նրա հէրն
է, Սօֆիան բոլորովին անմեղ է։

— 2^է. աղա, դու սխալվումես. թէպէտ աղա
Ասատուրը մեղաւոր ա, ամա Սօֆիան տասնապատիկ
աւելի ա մեղաւոր. թէ Սօֆիան ուղէր՝ քեզ էս օրին
չէր հասցնիլ. ամեն բանի մեղաւորն Սօֆիան ա, նա
քեզ զժվացնում ա, նա քեզ չի սիրում. նա զայրագ
իրան ոչ ոքի չի սիրում։

Նորից ու նորից զարմացայ, որ այս մունջ Կա-
տեանի բերանից այսպիսի համարձակ խօսքեր էին
դուրս գալիս։ Հինգ տարուայ մէջ ես մէկ բառ լսած
չէի սորանից։ Ասէի՛ր՝ տա՛ր, կը տանէր, ասէի՛ր բեր՝
կը բերէր, ամեն հրաման առանց մէկ խօսք ասելու,
անտրտունջ ու լուռ կանէր։ Ոչ մի գանդատ, ոչ մի
անտեղի, լիբը ծիծաղ լսած և տեսածի չէի նորա-
նից։ Այս օր մի հրաշք էր պատահել նորան. մեր
հինգ տարուայ մունջը պերճախօս հռետոր էր
զարձել։

Ես գլուխս կախեցի և արտասուքը ակամայ վա-
զեցին աչքերէս։ Կատեան կամաց, բայց այնպէս կա-

մաց, որ ես ամենևին չի նկատեցի, մօտեցաւ ինձ, ետևից. դու իսկ իր ճիւղին սեղմեց. պաղեց և ասաց նոյնպէս լալով (նորա արտասուքը մաղերիս վրայէն գլորելով՝ երեսիս վրայ ընկան)՝ Ա՛խ աղա-ջան, էս ի՛նչ դժոխք աշխարհ ա, դու Սօֆիայի համար ես էր-վում, ուրիշը քու կրակովն ա խորովվում. Սօֆիան էլ, ո՛վ գիտէ, ում ոտքին մի օր դուրբան պէտքա գնաց: Աղա-ջան, աղա-ջան, հրամայէ՛, ես քու ոտ-քերի տակ կը սատակեմ... Ա՛խ, ի՛նչու ես իրաւունք չունիմ քեզ սիրելու. դու է՛ն ժամանակը կը տես-նէիր՝ թէ ինչպէս պէտք էր սիրել քեզ պէս հոգիով տղամարդին:

— Կատեան, դիտե՛ս ինչ, գնա՛ շուտով տուն, չլինի թէ՛ Ասատուր-աղան դայ ու քեզ տանը չի գտնէ: Նա վատ մտքեր կունենայ քու մասին:

— Աղա-ջան՝ ի՛նչ եմ հոգում, որ նա իմ վերայ վատ մտքեր կունենայ. այսուհետեւ թէ՛ կուղ սե հոգն էլ մտնեմ՝ հաջաթս չէ, ասաց աղջիկը լալով ու դուրս թռաւ:

Երբ որ Կատեան գնաց՝ խղճի խալթի նման մէկ բան սկսաւ ներսս կրծելու: Սօֆիան, թէ՛ Կատեան, Կատեան թէ՛ Սօֆիան, հարցնում էի ինքս ինձի ու պատասխանը չէի գտնում:

Մի շաբաթից ճանապարհ ընկայ դէպի Տաք-Ջուր. բայց Ասատուր-աղան արդէն երկու օր լուռ գնացել էր այնտեղ:

Յուլի 20.

Երկու օր դարձեալ անպտուղ կորցրի հիւրանոց-ներու, վարձու տալու տներու և բնակարաններու մէջ հարց ու լիորձ անելով՝ արգեօք Մոսկովից այս ու այս նշաններով ընտանիք եկել են, թէ՛ ոչ: Ոչ ոք ինձ մէկ բաւարար պատասխան տալ չկարողա-ցաւ: «Երեւի, միտք արի, ես իրաւ ոխալուեցեմ, մի օտար աղջիկ նմանեցնելով Կատեային:»

Այսօր երեկոյեան դէմ, ժամը 6-ին, ես գնացի այստեղի ճեմելիքը, ուր սովորաբար երաժիշտները նուագումեն և ժողովուրդը խուռն բազմութիւնով զբօսնումէ:

Ճեմելիքի մէջ տեղ-տեղ դրած են դեղձանիկի վանդակի նման փոքրիկ խանութներ, ուր անդրկով-կասեցի հայր ծախումէ՝ թարմ պտուղներ, գերմա-նուհին՝ տաք-տաք գրգակներ, ուրիշ մարդ՝ լրագիր-ներ և զրքեր. տեղ-տեղ սեղաններ էլ կան, ուր ծախ-վումեն արծաթագլուխ ցուպեր, կնիքներ, բուսոտ ու լաւատ շինած կանանց զարդեր, «նորաշէն հնու-թիւներ և նորատիպ հին դրամներ». այս սեղան-ներից մինի առաջ կանգնած են երկու-երեք պար-սիկներ և ծախումեն ականք և մարգարիտներ:

Ես առհասարակ սաստիկ հակակրօնութիւն ունիմ դէպի ականավաճառները. և նկատել եմ — և իմ նը-կատմունքը շատ ոսկաւ սխալ է եղել — որ ական-վաճառները ըստ մեծի մասին լինումեն խարդախ, խորամանկ, ստախոս, մարդահաճոյ, շողոքորթող և

խաբեբայ մարդիկ: Պատճառը շատ պարզ ու հասկանալի է. նախ՝ որ ակնեղէնը «մութ ապրանք» է, նա որոշեալ գին չունի, նորա գինը կտրվում է ծախողի ճարպիկութիւնով և առնողի թեթևամտութիւնով, և երկրորդ՝ ակը առօրեայ պէտքական բան չէ, այլ գեղիւթեան առարկայ է. նորա գնորդը հարկաւ ունենոր մարդ պիտի լինի, իսկ ունենոր մարդու ձեռքից շատ փող դուրս հանելու համար՝ վաճառականը պիտի ունենայ այն յատկութիւնները, որ քանի մի տող վերը յիշեցի, այսինքն՝ խորամանկութիւն, մարդահաճութիւն, ստախոսութիւն, շողոքորթութիւն, խաբեբայութիւն և խարդախութիւն:

Ինչպէս ասացի, ճեմելիքի մէջ շարած սեղանների մինի առաջև կանգնած էին պարսիկներ և թանդաղին ակներ ու ակնակուռ դարդեր էին ծախում: Յանկարծ աչքս դարձնեմ և ինչ տեսնեմ. Ասատուր-աղան մի մեծ կարմիր լակինթ է ծախս անում. պարսիկը պահանջում է վեց հազար մանէթ, իսկ Ասատուր-աղան տալիս է չորս հազար հինգ հարիւր մանէթ:

Համախարանումը ես առանձին ուշադրութեամբ լսում էի հանքաբանութեան դասախօսութիւնները և մեր պրոֆէսսորը ակերու վերայ խօսելիս՝ միշտ սովորեցնում էր մեզ զանազան հնարներ՝ թէ ինչպէս պէտք է խարդախ ակը իսկականից ջոկելու. իսկ կարմիր լակինթի մասին — այս օրուայ պէս միտս է — երկարօրէն պատմել էր:

Եւ ճշմարիտն պէտք է ասել, որ այնպիսի ըն-

տիր ակ, ինչպէս որ պարսիկն էր ծախում, ես կեանքիս մէջ տեսած չէի՝ թէ ցոլքի, թէ թրաշի և թէ խոշորութեան կողմանէ. թաղաւորին էլ որ ընծայէի՝ չէիր ամաչիլ — այնքան գեղեցիկ էր: Յանկարծ հոգում մէջ երկմտութիւն մտաւ՝ չլինի թէ այս իւրաքախ ակ լինի. վասն զի ես կարծում էի — եթէ նա իսկական ակ լինէր՝ առ սակաւը տաօնը հինգ հազար մանէթ պէտք է արժենար. իսկ մէկ քրնձոտ պարսկի ձեռք ինչ դործ ունէր այդպիսի գումարի ահագին ապրանք: Արդէն պարսիկը զիջել էր ութ հարիւր մանէթ և Ասատուր-աղան աւելացրել էր հինգ հարիւր մանէթ. տարբերութիւնը այնքան չնչին էր, որ ժամանակից լետ անպատճառ նոցա ծախող պիտի վերջանար և ակը պիտի ծախուէր: Սիրտս չը համբերեց, ուղացի ստուգել իմ կասկածը. մօտեցայ Ասատուր-աղային, բարեւեցի (իբր թէ մեր մէջ երբէք դժտութիւն պատահած չէր), հարցուցի նրա առողջութիւնը, (Սօֆիսկայի մասին մի խօսք չ'իշեցի) և լետոյ հարցրի, թէ ինչ է ծախս անում:

— Իս ետղութը ուզումեմ առնել, ինչ կասես՝ լաւ բան ա՛, և ցոյց տուեց ինձ այն սիրուն ակը, որ փստուղի մեծութեան կլինէր:

Ձեռքս առի, դարձրի գէպի արեգակը և ակի մէջ-տեղ երկայն ժամանակ և ուշադրութեամբ նայեցայ: Մի աննշմարելի զիծ տեսայ՝ նորա մէջը, որն անփորձ մարդը հարիւր տարի էլ որ նայէր՝ չէր տեսնիլ՝ ու դառնալով պարսկին ասացի.

«Այդ ու՛ր ֆանիլի ուզումես ծախել այս ակը:

Պարսիկը կեղծի ժպիտով ասաց.

— Ես պահանջում եմ Հինգ Հազար երկու Հարիւր մանէթ. իսկ այս աղան (ցոյց տուեց Ասատուր-աղայի վերայ) տալիս է Հինգ Հազար. մնում է որ ձեզ պէս լուսաւորեալ և հմուտ մարդը մեզ Հաշտեցնէ այս երկու Հարիւր մանէթի Համար. ասաց ու խոնար-հաբար գտակը հանեց առաջնա:

— Այս խարդախ ակ է, ասացի պարսկին: Դու ինչ իրաւունք ունիս հրապարակի մէջ և այդպիսի լրբութեամբ միամիտ մարդոց խաբելու: Դու չգիտես որ՝ այս Ռուսաստան է, ուր կայ օրէնք ու դատաստան. դու քու Պարսկաստանը չգիտես, ուր կարելի է օր ցերեկով խաբել, խարդաւանել և սպանել ու անպատիժ մնալ:

Պարսիկ և Ասատուր-աղայի երեսները սպրդեցան, մինն իր վախից, իսկ միւսինը բարկութիւնից:

— Ատա՛, էլի՛ քու անմարդավարութիւնը շանց տուար, էլի՛ տեղդ դինջ մնալ չկարողացար. էս ինչ բիւրու, թոկից բաց-ընկած մարդ ես իլել, մեղայ եսսձու մեղայ, ասաց ինձ Ասատուր-աղան:

Նորա բարկութիւնից խրախուսած՝ պարսիկը յարձակուեցաւ վրաս:

— Պարոն, երեւի դու ինքդ կարծում ես, որ այս երկիրը Ռուսաստան չէ, այլ մէկ վայրենի անապատ է. եթէ դու օրէնքի ծանօթ լինէիր, անշուշտ կիմանայիր, որ Ռուսաստանի մէջ զրպարտիչը նոյն պատիժն է ստանում, ինչ որ պէտք էր ստանար յանցաւորը: Այժմ ես քու օձիքդ (եախադ) ձեռքէս

բաց չեմ թողնիլ. եթէ չապացուցանես, որ ես խարդախ մարդ եմ, օրէնքը կուտայ քեզ այն պատիժը, որ պիտի ստանայ խարդախը:

— Թող այդպէս լինի, ասացի, ես կամ Սիբիր կերթամ աքսոր, կամ կը հաստատեմ, որ այս ակը խարդախ է, և դա ոչ թէ Հինգ Հազար երկու Հարիւր մանէթ, այլ մէկ գրոշ չի արժիլ:

Այս որ ասացի, վառեցի մի լուցափայտ և բոցը մօտեցրի ակին, երբոր ակը մի փոքր տաքացաւ՝ իսկոյն երկու կտոր սիրուն թաշած և յղկած հասարակ ապակի դարձաւ, որի մէջ ներկ էր քսած՝ կարմիր գոյն տալու համար և եղերքները սոսնձով էին կպցրած:

Ասատուր-աղան պապանձուած մնաց. իսկ պարսիկը ամօթիցը և բարկութիւնիցը չը գիտէր ինչ անէր:

Տես, տես, ինչպէս խաբուել եմ ես: այս անպիտան հասարակ ապակիի համար տուել եմ Հինգ Հազար Հալալ մանէթս. ափսոս, հազար ափսոս իմ կորցրած փողիս, ասաց պարսիկը յուսահատուած ձեւանալով:

— Ա՛յ բան, ասաց ծիծաղելով Ասատուր-աղան, ամա՛ լաւ բարաթի պէտքա խաբէր ինձ էս անպիտան պարսիկը, եթէ դու չիլէիր... Նո՛ւ, պարոն Վարդան, մեռնելս մտքիցս կանցնէր, բայց էսպէս ղօջաղութիւնդ ամենեւին չէր անցնիլ: Իսոր դու ինձ Հինգ Հազար մանէթ բաղջեցիր. մեծապէս շնորհակալ եմ: Թէ էդպէս ա՛րի՛ գնանք մեր տուն՝ մէկ

տեղ հաց ուտենք. բայց խնդրեմք, միւս անգամ էլ էն հին զիծութիւններդ մի անիլ: Էս անգամին քեզ կը բաղշեմ:

Պարսիկը կամացուկ հաւաքեց ասորանքը. փակեց ազակիէ կտիարիչով արկղը ու հեռացաւ. մենք էլ գնացինք Ասատուր-աղայի տունը: Այս կերպով նորա դռները նորից բացուեցան իմ առաջը:

Ճաշի վերայ ոչ Սօֆիան կար և ոչ նոցա մայրը Ստաննան, կատեային էլ չտեսայ: Երեկոյեան ժամը 5-ին սիրտս կոտրած վերադարձայ իմ խրճիթը:

Յուլի 23.

Ի՞նչ եմ ուզում ես Ասատուր-աղայից, ի՞նչ եմ սպասում Սօֆիայից. այս հարցմունքներին մինչև ցայժմ ինքս ինձի ուզեցած չեմ ճիշտ պատասխան տալու: Ասատուր-աղան որ կայ՝ մի ինքնահաւան, կամակոր, փառամոլ մարդ է: Նա ինքը իր խելքով, իր աշխատանքով (արդար թէ անարդար ճանապարհով՝ այդ ջուկ բան է) կարողացել է միլիոնի տէր լինելու. այդ՝ Ասատուր-աղայի և նրա նմանների կարծիքով մի աշխարհի սիրազորութիւն է, որի առաջև պիտի ոչնչանան ամենայն ինչ մարդկային արժանաւորութիւններ և առաքինութիւններ. գիտութիւն, իմաստութիւն, քաջագործութիւն, քանքար, հանճար՝ ինչ չնչին բաներ են հարստութեան առաջը: Ասատուր-աղան արդէն սիրահարուած է իւր խելքի վերայ. կամակորութիւնը խորունկ արմատ

ձգել է նորա մէջ: Ասատուր-աղան հարուստ է. ուրեմն աշխարքի ամեն բարիքը հասանելի են նրան. փողով նա կարող է մեծամեծ, արքայապայել պալատների մէջ բնակուել, իրա շրջապատը շքեղ դարգարել, ծանօթութիւն ունենալ ամեն պատւաւոր, քանքարաւոր և բարձր աստիճան մարդոց հետ, գնել մարդոց խղճմտանքը, գնել, մինչև անգամ, չքնաղագեղ կանանց եթէ ոչ սէրը, գէթ նոցա կեղծի գորովը և հրապուրքը: Ես՝ մի աղքատ և աննշան բրժիշկ, այն էլ հայ բրժիշկ, ի՞նչ պիտի կարողանամ նորան տալու, ի՞նչով դրաւելու նորա կոշտացած սիրտը: Նորան պէտք է բարձրաստիճան, անուանի, երևելի ազգատոհմէ փեսայ, որի վերայ նայելով՝ նա կարող լինի պարծենալու թէ՛ ահա ինչպէս ոմնի տուել եմ իմ աղջկանը: Ես ինչ մէկ այդպիսի աչքի ընկնելու արժանաւորութիւն ունիմ, բացի համեստութիւնէս և աշխատասիրութիւնէս, որ յագենար նորա սնափառութիւնը:

Այժմ դառնանք Սօֆիային: Ի՞նչու ինձ պէտք է սիրէ Սօֆիան, նորա համար, որ ես նորան սիրումեմ. ի՞նչ մեծ փառք և երջանկութիւն է իմ սէրը նորա համար: Գեղեցիկ, դեռահաս, որ գլխաւորն է՝ հարուստ աղջկան ո՞ր երիտասարդը չի սիրել: Ո՞ւր է իմ այն արտաքին գեղը, որի վերայ ամեն աղջիկ հաճութեամբ նայում է. ո՞ւր են իմ փայլուն ուսադիրները, շրիկշրիկ քալի թուրը և խրթանները, որոնք հրապուրում են ամեն աղջկայ աչք ու ականջ: Զէ, ոչ Ասատուր-աղան և ոչ Սօֆիան

կարող են սիրել ինձ այնպես, ինչպես որ ես կ'կամենայի: Եթէ իմ մէջ կայ ինչ ու ինչ արժանաւորութիւն՝ նա այնքան փոքր է, որ խոշորացուցով պիտի նայես վրան, որ տեսնես. իսկ այդ խոշորացուցը չի կայ ոչ Ասատուր-Աղայի և ոչ Սօֆիայի աչքերին... Այս էլ ասենք, եթէ Սօֆիան մի հասարակ մարդու աղջիկ լինէր, արդեօք ես կ'սիրէի նորան և նա ինձ գեղեցիկ ու հրապուրիչ կերևնա՞ր... իսկ Կատեան... Չէ, հեռացիր ինձանից գննողական ոգի, քեզ իւր մէջ ունեցողը երբէք բաղդաւոր չի լինիլ: Չեմ ուզում ես իմ զգացմունքը կշիռքի վերայ դնելու... Ես սիրումեմ Սօֆիային. ես ամեն հնար գործ պիտի դնեմ առաջադրեալ նպատակիս հասնելու և... կհասնեմ:

Այսօր բոլոր օրը անձրև էր գալիս. ամբողջ օրը տնից դուրս գալու հնար չի գտայ. երեկոյեան դէմ թէև անձրևը դադարեցաւ, բայց գետինը այնքան խոնաւ էր, որ հազիւ թէ ժողովուրդը զբօսնելու ճեմելիք երթայ: Անհնարին բան է, որ Սօֆիային թողած լինեն տնից դուրս գնալու. հայրն և մայրը դողումեն նորա վերայ ու աչքերի լուսի պէս պահում են: Չէ, նա ճեմելիք չի երթալ: Մենակ նստած եմ սենեակիս մէջ ու յարմարութիւնիցս պատուհանիցս դուրս եմ նայում: Չատ սակաւ տուն կգտնուի Տաք-Ջուրի մէջ, որի դիրքը այնպէս կենդանանկար լինի, ինչպէս իմը, թէև բնական փողոցս շատ տգեղ անուն ունի (խոզի ձոր). բայց այն տեսարանը, որ փռուած է առաջևս՝ ինչ ասես կարժէ: Հարաւից ե-

րևումէ՝ դալազարդ պարտէզների ու անտառների ծով. առաւել հեռուն Փօթբուժօկ դետակը, օձի նման պտույտքելով, անցնումէ դաշտերի, անտառների ու սարերի միջով. աւելի հեռուն միջին բարձրութեան բլուրներ ծածկած են ծառերով, որոնք ինձ դալար խոտ են երևում հեռաւորութեան պատճառով. նոցա ետևից էլ իւր ալեզարդ կրկնակի դադաթները «տաշած անդամանդի» բարձրացնումէ Եայրուզը: Արեմտեան պատուհանիցս երևումեն հայոց նորաշէն եկեղեցիի դմբէթը ու Բէշ-Թաւի հինգ դադաթներէն մինը: Ամբողջ քաղաքը լսողմէ ծառատունկերի մէջ. կարմրակաւտարները ու խաղտոնիկները նոցա սաղարթների մէջ պահուած՝ օդը լցնումեն իրանց դալալիկովք. խոտերի ու ծառերի տերևների վերայ ծիածանի ամեն գոյներովը փայլումեն անձրևի շիթերը. օդը այնպէս մաքուր է, որ ամեն մի շունչ առնելիս կարծումես թէ կեանքը լայն հոտանքով թափվումէ մէջդ:

Անկոշտ մարդ, ահա քեզ բաղդ, ահա քեզ գեղեցկութիւն, որն քեզանից չի պահանջում ոչ զոհ և ոչ հողեկան տանջանք. վաշիէ՛, բաղդաւոր եղիր. ինչու վաղումես անցաւոր մութի և անշուշտի ստուերի ետևից: Միթէ քեզ սիրող Կատեան խրճիթի մէջ քեզ պակաս բաղդ կրերէ, քան թէ քեզ արհամարող Սօֆիան ճոխ ապարանքումը...

Լռէ, լռէ, առողջամտութիւն, ես քու ձայնը չեմ ուզում լսել. ես սիրում եմ Սօֆիային, և ձեռքս եկած ամեն հնարը գործ կածեմ, որ նա էլ ինձ սիրէ և իմը լինի:

Քննեցայ և անհանգիստ երազները սաստիկ տանջեցին ինձ ամբողջ գիշեր. միւս օր որ զարթեցայ՝ մարմինս յոգնած և տանջուած էր:

Յօթի 25.

Այս օր հասարակաց մատենադարան էի գնացել, ուզում էի կարդալով ձանձրոյթս մի փոքր ցրուելու. բայց ոչ Լերմոնտովը, ոչ Տուրգենիեւը, ոչ Տոլստոյը և ոչ ժամանակակից հաստ օրագիրները կարողացան փարատելու տրտմութիւնս: Թէև Տաք-Տուր եկած օրէս ոչ մի անգամ տեսած չէի Սօֆիային, բայց հէնց որ գիրքը բացում էի՝ էջքերի մէջ գրուածի տեղ տեսնում էի նրա պատկերը. բայց զարմանալի բան, Սօֆիայի ետեւից էլ երևում էր աչքիս Կատեայի երեսը, որ տխուր նայում էր վրաս և գլուխը շարժելով, ասես թէ մեղադրում էր ինձ... Ընչու...

Չեղ մէկ բան ասեմ, լսեցէք: Տեսնումէք, որ ես Սօֆիային սիրումեմ, այսուամենայնիւ նորա սիրտն և հոգին զրաւել չեմ կարողանում. Ընչու: Միւս կողմից, ես համոզուած եմ, որ Կատեան ինձ սիրումէ, ու հոգիս վկայումէ, որ այդ տղէտ, ծառայ աղջիկը վաղ կամ ուշ կգրաւէ ինձ և կտիրապետէ... Ընչու: Իսկական, մաքուր, անկեղծ սէրը միշտ կհամոզէ և կյաղթէ:

Ի՛նչ, ի՛նչ ասացի. ես Կատեայի... սիրեմ... ես նորան... իմ կի՛նը... անեմ...: Երբէք երբէք. ես շուտով ինքս ինձի կտամ կսպանեմ, քան թէ շքեղ,

քնքոյշ Սօֆիային թողած, այդ սպասուոր աղջկան սիրեմ և վրան պսակուիմ: Թող աչն օրը ինձ սև սուգի օր լինի, երբ ես Կատեայի մարդը լինիմ: Մի՛թէ ես այդ բանի համար իմ պատանեկութեան ամենագեղեցիկ հինգ տարին զոհեցի, ամեն տանջանք, նուաստութիւն և զրկանք համբերեցի, որ, վերջապէս, ծաղիկ հատակս և փայլուն ապագաս նուրբեմ մէկ նաժշտի... Ա՛խ, Կատեա Կատեա, այս ինչ ես անում ինձ հետ, քու մաքուր և անկեղծ սէրը դէպի ինձ առաւել փտանգաւոր է, քան թէ վիշապ օձի խեղդող օղակները:

Թողի գրքերը և գնացի հասարակաց դահլիճը (Նիկողայոսեան վօքսհալը), որ կից է մատենադարանին, ուր Խոսէնթուքի ջուր խմողները ժամ կամ ժամ ու կէս ման են գալիս. յանկարծ՝ ինչ տեսնեմ. Սօֆիան ու Կատեան մանեկոյների մէջն էին. երբ որ հակառակ պատին հասած՝ լետ դարձան ու երեսները շուռ տուին՝ մենք միմեանց հանգիպեցանք: Ինձ որ տեսաւ Սօֆիան՝ սպրդեցաւ, իսկ Կատեան շառագնեցաւ:

Իրար բարեւ տուինք, ձեռք սեղմեցինք (ի հարկէ Կատեան ինձ ձեռք տալու համարձակեցաւ) ու սկսանք սովորական խօսակցութիւնն՝ օդի ու ջրերու ներգործութեան և այլ այսպիսի աննշան առարկաների մասին: Կատեան թէև չէր խօսում, բայց աչքը աչքիցս պուկ չէր տալիս. Սօֆիան թէև հետս էր խօսում, բայց ամենեւին չէր նայում վրաս, այլ նայում էր մէկ սպայի վերայ, և այդ սպան էր...

Դրօզդօվը, որն պահարանի առաջն կանգնած՝ հանքերն էր նայում:

Սիրտս տակն ու վերայ ելաւ. նախանձը օձի խայթոցի նման ցցուեցաւ սրտիս մէջ և անողորմաբար տանջում էր ինձ:

— Այս ի՞նչ սիրուն սպայ է, ասաց ինձ Սօֆիան՝ չգիտէ՞ք արդեօք ինչպէս է նրա անունը:

— Անունը Վլադիմիր է, ասացի:

— Վլադիմիր, ախ ի՞նչ սիրուն անուն է:

— Միթէ Վարդանը—իմ անունս—Վլադիմիրից վատ է:

— Ո՞վ է ասում, Վարդանն էլ վատ անուն չէ, ասաց և քթի տակից ծիծաղեց. Վարդան Վարդան. «Հայր թակէ Վարդանին, թուրքը թակէ Վարդանին», հա՛, հա՛, հա՛, հա՛. բայց Վլադիմիրը աւելի գեղեցիկ է: Ինձ այնպէս երևումէ որ՝ ով որ Վլադիմիր անուն է կրում՝ անպատճառ պէտք է լինի սպիտակ երեսով, կարմիր թշերով, բարձր հասակով, կապուտ աչքերով և դեղձան մազերով մէկ քաջ երիտասարդ...

— Ինչպէս որ այս Դրօզդօվն է, այնպէս չէ, օրիորդ:

— Միթէ սորա մականունը Դրօզդօվ է, այդ էլ շատ գեղեցիկ մականուն է... Վլադիմիր Դրօզդօվ, Վլադիմիր Դրօզդօվ, մըմնջեց կամացուկ... շատ սիրուն երիտասարդ է:

Սօֆիայի աչքերը գոհարի նման ցոլացին, երեսը շառագնեցաւ և դէմքի վերայ անմեկնելի երջանկութիւն փայլում էր:

Այդ րոպէին ես այնպէս տտեցի Սօֆիային, ինչպէս որ մարդ կարող է ատել իւր ծնողաց կամ դաւախների սպանողին. բայց, աւանդ, այդ ատելութիւնը նման էր այն ատելութեան, որն զգում է թուչունը, որ կեցած է խորամանկ օձի առաջն. ողորմելին թուփածէ թունաւոր սողունի աչքերէն. նա ակամայ մօտենում է նորա բացած բերանին, և ատելով՝ նորա դոհն է դառնում: Այսպիսի կախարդական ուժով Սօֆիան քաշումէր ինձ դէպի իրան: Միթէ այս սէր է: Եթէ այդ սէր ևս լինի, գոնէ այն սէրէն չէ, որն մարդուս երջանկացնում է:

Եթէ Կատեան Սօֆիայի հանգամանքի մէջ լինէր՝ նորան էլ այսպէս կսիրէի արդեօք, թէ ո՛չ: Ահա խնդիր, որն չուժեղու համար առողջ դատողութիւնս հրաժարվումէր ինձ օգնելու:

Սօֆիան իւր անզոյշ վարմունքով բանը այն տեղը հասցուց, որ Դրօզդօվը նկատեց, որ աղջկայ վերայ ազդեցութիւն է գործել իւր արտաքին տեսքովը: Քանի քանի անգամ նորա վերայ շինծու անոյշ աչքեր ձգեց, և մի անգամ էլ, իբր թէ պելներն է շփում, մատի ծայրովը օդային հանքոյր ուղարկեց նորան: Չգիտեմ նկատեց այդ Սօֆիան, թէ ո՛չ, միայն թէ ամենեւին վիրաւորուած չցուցուց իրան, այլ ընդհակառակն, միշտ ինձ հետ պինդ պինդ ուռսերէն խօսելով, աչքը նորանից չէր հեռացնում,— խօսակցութեան նիւթը աւելի հետաքրքրելի էր Դրօզդօվին, քան թէ ինձ:

Կատեան, ինչպէս ասումեն, կեցած տեղը ան-

կրակ այրվում էր ամօթից և դժկամակութիւնից։

Ի՞նչ պիտի կարծէր Դրօզդօվը իմ վերայ, ի՞նչ գաղափար պիտի կազմէր օրիորդ Սօֆիայի և սորա նմանների վերայ։ Հաշտարխանցիի պարզամտութիւնը, ասես թէ, մօր արգանդից հետը միասին ծնած է, այս բանը ես վաղուց նկատել եմ, և կամեցողը ամեն օր կարող է ստուգել ասածիս ճշմարտութիւնը։

Ես աղջիկներին մինչև նոցա տան դուռը ճանապարհ ձգեցի, բայց քաղաքավարութեամբ ներս չի մտայ. սպասում էի, որ Սօֆիան կը հրաւիրէ. բայց նա չհրաւիրեց, և ես մնաս բարեւ ասացի ու հեռացայ։

Տխուր վերադարձայ ճեմելիք։ Թէև ժամանակը ուշ էր, բայց շատ զբօսնողներ կային։ Նստարաններից մինի վերայ սպաները պինդ պինդ խօսում ու ծիծաղում էին։ Հեռուից գալիս էր Դրօզդօվը։

Սպաներէն մինը ասաց.

— Պարոններ՝ աչքերդ այն կողմը դարձրէք. թամբօվի այրողն է գալիս։

Սպաները բարձրաձայն ծիծաղեցան։ «Ջատ սիրուն և յարմար անուն է մեր Դրօզդօվի համար, ասացին քանիսը— թամբօվի այրող, թամբօվի այրող» կրկնեցին։

Երբոր Դրօզդօվը մօտեցաւ՝ ոչ մի սպայ նորան ձեռք չի տուեց. ինչպէս երևում էր՝ նա նոցա առաջև խեղկատակի դեր էր խաղում։

— Պարոններ՝ ծիծաղեցէք վրաս, ծիծաղեցէք, ասաց նա կէս ծիծաղով և կէս ծանրադէմ. ձեր չի

հաւանած թամբօվի այրողը մի այնպիսի Ասիայի զանրիկ է գտել, որի համար շատերդ ուրախութեամբ կ'օժարէք ինձ նման այրող լինելու։

— Ո՛րքէ կենում այդ զամբիկդ, ո՞րտեղ կարող ենք նորան տեսնելու, ասացին մի քանի երիտասարդ սպաներ։

— Որտեղ կեցածը դեռ ևս ինքս էլ չգիտեմ, բայց, կարծեմ, եթէ պարզ եղանակներ լինին, նորան միշտ կարելի է ճեմելիքումն տեսնել։ Բայց այդ չէ գլխաւորը. գլխաւորը այն է (ինձ մի հայ պտղավաճառ ասաց) որ նա մի շատ հարուստ հայի աղջիկ է. թէև ցեղը, ինչպէս տեսնումէք, ասիական է, բայց Ֆրանսիացիից աւելի ազատամիտ դատարարական է, ուրեմն, մեր դաշտի պտուղներինց է»։ Կեցցէ լուսաւորութիւն։

— Ջնորհաւորենք, շնորհաւորենք այդ գիւտդ. բայց յետոյ մեզ էլ մաս կ'հասնի, ասացին մի քանի կարմիր ու կապուտ քիթերով սպաներ։

— Պարոններ՝ դուք շատ լաւ գիտէք, որ ես ետամոլ չեմ։ Իմ սիրած բանս է կանանց սրտերի մէջ ճանապարհ բանալ. յետոյ արդէն ես չեմ հոգում՝ ո՞վ անց ու դարձ պիտի անէ այդ ճանապարհի վերայ։

Սպաները ծիծաղեցան. բայց իմ սրտէս արիւն կաթեցաւ։

Գլուխս կախած տուն վերադարձայ։

3-26.

Առաւօտը որ զարթեցայ՝ առողջութիւնս տեղը
չէր. լեզուս պղտոր էր, աչքերիս սպիտակուցը դեղնա-
դոյն և մի փոքր էլ արիւն կոխած, բազկերակս ան-
կանոն, բերանս դառն, ասես թէ լեզի էի խմել:
Բայց շատ լաւ գիտեմ, որ գիշերը մրսած չէի, և
ոչ երեկուան օրը ստամոքս աւերած: Այսպէս ուրեմն
պրօֆեսսորներին ասածը արդարացաւ, թէ Հոգու
ստացած հարուածները միշտ ցոլանում են մարմնու-
վերայ: Այսօրուայ տկարութիւնս անշուշտ հետեւանք
են երեկուայ անախորժ անցքերին:

Այժմ արդէն երկբայութեան տեղ չի կայ, որ
Սօֆիան ինձ չէ սիրում, բայց այդ բաւական չէ, ես
այժմ մինչև անգամ կասկածումեմ, որ նա երբ և
իցէ և որին և իցէ կարող լինի սիրելու: Աինը սի-
րոյ համար ստեղծածէ, վասն զի կինը ինքը անձ-
նաւորած սէր է. կինը որ չսիրէ՝ նա իւր կնութիւնը
կորցնումէ, մի խրտուելակ, մի հրէշ է դառնում:
Աղջիկ, որ պղատոնական սիրով չսիրէ մի գաղափա-
րական պատանիի, հարս որ չսիրէ իւր փեսային,
կողակից որ չսիրէ իւր ամուսնուն, մայր որ չսիրէ
իւր զաւակին—այս անհասկանալի է ամեն ազգի
մէջ: Գիտեմ, Հոգիս վկայում է, որ եթէ երբ և իցէ
Սօֆիան իմ կինը լինի՝ նա իմ գլխուն մեծ անբաղ-
տութիւն պիտի բերէ. աշխարհիս երեսին ամենա-
թշուառ արարածը պիտի դարձնէ ինձ. բայց այնու-
ամենայնիւ, նորա պատկերը մտքիցս հանել չեմ կա-

րող: Հատ թանգ կուտայի այն մարդուն, որ ինձ
պարզէր՝ արդեօք Հինգ տարուայ սովորութեան հե-
տեւանքն է այս, թէ ես իսկապէս սիրումեմ նորան:
Նմանապէս շատ կուգէի իմանալ՝ եթէ Սօֆիան ևս
սիրէր ինձ, ինչպէս որ ես սիրումեմ նորան՝ արդեօք
իմ սէրը մի փոքր չէր պակսիլ և կամ բոլորովին չէր
անհետանալ սրտէս: Արդեօք արգելքները գլխաւոր
դեր չէն խաղում սիրոյ կապերի մէջ: Արդեօք մենք
մեր յամառութիւնը չէնք ընդունում սիրոյ եռանդի
մէջ... Ո՞վ ինձ կմեկնէ այս, իմ տարիքի համար,
դժուարալոյծ խնդիրները:

Կէս օրի ժամանակ տօթը սաստկացաւ. փոքրիկ
սենեակիս մէջ շնչելու օդ չէր մնացել, խեղդվում էի.
սրտմաշուկ ճանձները տարմովին թռչում նստում էին
մերթ առիքի, մերթ սեղանի և մերթ գլխուս վե-
րայ. նոցա բզկոցը դժոխային երաժշտութիւն էր ա-
կանջներիս համար: Էլ հնար չի կար տանը մնալու,
կէս հիւանդ, կէս առողջ հագւեցայ թեթիւ և զը-
նացի ճեմելիք:

Մարդիկ կամաց կամաց, ամեն կողմից, դալիս
հաւաքվում էին, շատերը իրանց պատուիրած թիւը
բաժակներին խմել էին ու լոգարանները ընդունել
էին, մնացածն էլ ինձ պէս տանը մնալու հնար
չունենալով՝ դալիս էին ճեմելիք զբօսնելու. ճաշելու
դեռ շատ վաղ էր:

Տաք-Ջուրի ճեմելիքները սկսում են Մաշուկի
բարձրագոյն լանջէն, այսինքն իսկ և իսկ այն տե-
ղէն, ուր կայ Եղիսաբեթեան սրահը ու փջնումեն

դէպի վայր և գնալով միշտ դէպի արևմուտք, վերջանում են քաղաքի սահմանումը: Երբ որ Եղիսաբեթեան սրահին հասար՝ դէպի ձախ կողմի վերևումը կտեսնես մի կանաչ ներկած հովանոց, ուր երբեմն եղել է էօղեան տաւիղ, որ այժմ հանած է, աւելի ցած՝ գտնվում է Լերմօնտով բանաստեղծի քարայրը և մէջը նորա կիսարձանը. իսկ սրահը մէջընդմէջ անցնելով, եթէ երթաս դէպի հիւսիսային-արևմուտ, մի վերսթ հեռաւորութեամբ կայ այն երեւիլի փուլը, որն լցուած է ծծմբային տաք ջուրով, դէպի ուր այժմ տանում է մի գետնափոր ճանապարհ:

Ահա այսպէս, ետև ետևէ ճեմելիքները անցնելով, հասայ մինչև Եղիսաբեթեան սրահը, այն տեղ մի փոքր կանգ առի, հարաւումը տեսայ ահագին Յայրուզը, որ ութսուն վերսթ հեռուից մի ահագին սառուցի նման փայլումէր առաջևս և յետոյ քայլերս ուղղեցի դէպի փուլը:

Ճանապարհի կէսը անցած էի, որ տեսնեմ հեռուից մի կին է գալիս, երբ որ մօտեցաւ՝ տեսայ որ Կատեան էր, որ փուլից էր վերադառնում:

Իրար բարևեցինք:

— Երևի փուլ էիք գնացել, ասացի:

— Այո՛, փուլ էի գնացել թամաշա անելու, ասաց նա:

— Ափսոս որ ես մի փոքր ուշացայ և կամ դուք մի փոքր շտապեցիք, թէ չէ՝ միասին կերթայինք, ճանապարհը երկուսիս էլ ձանձրալի չէր լինիլ, ասացի:

— Ի՞նչ հաջաթ, ես դադրած չեմ, պարոն Վար-

դան, եթէ կ'կամենաք՝ ես ձեզ հետ նորից կերթամ, ասաց Կատեան:

Երկուսս էլ սուտ ասացինք, երկուսս էլ մին մինի ասելու բաներ ունէինք, բայց չէինք ուզում խոստովանելու. երկուսիս էլ փուլ երթալը (ես քանիցս արդէն տեսել էի) մի վայելուչ պատրուակ էր:

— Ուրեմն, Կատեա, եթէ ձեզ ձանձրութիւն չի լինիլ, երթանք միասին, ասացի ու կուռս տուի իրան:

Խեղճ աղջիկը կեանքի մէջ երևի այսպիսի քաղաքավարութիւն տեսած չէր. հրալիսի ուրախութեամբ թեք ընկաւ կուռիս, որպիսի քնքոյշ շարժումաւքով սիրուն գլուխը խոնարհեց դէպի աջ ուսս, հաւատացէք, որ մի աւագորեարի կամ իշխանի կին կամ դուստր չէր կարող այդպիսի չքնաղ պատկեր ձեւանելու իւր անձով: Նորա գլուխը հասնումէր մինչև ականջիս բլթակը, հասակը հասակիս և կազմուածքը կազմուածքիս այնպէս յարմար էին գալիս, որ ասես թէ անդուստ ի վերուստ մենք մէկ մէկի համար էինք աշխարք եկած: Աչքիս ծայրով նայեցայ նորա երեսին և տեսայ նորա լիովին երջանկութիւնը ու անձնաբաւականութիւնը: «Տէր Աստուած, Տէր Աստուած, ասացի մտքիս մէջ, երբեմն ինչ փոքր բանով կարելի է մարդու երջանկացնել, նոր կեանք տալ նորան և փոխադարձ՝ ինչ փոքր բանով կարելի է նորան թշուառութեան անդունդը գլորել ու բարոյապէս սպանել: Ի՛հ հարկէ, այդ բոլորից Կատեայից երջանիկ կին չի կար աշխարհիս երեսին: Մի փոքր որ առաջ գնացինք, ես կանգնեցայ և ասացի նորան:

— Ես քեզ մի բան ասեմ, Կատեա, փուլը ես արդէն քանի քանի անգամ տեսել եմ, դու էլ այս րոպէիս այն տեղ էիր. եկ այս մօտիկի նստարանի վրայ նստենք և խօսենք. մին էլ ինչ այս տօթին, փոշի կուլ տալով, իզուր պիտի երթանք ու վերադառնանք:

Առաջարկութիւնս ուրախութեամբ ընդունեց Կատեան, ու մենք բաց դաշտի մէջ, մի վայրի տանձի ծառի տակ նստանք: Մեր կեցած տեղը բարձրավանդակ էր. դէպի արևելք խորունկ ձորեր՝ դաժավէժ ափերով. արևելի հեռուն երևում էին Փօղբումօք գետակը և շատ առէններ, որոնք թաղուած էին սաղարթախիտ պարտէզների և անտառների մէջ: Սարի կրճիցը զով ու անուշ քամին ուղիղ փչում էր մեր երեսին:

— Ի՞նչ նոր բան կայ ձեր տանը, ինչպէս է առողջութիւնը Ասատուր-աղային, Օսաննա խաթունին և օրիորդին, սկսեցի ես, խօսակցութեան արեւելի յարմար նիւթ չի գտնելով գլխուս մէջ:

— Փառք Աստուծոյ, լաւ են, պատասխանեց Կատեան:

Երկուսս էլ լաւ հասկանում էինք, որ ոչ ես եմ այն հարցնում, ինչ որ ուզում եմ և ոչ նա տալիս է ինձ այն պատասխանը, ինչ որ ինձ կարող էր բաւականացնել: Եւ այս անշանակ հարց ու պատասխանից հետ երկուսս էլ բաւական ժամանակ լուռ մնացինք. երկուսիս լեզուների վրայ ևս կար մէկ խօսք, որն ստելու քաշվում էինք: Վերջապէս ես խղեցի այս տաղտկալի լուռութիւնը:

— Ասա, խնդրեմ, ինձ ճշմարիտը, Կատեա, Սօֆիան ինձ սիրում է, թէ ոչ: Տաք-Ջուր գալից դեսը ես նորա մէջ մեծ փոփոխութիւն եմ տեսնում դէպի ինձ, ինչ է պատահել նորան...

— Պարոն Վարդան, որովհետեւ դուք ինձանից ճշմարիտն էք ուզում իմանալ, ես ինձ համար մեղք կհամարեմ, եթէ ձեզ մոլորեցնեմ Սօֆիայի մասին: Սօֆիան ձեզ ոչ Մոսկովումն է սիրել և ոչ այժմ այստեղ սիրում է. ինչպէս որ նորա հայրն ու մայրն են միշտ ասում՝ նա էլ այնպէս է կարծում: Նա ուղում է մի ջահիլ գեներալի կամ գուբերնատօրի կնիկ լինել: Զատ դժուար էր ինձ ձեզ այս բանը յայտնելը, բայց չունքի դուք կամեցաք ճշմարիտը իմանալու, ես էլ ձեզ ինչ որ ճշմարիտ բան գիտէի՝ ամենը ասացի:

— Միթէ, ասացի յուսահատաբար և գլուխս կրծքիս վրայ խոնարհեցի. արտասուքը ոլոր ոլոր կաթում էր աչքերէս:

— Պարոն Վարդան՝ ինչի էք տրտում, ինչի էք լալիս, միթէ Սօֆիան կարժէ ձեր արտասուքին, մոռացէք նորան. Աստուծոյ փառք տուեցէք, որ ձեր պսակի բանը գլուխ չեկաւ. Սօֆիան մի օր ձեզ անպատճառ քանքաղդ կանէր...

— Ա՛խ, Կատեա Կատեա, միթէ սորանից էլ մեծ անբաղդութիւն կայ աշխարհիս երեսին...

— Կայ, պարոն Վարդան, կայ. դորանից էլ մեծ անբաղդութիւն կայ. բայց Աստուած ուզում է ձեզ ազատել նորանից, և այդ անբաղդութիւնն է՝

Սօֆիայի նման աղջկայ մարդ լինելը: Հաւատացէ՛ք ինձ, պ. Վարդան, որ Սօֆիան ամուսնական կեանքի համար ստեղծած չէ: Նորա խելքը-միտքը Փարիզ-ներ, Վեննաներ, պարահանդէսներ, դիմակահանդէսներ, զարդեր և սիրուն զինւորականներ են: Բնէ սաղ կգայ համեստ երիտասարդին այդպիսի կնիկը:

Այն ըոպէին ես կարծում էի թէ՛ Կատեային այսքան չարախօսութիւն, այսքան բանբասանք թելադրողը նոցա նախանձն է դէպի հարուստ Սօֆիան և, գուցէ, մի փոքր պատուասիրական ձգտումն դէպի ինձ: Բայց թէ՛ որպիսի անարդար կարծիք էր այդ խեղճ և անմեղ աղջկայ մասին — այդ ես յետոյ իմացայ: Իսկ այն ըոպէին ես լուռ մնացի, և միայն երեսիս ծռմուկով հասկացուցի նորան, որ այդպիսի խօսքերը Սօֆիայի մասին ինձ շատ անախորժ են:

Կատեայի երեսը մառախուղով պատեցաւ, հագիւ նշմարելի արտասուք ցոլաց նորա աչքերի մէջ. իմ պատասխանը, ինչպէս երևում էր, խորունկ խոցեց նորա սիրտը: Դառնալով ինձ, ասաց նա.

— Պարոն Վարդան, շատ կարելի է, որ դուք կ'կարծէք, որ ես ատումեմ Սօֆիային, կամ նախանձումեմ նորան և կամ մէկ չարութիւն եմ կամենում: Աստուած մի արասցէ. բայց ես մեղքանումեմ ձեզ, որ մինչև այժմ հասկացած չէք նորան: Ես Սօֆիային փոքր ժամանակից ճանաչումեմ, դեռ ևս այն ժամանակ, երբ նորա հայրը այժմէայ պէս հարուստ չէր. իսկ իմ հանգուցեալ հայրը հաշտարխանի մէջ առաջին մարդն էր. գուրերնատօրը և սրբազան Ա-

ռաջնորդը ամեն կիրակի մեր տանը ճաշի էին լինում. Սօֆիան փոքր ժամանակից չունքի հօր ու մօր մէկ հատ աչքի լուսի պէս զաւակն էր՝ շատ երես էր առած. ամէն բան ուզում էր, որ իրա կամքով լինի: Հէնց որ մէկ թարս բան անէիր՝ իսկոյն ինչ ձեռը հասաւ՝ կոտրում, փշրում, զետնէ գետին էր տալիս, գլխի մազերը պոկում էր, գլուխը պատին պատին էր տալիս, և ձեռքերն էր կծոտող: Այսպէս իրա-ասածի աղջիկ էր: Հէրն ու մէրն ասում էին թէ՛ կմեծանայ՝ կխելօքանայ ու իսկի չէին աշխատում խրատելու: Մեծացաւ՝ ամա տեսար որ բնութիւնը, չի փոխուեցաւ: Հիմի արդէն նորան դրստելը անկարելի է և կամ շատ աշխատութիւն և շատ ժամանակ է պէտք դորա համար: «Էլ ո՛ր հեռու գնանք. էրեկի միասին էինք մանգալի բոլվարումը. մին էլ բիրդան մեր դարշու էկաւ էն Դրօզդով աֆիցէրը և էրկուսիս չէստ տուաւ: Սօֆիան փոխանակ գլուխ տալու ու մօտից անցէն անցնելու, Բնէ անի լու ա, — սկսաւ հետը խօսելու, խօսան խօսան, մանէկան մանէկան ու, վերջապէս ադանց հօր ու մօր հրամանին տուն ձէն տուաւ իրիկնաչալի: Դրօզդովի գօրա Բնէ. նա տղամարդ ա, ամօթ, պատիւ, խալխի բանբասանք նորա համար ոչինչ բան ա: Եկաւ տուն, բարեկամացաւ Ասատուր-աղայի ու Օվսաննա խանումի հետ, խելի վախտ նստան ու գիշերի շատ ուշ ժամանակ զնաց տուն: Խօսածներն էլ Բնէ. ամենը դատարկ հայվարա բաներ էին, — Փարիզի քէֆերի, բիաբուռ կնանիքի վրայ: Մեր Սօֆիան էլ, ամաչելու,

կարմրելու տեղ, բերանը բացած՝ ծիծաղումէր: Ապա հիմի ինքդ ասա՝ ինչպէս չի բարկանամ ախր նրա վերայ. մատաղ-ջան, էնպէսով հայ քրիստոնեայի անըմը կոտորվումա ախր օխտը—օտարի աչքումը»: Այս բոլոր մենախօսութիւնը Հաշտարիւնցի պարկեշտ Հայ կնոջ արագախօսութեամբ, շունչ չառած, արտաբերեց զժկամակած Կատեան: Այդ բոլորէն շատ գեղեցիկ էր նա. պարկեշտ կնոջ բնական խելքը, պարկեշտութիւնը և պարզամտութիւնը փայլում էին նորա դէմքին:

Նա լռեց. ես ոչինչ պատասխան չտուի: Տեղերէս ելանք և Եղիսաբեթեան սրահի միջովն, գնացինք դէպի ճեմելիք: Ժամը երկուսի մօտ էր. ճաշելու ժամանակ էր. ճեմելիքի մէջ գրեթէ մարդ չէր մնացել, ամենքը իրանց տներն էին քաշուել: Ես ճանապարհ ձգեցի Կատեային մինչև Ասատուր-աղայի տան մօտերը:

Ներս չի մտած, Կատեան ինձ հարցուց.

— Այս իրիկուն կրգամք աղայի մօտ:

— Կարծեմ որ չեմ գալ, ասացի:

— Ես ու իմ հոգին՝ շատ էլ լաւ կանեք. ինչու է իզուր ձեր ստորանալը մի թեթեամիտ աղջկայ և մի անհոգի ծերունիի անջև:

— Բայց խօսքս չի բռնեցի, ու չարաչար պատ-
ժուեցայ: Ի՞նչ անեմ, մտածում եմ, ի՞նչ անեմ:

Երեկոյեան ուղիղ եօթը ժամին գնացի: Ասա-
տուր-աղան քանի մի բարձրաստիճան պաշտօնա-
տարների հետ պատշգամբի վերայ նստած՝ թէյ էր

խմում. իսկ Սօֆիան Գրողովի հետ մի փոքրիկ բազ-
մոցի վրայ նստած՝ շատ կտմայ խօսումէր. Գրողով-
վի աչքերն արիւն էին կոխած. Սօֆիան շառաղնած,
աչքերը խոնարհած՝ ուշադրութեամբ լսումէր նորա
խօսածը: Ի՞նչ էին խօսում նոքա՝ ոչ լռեցի և ոչ ի-
մացայ. բայց հաւատի ղիտեմ, որ նոցա ամեն մի
խօսքը, զաղտնի մահաբեր հարուած պիտի լինէր ինձ
համար:

Ժամ ու կէս մնացի Ասատուր-աղայի տանը,
տնեցոցմէ ոչ ոք մի խօսք չստաց ինձ, ոչ ոք բա-
րևս չընդունեց, ոչ ոք ինձ ձեռք չպարզեց, մինչև
անգամ երկրայելի է, որ իմ ներկայութիւնը նկատած
լինին: Չալը քթիս տակից անցնելով՝ տալիս էին հիւ-
րերին, իսկ ինձ ոչ առաջարկեցին և ոչ հարցրին՝
կ'կամենամ, թէ ոչ: Աւի դտակս ու խոր խոցուած
գնացի տուն: Չատ փոշմանեցայ, որ Կատեայի խօս-
քին ականջ չի դրի:

Յօդ 30.

Չորս ամբողջ օր վրայ-վրայ տանս փակուած
մնացի: Ոչ ոք ինձ չայցելեց՝ ոչ բարեկամներ և ոչ
հիւանդներ, թէև, ըստ օրինակի ուրիշ բժշկներուն,
տեղական լրագրի մէջ յայտարարել էի, որ «պատիւ
կունենամ հիւանդներ բժշկելու»:

Քաղաք հասած օրէս ի վեր դեռ ևս ոչ մի հի-
ւանդ չիմած չէ իմ օգնութեանը բացի Կատեայէն,
որն թերևս մէնակ հաւատումէ իմ բժշկական հմու-

Թեանը: Ո՞վ է հարցնողը, թէ այսպիսի լետ ընկած փողոցի մէջ մի նորաւարտ հայ բժիշկ կայ Վարդան Յուսէփեան անունով կամ չկայ, մինչ Բաւթեր, Վիցեր, Սմիւնովներ, Միլիւտիններ, Խալեցքիներ արեգակի նման փայլումեն ահա քանի տասնեակ տարիներ:

Այստեղ ես աւելի մեղադրում եմ հայ բժիշկներին, քան թէ ժողովրդին: Ըստ մեծի մասին բժիշկները ու հայ բժիշկը մանաւանդ՝ իրանց դործի վրայ ինչպէս հարստացնող արուեստի վրայ են նայում: Երբոր մէկ մարդու նպատակը հարստանալն է՝ արդէն հնարներու աղնութիւնը և անաղնութիւնը նորա աչքէն փախչում են: Երեք պաշտօն կայ, ուր փողի սէրը մարդու համար դառնում է աններելի մոլութիւն, դռքա են պաշտօնները, քահանայի, մանկավարժի և բժշկի: Ես չեմ ասում, որ այս երեքին փող ու ապրուստ պէտք չեն. ամենեւին ոչ. բայց եթէ սոցա աչքումն փողը առաջին կարգումն լինի, նոցա զարշնի կղարձնէ մարդոց աչքումը: Ամենքս ներողամիտ աչքով նայում ենք արծաթասէր վաճառականի վրայ. եթէ մէկ զինուորական սիրէ ճոխ և զեղի ապրուստ՝ մենք ամենեւին նիւթ չենք դարձնում մեր խօսակցութեանը նորա այդ թուլութիւնը, բայց եթէ մէկ քահանայ, կամ մէկ մանկավարժ, կամ մէկ բժիշկ սիրէ ճոխ ուտել-խմել, շուտ ապրել, պերճ հագուել և զարդարուել՝ մենք արդէն մեր մտքի մէջ նոցա կարգադուրկ և պաշտօնանկ ենք համարում, չենք հաւատում նոցա օգտաբերութեանը, և չենք գնահատում նոցա հմտութիւնը իրանց ա-

րուեստի մէջ: Ինչո՞ւ: Այդ ամենին էլ հասկանալի է, ամենքն էլ զիտեն: Թէ քահանան, թէ բժիշկը և թէ մանկավարժը պաշտօն մտած օրից պիտի շարունակ սովորին ու կատարելագործուին. դորա համար ժամանակ է պէտք. իսկ եթէ նոքա անձնատուր լինին փող ճարելու ու ճոխ ապրուստ վայելելու՝ նոցա թանգազին ժամանակը իրանց ընտրած արուեստի համար անպտուղ կը կորչի, և նոքա ոչ միայն չեն կատարելագործուիլ, ոչ միայն իրենց ստացած գիտութիւնը կապահպանեն, այլ օրէ օր կմոռանան այն և կտղիտանան: Երկրորդ պատճառ ևս կայ, որ ժողովուրդը չի ներում այդ երեք պաշտօնին նուիրած մարդոց արծաթասիրութիւն և զեղխութիւն: Քահանան, մանկավարժը և բժիշկը ոչ միայն խօսքով պարտաւոր են խրատելու ժողովրդին, այլ և իրենց անձնական համեստ կեանքով լինել նորան օրինակ, որն աւելի կհամոզէ, քան թէ ամենաճարտար լեզուն:

Մեծագոյն մասը հայ բժիշկներին սովորութիւն ունի, հէնց որ թողեց համալսարանական նստարանը, իսկոյն հետամուտ լինել, որ իւր ապրուստը ապահովացնէ: Ընթերցանութիւն, պարապմունք, ուսումնական փորձեր, կատարելագործութիւն, հետախուզութիւն — բոլորը ցնդում են նորա մտքէն. նորա բոլոր իմաստութիւնը սահմանափակվում է այն կիսակատար գիտութեամբ, որ նա իւր պատանեկութեան օրերը օրամէջ քաղել էր պրօֆեսսորների դասախօսութիւններէն և տարուայ վերջին ամիս ու կէս վայնաչարին քաղուածք էր արել իւր զգմած տեսրակներովը:

Թէ՛ւ ամեն ազգի մէջ կան այսպիսի թերուս բժշկաներ, բայց միւսնոյն ժամանակ ամեն ազգ ունի հրմուտ, կատարելագործուած, առաջնակարգ բժշկապետներ. տարաբաղտարար հայ ազգը շատ ունի առաջիններէն և գրեթէ ոչ մինը երկրորդէն:

Այս է պատճառը, որ հայ հիւանդը սակաւ հաւատ է ընծայում հայ բժշկին: Եթէ նորա տկարութիւնը փոքր ի շատէ ծանր է՝ նա երբէք չի դիմել հայ բժշկին, այլ միշտ կհրաւիրէ օտարազգիին, հէնց այն պատճառով, որ հային առանց այլ և այլութեան վատ է ճանաչում, իսկ օտարազգիին՝ ոչ: Ո՞վ է մեղաւորը: Ի հարկէ, մենք հայ բժշկներս:

Երեկոյեան դէմ, ժամը այսպէս վեցին, գնացի ճեմելիք. սպանները մեծ խումբ կազմած՝ ծիծաղելով դէպի վեր էին նայում ու անպարկեշտ կատակներ էին անում իրանց մէջ նոցա մասին, որոց վերայ նայում էին, իսկ նայում էին նոքա Դրօզդօվի և Սօֆիայի վրայ, որոնք կուռ-կռի տուած՝ զնումէին դէպի վերի ճեմելիքները:

— Այ կտրիճ, ասումէր սպաններէն մինը. որքան և անպիտան է, որքան և անամօթ է, բայց կարողացաւ խօսանկը ձգելու այդ թռչունին...

— Օ՛, Դրօզդօվը մեծ ոմն է փոքր գործերումը, պատասխանեց միւսը. բայց մէկ հին և խելօք առած կայ, որ ասումէ «գու առն ինձ ո՞վ է բարեկամդ, ես էլ քեզ կասեմ դու ինքդ ո՞վ ես»: Դրօզդօվին ճանաչելով՝ մենք պէտք է երևակայենք, թէ նորա ձեռք ձգած աղջիկը ինչ պտուղ է...

— Զէ՛, պարոններ, ինչ կուզէք ատէք, բայց աղջիկը բաւական սիրուն է, հօրը համար էլ ասումեն, թէ շատ հարուստ մարդ է:

— Ուրքան կուզէ հարուստ լինի, բայց Դրօզդօվին Փարիզի մէջ մէկ տարի մտնելու փող չի ունենալ, վասն զի նա իւր հօրից մնացած միլլիօնը և հօրաքուրից մնացած հարիւր հազարները երկու տարուայ մէջ այնպէս փճացուց, որ գրեթէ մերկ լետ եկաւ:

— Միթէ աղջկայ ժլատ հայրը իւր բոլոր ունեցածը կառնէ կուտայ նորան, չէ՛, Դրօզդօվը թող իւր ախորժակը պահէ մինչև նորա մահը...

— Եթէ չի տալ՝ Դրօզդօվը կգողանայ, դրամարկ կոտրել բանալ, սուտ մուրհակ տալ, թղթախաղի մէջ հազար տեսակ խարդախութիւններ անելը նորա համար նոր բան չէ:

Աւելի չկարողացայ համբերելու, թողի ու գնացի առաջ. բայց Սօֆիային ևս հանդիպել չէի ուզում, ուստի մեծ լայն ճանապարհը թողած՝ կողմնակի նեղ ճանապարհներով խորացայ ծառատունկի մէջ, որ տարի լանջի վերայ էր զետեղուած: Այստեղ ծառերը, թփերը և մարդաչափ խոտերը այնքան խիտ էին, որ չորս քալափոխ հեռի կեցողին անհնար էր տեսնելը: Յանկարծ ականջիս շշուկի ձայն եկաւ. ուշք դրի, տեսնեմ Սօֆիայի ձայն է, բայց շատ կամաց արտասանած:

— Պարոն Դրօզդօվ՝ ինչ էք անում, թողէ՛ք, մարդ կը տեսնէ, ամօթ է:

— 2է, Հոգիս, ոչ ոք չի տեսնիլ, միթէ ինձ չես սիրում, էլի մէկ համբոյր տո՛ւր, այն ժամանակը ես կիմանամ, որ դու ինձ սիրումես:

— Աւստեցաւ մի բարձրաձայն համբուրի շուրջովոց:

— Բաւական չէ՞ր, էլի ես չարութիւն անում, թո՛ղ, թէ չէ կը կանչեմ...

Ես դիտմամբ ամուր հագացի, որ ձայնս լսուի ու այս խայտառակ տեսարանին վերջ լինի: Այնպէս էլ եղաւ: Երբ որ ձայնս լսեցին՝ իսկոյն թփերի միջից ճանապարհի վրայ գնացին, և ես գուցէ ազատեցի Սօֆիային այնպիսի անկումէ, ուր կիներ կեանքի մէջ գլորվումէ մի անգամ ու էլ ոտքի կանգնել չէ՛ կարող: Բայց ի՛նչ օգուտ. Դրօզդօվ որ կար՝ երևելի չար որոմն էր, իսկ Սօֆիան նորա համար ամեն բոլի պատրաստ պարարտ հոգ:

Երբ որ ստորին ճեմելիքը եկայ՝ սպաների խումբը ազադակ, աղմուկ բարձրացուցած շրջապատել էր Դրօզդօվին, իսկ հեռուումը Սօֆիան նորան էր սպասում, երեսը հակառակ կողմը դարձուցած: Սպաներէն մինը ասաց.

— Դրօզդօվ երբ պիտի շնորհաւորենք քու օրինաւոր պսակը, ու ծիծաղեցաւ, հետն էլ ծիծաղեցան միւս սպաները:

— Օրինաւոր պսակի համար դեռ ևս ոչինչ ասել չեմ կարող, պատասխանեց Դրօզդօվը, բայց քաղաքական պսակս շուտ պատիւ կունենաք շնորհաւորելու:

Սպաները աւելի պինդ ծիծաղեցան, ու մի քա-

նիսը մինչև անգամ աղաղակեցին՝ «Կեցցէ թամբօվի մատակախանձը, կեցցէ առիացի դամբիկը»:

Ել մի հարցնէք թէ ինչ կրակի մէջ էր իմ հոգին: Լաւ է որ այս խօսքերը չհասաւ Սօֆիայի ականջը:

Բայց այս օրուայ «աւուրն չարը» այս ամօթալի միջնավէպով չի պիտի վերջանար: Մի դադտնի, անմեկնելի զօրութիւն ինձ քաշումէր դէպի Ասատուրադայի տունը, ուր թէև զիտէի, որ բացի անախորժութենէ ուրիշ բանի հանդիպելու չեմ, այսու ամենայնիւ ուղիղ գնացի այնտեղ:

Այս անգամ Ասատուրադան մենակ էր իր գրասենեակի մէջ: Մօտեցայ նորան. ձեռքս պարզեցի, բայց նա չգիտեմ, չտեսաւ թէ՛ չուզեց ինձ ձեռք տալու, միայն թէ իմ խոնարհ ողջունիս ունքի թեթեւ շարժումն քովը պատասխանեց:

Լուռ մունջ նստայ մի հեռաւոր աթոռի վրայ:

Ես տարօրինակ ստեղծուած եմ. երբ որ մարդիկ իմ սիրտը ցաւեցնեն, սաստիկ վիրաւորեն՝ բարկանալու տեղ, ես ևս առաւել կկակղանամ, կընկճուիմ, կոչնչանամ, մինչև անգամ ինքս պատրաստ եմ նորանից ներողութիւն խնդրելու, ուրիշ բանէ, եթէ իմ առջև թշնամանեն մի բարեկամիս, կամ մէկ անմեղ և մանաւանդ մի տկար մարդու. այն ժամանակ ես կը կատաղեմ, իմ բարկութիւնը չափ և սահման չի ունենալ. չգիտեմ որ տեղից վրաս քաջութիւն կուգայ և իմ վրէժը սոսկալի է, որքան որ դէնք ունիմ բոլորը հանդէս կը հանեմ: Ի՞նչու է այդպէս, ի՛նչ է

սորա պատճառը: — Սորա պատճառը այն է, որ ի մանկութենէ ինձ սովորեցրած չեն իմ ծնողքը ազօթքի ու հնազանդութեան հետ միասին նաև իմ միջի մարդկային արժանաւորութիւնը ճանաչելու և պաշտպանելու: Իսկ վերջերումը իմ ստացած լուսաւորութիւնը տուել է ինձ քաղաքացիի առաքինութիւններ, որոց թուին է նաև պաշտպանել անմեղին և տկարին:

Իմ տեղ մի անգլիացի կամ մի ամերիկացի լինէր, հազար անգամ թքած կլինէր Ասատուր-աղայի և Սօֆիայի երեսներին և Դրօզդովի թշերը ապտակներով կուռեցնէր. բայց ընդ նմին և ըստ արժանւոյն կպատուէր և կգնահատէր Կատեային, և ոչ ինձ նման օրը տասն անգամ փոքրողութեամբ նորա սիրտը կը կոտրէր: Ծիծաղ, ձեռքը շան նման լիզելը ոչ թէ խոնարհութիւն, այլ ամենազարշելի ցածութիւն և ամենանուրբ կեղծաւորութիւն էր: Տէր Աստուած, Տէր Աստուած, եթէ մեր հայկական բարոյականութիւնը լաւ զննես՝ որքան առաքինութիւններ մոլութիւնք պիտի ճանաչուին: Այս խորհրդածութիւնները արի իմ մէջ, քանի որ Ասատուր-աղան լուռ կեցած էր ու տէր ողորմեան համբոյսէր: Վերջապէս զլուխը բարձրացուց ու ասաւ ինձ.

— Խաբար ես, ախր մենք Սօֆիային պէտք է նշանենք. ուզող կայ:

— Հա՛, բարի սահալթի լինի: Կարող եմ իմանալ՝ որի հետ, ասացի:

— Էստեղ մէկ հարուստ պամեշչիկի տղայ կայ,

չգիտեմ մայթօւ է, թէ պօդփօլքովնիկ. մախլաս ջահէլ, սիրուն, բօյօվ-բուսով տղայ եմ, շատ հաւանել ա մեր Սօֆիային: Հէրը ասումեն, երկու-երեք միլլիօն ունի, տօտինկէն էլ եա էտքան, եա մէ զատ պակաս, զայրազ քանի քանի հազար դեսեթին հողից, լեսից ու Մոսկովի ու Պետերբուրգի եէքա եէքա տրներից: Մէկ խօսքով՝ շատ խօջա տղայ եա, թագաւորի էլ ասումեն, աչքի լուսն ա. գլարդիումն դուլլուղանըմ: Ի՞նչ ա, լաւ ա՛:

— Ինչո՛ւ չէ, շատ լաւ է, պատասխանեցի ես:

Էդա դա. դու ապա ինչ էիր թահմին անըմ, բաս Սօֆինկիս չի տայի մէկ պարտքի մէջ խեղդուած դուքանդարի, եա մէկ տկուր հայ չինովնիքի, էսի չէն առնիլ, ասաց, մատերին մի օտարտոի ձև տալով:

Ես ծիծաղեցայ ոչ նորա խօսքերի, այլ իրա Ասատուր-աղայի վրայ. բայց նա իմ ծիծաղի խակական միտքը չհասկանալով՝ ևս առաւել ոգևորուեցաւ:

— Դու ինչ ես կարծըմ, ես ինչ մարդ եմ, ինչ մարդու զաւակ եմ: Հօրս վրայ բան լսած չեմ, լսած չեմ Մկրտում աղայի անունը: Իմ հէրա էնպէս մարդ էր, որ սաղ Հաշտարխան նրա առաջ ձեռքերը խաշկապած կայնըմէր: Նրա նաւերը զղլբաշի տեղից դեպա մեր կողմերը ապրանք էին բերըմ, Էտտեղից էլ էնտեղ ռուսի ապրանք էին տանըմ: Մէկ օր խաբար բերան քի՛ էրկու նաւդ բաթմիշ ա իլիլ ծովի վրայ: Հէրս խոլոյն հրամայել ա տաւր օչխար տանեն ժամին դուռը մատաղ բաթանելու խալխին: Հարցրել են թէ՛

էդ ինչ աչքալուսանքի համար ա մատաղդ. նա ասել ա քի՛ շատ ուրախ եմ, որ էրկու նաւս ա բաթմիշ իլել և ոչ թէ տասն էրկուսը. էլի շահս մեծ ա: Էդ պէս զօջաղ մարդ ա իլել ողորմած հոգին: Մէկ օր էլ ենեռալներ, պալքօվնիքներ, մայեօռներ, չգիտեմ, յուր թագաւորի կենացը շամփացքի խմուճեն իլել. էդ միջոցին էլ հէրս կառէթօվ անցականում իլել էն տան դարշուից, ուր էդ մեծաւորները քէֆ էն անում իլել: Գուբէռնաթըռը որ փանջարից տեսնում ա հօրս՝ ձէն է տալիս թէ՛ «Նիկիտ Ամբաքումիչ, Նիկիտ Ամբաքումիչ՝ արի՛ էօտեղ, թագաւորի կենացը մէ բաքալ շամփացքի անուշ արս»: Հէրս էլ կառէթիցն պատասխան ա տալիս՝ «Յս չեմ գալ ձեզ մօտ, լաւն է նա՛ դուք կանպանիօվ էկէք իմ տուն սամավար տինիլ կը տամ, լաւ բաբաթի կը նստենք ու թագաւորի կենացը տաք-տաք չայ անուշ կանենք»: Մեր գուբէռնաթըռը կատողը ա: «Ո՞նց թէ թագաւորի կենացը չայ կը խմես. դու ինչպէս համարձակար էդպէս օրէնքի հակառակ խօսք բաց թողնելու բերանիցդ, չգիտես, որ թագաւորի կենացը մենակ կալելի ա շամփացքի խմել. ես հիմա քեզ փօղսուդ կը տամ, վրէժ դադաստան կը բանամ ու տնով-տեղով Սիբիր կուղարկեմ»: Հէրս բան չի ասըմ, գընըմա տուն: Գուբէռնաթըռը ինչքան որ բազմութիւն կայ մօտը, ամենին առնըմա, դուփ ու դուղ գալիս ա նրա ետնից, ուզում ա մարդուն մեղալամ կորցնի: Հէրս որ իմանըմա թէ գուբէռնաթըռը եկելա իրա տուն՝ իսկօյն հրամայըմա ներս բերել արծաթէ սամավարը և

սանդուկներից հանըմ ա պաչկա-պաչկա աստիգնացեաները, քցըմ ա մէջը ու վառըմ ա, ու եէքա սամավարը իւրշիւրշացնըմ ա մենակ աստիգնացեաներով: Գուբէռնաթըռը ու հետի մեծամարդիլը էսի որ տեսնըմ են, մընըմեն պելլված, էնպէս են զարմանըմ: Մկրտում աղէն, իմ հանգուցեալ հէրը, ասըմա էն վախտ՝ «Հիմա տեսցիք, պարոններ, որ իմ մէկ թաս չայը մեր ողորմած թագաւորի համար աւելի թանգագին, պատուաւոր ա, քան թէ ձեր բութիլը հինգ ուրբախոց շամփացքին»: Էն ժամանակ գուբէռնաթըռը ու հետի մեծամարդիլը տեսնըմեն, որ զորդ ա իլել մարդու ասածը քի՛ «Իմ չայը աւելի արժան է թագաւորին, քան թէ ձեր շամփացքին» - ինչու որ նոցա խմած մէկ երկու սթաքան չայի համար, նա էրել ա երկու հարիւր հազար մանէթից աւելի:

— Հիմի տեսցիլը, պարոն բժիշկ, թէ Սօֆիաս ինչ երեւիլ օջախիցն ա: Հիմի դու ու քու հոգին՝ ախր մարդ ինչպէս ղըմըշի էսպէս աղիղ մեծացրած աղջրկանը առնի ու մէկ հաաարակ մարդու կնիկ անի:

Յս տեսայ որ Ասատուր-աղայի հետ վիճելը բոլորովին աւելորդ էր. անհնար էր նորան սովորեցնել թէ ո՞ր դործը ազնիւ է և ո՞րը ոչ, ինչ բան մարդուս բարձրացնում է և ինչ բան ցածացնում. մեր կարծիքը իրար այնքան հակառակ էին, որքան որ կրակը ու ջուրը:

— Զատ լաւ, ասացի. բայց, Ասատուր-աղա, դուք հաւաստի՞ զիտէք, որ նորա հայրն ու հօրաքօյրը կենդանի են և այդքան մեծ հարստութիւն մի օր

նա պէտքէ ժառանգէ. արգեօք՝ այդ ամենը սուտ, հնարած պատմութիւններ չեն:

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես հայկարա-հայկարա խօսում, ի՞նչ ես լօրի կերած դուս տալիս. թէ որ ես մէկ բան եմ ասում, լաւ իմացած իլիը, որ նա հախ չեմ ասիլ: Նախանձը՝ մեծաւոր տղին թողնեմ ու աղջկանս քեզ տամ՝ որ դու էլ էն խեղճ երեխին տանէիր ու նրա օր-արեւը սեւացնէիր լուռտ ու օջուտ հաւաքունների մէջ: Զարմանք-մընքմեմ էս հայի փուչ խասեաթի վրայ, մէկ թէ իրանց ասածի պէս չի լաւ, թէ կուզ ջուրը գայ աշխարք տանի՝ նրանց համար մէկ բան ա: Պարոն Վարդան,՝ ամօթ աւ ամօթ, թող հայի էդ փչանալու աղաթը, մարդու չկամութիւն մի անիլ, փիս բան ա: Ես հազար անգամ ասելեմ ու էլի կասեմ՝ իմ Սօֆիսկայի նասիր ջահէլ տղայ չկայ հայերի մէջ. աղա-Վարդովանց մէջ խօ տղերք իսկի չկան, նրանցից ցած մարդու տալ չեմ զըյմըշըմ. ճառս կտրած ռուստերի զուման պէտքա աչքս շուռ տամ, — ի՞նչ ես ասում:

— Ասատուր-աղա՝ ի՞նչ ես բարկանում, ես քեզ դորա հակառակ ի՞նչ եմ ասել որ, ո՞վ կարող է քո, ձեռքից հայրական իբսուունքդ խլելու. միայն թէ...

— Ի՞նչ միայն թէ, ի՞նչ միայն թէ, ասաց ինձ տնսոյ տալով, էդ «միայն թէ»-ովդ ի՞նչ ես ուզում ինձ հասկացնել, Վլադիմիր Գոօգոօվը գնաց-եկա՝ քեզանից էլ պակաս մարդ իլաւ, զո՞ւրից մեռնի ոչ...

Էլի ուզում էր այս տեսակ անախորժ խօսքեր

ասելու, լանկարծ, թուրը ու կօշիկների խթանները շրխիշրխկացնելով ներս մտաւ Դրօզդօվը, շնորհալի ձեռով բարեւեց Ասատուր-աղային, ձեռքը սեղմեց ու մօտը նստաւ, և սկսաւ սուտ-զորդ Պետերբուրգի աւագորեարի և կայսերական դրան բաները պատմելու, ինձ ոչ բարեւեց և ոչ ձեռք տուաւ և Ասատուր-աղան մինչև անդամ աւելորդ համարեց մեզ իրար հետ ծանօթացնելու, ինչպէս որ այդ սովորութիւն է ամեն բարեկիրթ ընկերութեանց մէջ: Նոր էր ներս մտել Դրօզդօվը, մին էլ տեսնես, հակառակ դռնից, երեսը կարմրած, դէմքը այլալած, արեգակի նման աչքերը ցոլալով ներս մտաւ Սօֆիան ու այնպէս մտերմաբար բարեւեց նորան, ասես թէ նոքա չորս-հինգ տարուայ այր ու կին լինէին: Ասատուր-աղան էլ հայր Արրահամի գերը վրան առած՝ ներողամիտ աչքով ու անդորը ողուով նայում էր այս նոր Սահակի և Ռերեկայի վրայ:

Անձնապատուութիւնը, աղնիւ հպարտութիւնը պահանջում էին, որ ես թքէի ու դուրս գայի այս դարշելի որջէն. բայց, աւանդ, պատիւը ու հպարտութիւնը վաղուց թմբել էին մէջս: Ես զարմանումեմ թէ մինչև որ աստիճան մարդս կարող է ինքն իրան մոռանալ և ստորանալ: Հաստատուն կամք բոլորովին մնացած չէր մէջս. այնպէս կարծումեմ, որ եթէ այդ բոլորին Դրօզդօվը զար թքէր երեսիս կամ ապտակէր՝ ես լուռ կ'մնայի և համբերութեամբ կտանէի, միայն թէ ինձ չզրկէր Սօֆիայի երեստեսութիւնից: Ի՞նչ զգացմունք էր այս. սէր էր: Չեմ կարծում: Խեղա-

գարութեան նման մի ցաւ չէր արդեօք: Վերջին եւթադրութիւնս շատ հաւանական է. վասն զի բժշկական գիտութիւնը ամենեւին չի մերժում այսպիսի ժամանակաւոր, բոլորական խելագարութիւն, մանաւանդ բնութեամբ թույլ և սիրտը փափուկ մարդոց:

Յանկարծ Դրօզդովը գտակի մէջից մի փոքրիկ կապոց հանեց, եղալի աչքերով մօտեցաւ Սօֆիային ու ասաց.

— Յիմարդ, խնդրեմ ընդունեցէք ինձանից այս փոքրիկ ընծան:

Սօֆիան ուրախ-ուրախ առաւ կապոցը, դէմքի վերայ անպատմելի ուրախութիւն ցոյց տալով, մէջից դուրս հանեց մի փոքրիկ տուփ, ուր կար բռնատէղուկ օղ և մի քորոց: Ամենը միասին կարժէր վեց կամ եօթը մանէթ: Եւ նա, որի պարանը լիքն էր կաղնի մեծութեան մարդարիտներով, անգամանդներով, զմրուխտներով և ուրիշ գոհարներով, մի նաժըշտի վայելուչ ընծայի համար չգիտէր սրտի ուրախութիւնը ինչպէս յայտնէր:

— Ա՛խ, պարոն Դրօզդով, ինչպէս շնորհակալ եմ ձեզանից, ա՛խ, ինչպէս սիրուն բան է, ինչպէս ընտիր ճաշակ ունիք դուք:

Իսկույն մօտեցաւ հայրին, շուտ շուտ հանեց ականջներէն ու դէն ձգեց իւր օղերը, որոնք առ սակաւը երկու հազար կաթէին ու հազաւ այդ նորերը. իսկ քորոցը չգիտէր կուրծքի սր կողմը ցցէր՝ վեր, թէ ցած, աջ, թէ ձախ, ասես թէ խնայում էր ձեռքից հանելու:

— Ա՛խ, ինչ հիանալի զարդեր են, քանի՛ տուիք, որից գնեցիք, մինչև մահս դոցանից չեմ բաժանուիլ:

— Դնի համար մի հարցնէք, շատ չնչին փող եմ տուել, բայց գնեցի Կաւկասի կողմերից եկած մի կեղտոտ վաճառականից...

Այս վերջին խօսքը մի այնպիսի հասարակ, սովորական բառ երևեցաւ Ասատուր-աղային, որ ասես թէ նա ծնած օրից ուրիշ անուն չէր լսել հայի ազգութեանը: Բայց իմ համբերութիւնս սպառեցաւ: Տեղիցս ելայ:

— Պարոն Դրօզդով, ասացի, զիցուք թէ դուք մեր վաճառականներն չէք սիրում, ասում էք. զիցուք թէ ինձ էլ արհամարումէք. բայց դուք ինչ իրաւունք ունիք անպատուելու այն տունը, որ դուք գտել էք հիւրասիրութիւն, և աւելի քան թէ հիւրասիրութիւն՝ պատիւ և սէր. ա՛յդ է ապացոյցը ձեր աղնիւ ծնողաց զաւակ լինելուն, որով այս պարզամիտները (մատով ցոյց տուի Ասատուր-աղայի և Սօֆիայի վրայ) պարծենում են, այս է քաղաքավարութիւնը, որն սուրբ պարտաւորութիւն է ամեն սպայի...

— Պարոն, ասաց ինձ Դրօզդովը գոռոզութեամբ, դուք ինձ չէք ճանաչում. նմանապէս ես էլ ձեզ չեմ ճանաչում, և ինձ նման մարդը ամենեւին հարկաւորութիւն չունի ձեզ նմանների հետ ծանօթ լինելու, ուրեմն ձեր անտեղի հարցմունքը ես անպատասխան կ'ընդունեմ...

— Ախպէր, քո՛ւ դօրա ինչ, էլի սկսա՛ր... ասաց

Ասատուր-աղան. բայց ես նորա խօսքը բանի տեղ չգրի ու շարունակեցի ասելու Դրօզդօվին.

— Եթէ դուք ինձ նախատած լինէիք, ես ձեզ մարդապէս կարող էի ներել. բայց որովհետեւ մեր բոլոր վաճառականներին նախատեցիք...

— Միտք ունիք ինձ պատժելու, կտրեց խօսքս Դրօզդօվը:

— Պարոն Վարդան, խնդրեմ ձէնդ կտրիր, ասաց Ասատուր-աղան, թէ չէ ես...

Բայց ես դարձեալ նորա խօսքը բանի տեղ չի գրի և դառնալով Դրօզդօվին ասացի.

— Այո, կպատժեմ և սաստիկ կպատժեմ:

— Զոր օրինակ... ասաց նա երեսը սպրդնա՞ծ և շինծու ժպիտով թաքցնելով սրտի երկիւղը:

— Մենք կմենամարտենք, ասացի վճռողաբար, խօսք ծանր ծանր արտաբերելով, ասես թէ բառիս ամեն մէկ վանկը տապարի սուր սուր հարուածներ լինէին, ու բուռերս սեղմած Դրօզդօվի վրայ վազեցի, որ մի քանի ապտակ տամ: Դրօզդօվը հասկացաւ միտքս ու թուրը մերկացուց, ու մերկացուցած թուրը ձեռքին, քաշուեցաւ Սօֆիայի ետեւը՝ երեսը նորա ճոխ շինիօնի մէջ թաքցնելով: Ասատուր-աղան սաթէ կտուցով ծխամորչով — նա պապիրոս քաշելու սովորուած լինէր — վրաս վազեց:

— Պարոն Ասատուր, ասացի կատաղած, եթէ էլի մէկ քայլ ես արել դէպի ինձ, հէնց կեցած տեղդ կը խեղդեմ:

Սօֆիան բարկացած երեսը ինձ դարձրած ու

ձեռքերը բարձրացած՝ անվախ կանգնած էր առաջևս ու պատրաստ էր մինչև վերջին շունչը պաշտպանելու Դրօզդօվին:

— Գնա՛ կտրիր մեր տնից ցած հողի, ասաց ինձ. ինչ ես ուզում մեզանից. գնա՛ գնա՛, մենք քեզ ատում ենք. թքումեմ քու վրայ. այո՛ այո՛, ամենքդ էլ անպիտան էք, դու էլ անպիտան ես...

Մէկ րոպէ ես շփոթուեցայ, ձեռքերս թուլացաւ և լեզուս պապանձուեցաւ. բայց այդ շփոթս տւեց միայն մէկ րոպէ. ճիգ արի, ոյժս ժողովեցի և

— Օրիորդ, ասացի. եթէ այդպէս է՝ ես քեզ արհամարում եմ, դու անամթ ես, օրիորդի սուրբ անունը ափսոս է, որ քեզ նման ապականուածի վրայ լինի: Թող, մոռ և խայտառակութիւն այս անիծուած տան վրայ: Ու յետոյ խօսքս դարձնելով Դրօզդօվին, ասացի.

— Դրօզդօվ, դու ինձ հետ պիտի մենամարտիս, և որքան շուտ, այնքան լաւ...

— Ես չեմ մենամարտիլ ձեզ հետ, ասաց նա, ետեւ ու ետեւ քաշուելով:

— Զէ՛, կմենամարտիս, անասո՞ւն դու, ասացի ու վրան վազեցի:

— Զէ՛, չեմ մենամարտիլ, ասաց նա, ալժամ սաստիկ արգելուած է մենամարտութիւնը: Եթէ ինձմէն անբաւական էք, հաշտարարին յալտնեցէ՛ք:

— Ես քեզ կստիպեմ մենամարտելու, ասացի, վրան վազեցի և ապտակ տուի, բայց տարաբաղաբար, այդ միջոցին Սօֆիան այնքան մօտիկ կանգնած էր Դրօզդօվին, որ ձեռքս նորա երեսին կպաւ:

Ղինիօնը թուաւ գլխէն, Կրօղօվի ընծայած օղերէն մինը ականջէն պուկ եկաւ և գլորուեցաւ դէպի տան խորշը և խեղճ աղջկայ երեսին էլ հինգ մատիս հետքը կարմիր գոյնով տպուեցաւ: Տեսնելով որ Կրօղօվը պիտի ազատուի ձեռքէս, մի կողմ մղեցի Սօֆիային, բռնեցի նորա մերկացուցած, բայց դուլ թնրը, ու երեք չաղ ապտակներ ծեփեցի նորա թխլիկ թշերին:

— Հիմի կմենամարտիս, ասացի:

Այդ միջոցին Ասատուր-աղան սենեակից դուրս էր գնացել մարդիկ օգնութեան կանչելու. մինչև նա մարդիկ կժողովէր, մինչև կվերադառնար, ես սենեակից դուրս դնացի: Նախասենեակումը կանգնած էր Վատեան՝ վերարկուս ձեռքին:

— Ղօջաղ, Վարդան-ջան, ջան Վարդան, օխայ, մէկ էս ա, որ ջիգրէքս հանեցիր, ասաց և ուսերիս ձգեց վերարկուս: Աղա, էն դռնից մի երթալ, մարդիկ կան, կբռնեն. եկ էս գումանից դուրս գնա, և ցոյց տուեց այն դուռը, ուստի ծառաներն էին ելամուտ անում: Երբոր հեռաւոր դռնով Ասատուր-աղայի բնակարանից դուրս եկայ և մտայ փողոց՝ տեսայ շատ մարդիկ, որ ժողոված էին նորա տան առաջ:

Ղիտթս փարատելու համար մի զաբարդացիէ վարձեցի ձի և գնացի դէպի գերմանացոց կօլօնեան և մինչև գիշերուայ մութը աննպատակ չափ էի տալիս Տաք-Ջուրի շրջակայ սարերի, ձորերի ու անտառների մէջ: Սէս գիշերը անցած էր, որ քաղաք եկայ, մտայ սենեակս և այն գիշեր առաջին անգամ հանգիստ ոգւով մտայ անկողինս:

Յաւելի 8. Ինչէն:

Ահա քանի օր է, որ Խսէնթուքումն եմ մի հիւրանոցի սրուն սենեակի մէջ տեղաւորուած. բայց ո՞վ ինձ այստեղ բերեց-չգիտեմ: Ծառան ասումէ թէ՝ երեք օր ուշաթափ էի. բժիշկները կարծել են թէ անպատճառ կմեռնեմ, այնքան վտանգալի հիւանդ եմ եղել:

Վերջին անգամ որ Ասատուր-աղայի տանից աղմըկով կռիւով դուրս գնացի՝ բոլոր գիշերը անցուցի խոնաւ օդի մէջ և թեթեւ հագուած. գիշերը որ տուն եկայ յոգնած՝ իսկոյն քնեցայ, բայց միւս առաւօտ միայն գգացի, որ Վաւկասի անիծած դողցուցը ինձ բռնել է. հայլին մօտեցայ, տեսնեմ՝ երեսիս գոյնը մեռելի գոյն է: Զուտ-շուտ հաղւեցայ (բոլոր ժամանակը ատամս ատամիս չէր դիպչում, այնպէս դողումէի), մտայ Բօլթի դեղանոցը բաւականին մեծ քանակ քինաքինա կուլ տուի և գնացի Կրօղօվի տան առաջև կանգնեցայ ու սպասում էի նրա դուրս գալուն: Թէև ամբողջ երկու ժամ անպտուղ սպասեցի, բայց պատրաստ էի այլ ևս տասն երկու սպասելու, որ նորա լրբութիւնը անպատուհաս չթողնեմ: Փամը տասնին, տեսնեմ, սանդղտից ցած է իջնում նա: Ուրախութիւնիցս սիրտս սկսաւ սաստիկ բաբախելու: Երբ որ նա փողոց մտաւ, ես էլ իսկոյն եկայ կանդնեցայ նորա առաջև:

— Պարոն Կրօղօվ, դէնքտ հետդ է, հարցուցի, ժամանակէ մեր մենամարտութիւնը վերջացնելու:

— Պարոն, ես ձեզ արդէն պատիւ ունեցայ յայտնելու, որ չեմ մենամարտիլ, օրէնքը խստիւ արգելում է մենամարտութիւնը, պատասխանեց ցած ձայնով Դրօզդովը:

— Պարոն Դրօզդով, ասացի, բայց նոյն օրէնքովն նմանապէս սաստիկ արգելած չէր նախատինք անելու մէր վաճառական դասին, որն բացի օրինաւոր գործերէ ոչինչ արած չունի իւր կեանքի մէջ, եթէ դու մէկ օրէնքին այդքան հնազանդ ես, ինչո՞ւ միւսը այնպէս լրբաբար ոտնակոխ արիր:

— Ես չեմ մենամարտիլ, ասաց Դրօզդովը ու ձայնը ասես թէ արդէն փորկցն էր դուրս գալիս:

— Բայց ես քեզ կստիպեմ մենամարտելու, ասացի ես, ու արիւնս սկսաւ նորից եռ գալու:

— Զէք կարող ինձ ստիպել. օրէնքը ձեզ կդատապարտէ. ձեզ կբանդարկեն, կաքսորեն...

— Թող դնեն ինձ բանդ, թող աքսորեն ինձ, ասացի կատաղած, գնա՛ գանգատէ վրաս ո՛ւր և ուզես, ո՛ւր և ուզես, և սկսեցի կարկտի նման թափեցնել նորա թշերին, գլխին, ուսին, կրծքին, վզին, ապտակներ ու մուշտիկներ:

Երբոր վրէժս հանդարտացրի ու ձեռքս էլ թուլացաւ, Դրօզդովը գետնից բարձրացրուց ընկած գտակը, վրայի ճմուլած հալաւը յարդարեց, չորս կողմը նայեցաւ ու ասաց. «Լա՛ւ է որ ոչ ոք չտեսաւ» ու փախաւ:

Այն էր, որ նորան տեսել էի, էլ աչքիս չերեւեցաւ շատ երկար ժամանակ.

Կամաց-կամաց գնացի դէպի ճեմելիք և դժուա-

րաւ հասայ նստարանին: Երևի այդտեղ և եթ թալկացել ընկել եմ, և բարի մարդ գտնուել է, որ բերել հասուցել է ինձ այստեղ:

Յուլի 15.

Հիւանդութիւնս շարունակվում է. դուլիս ցաւում է. ականջներիս մէջ մէկ սամավարի խշխշոց է լսվում, մէկ զանգակի ձայներ. լեզուս պղտոր է. երեսիս գոյնը դեղնած՝ կանաչ ցուքով:

Ե՛հ, եղած-չեղածը մէկ մահ չէ՞. կմենիմ և կպրծնեմ աշխարքիս ցաւ ու դարդերից... Տէր Աստուած, Տէր Աստուած, միթէ պիտի մեռնիմ. տակաւին ի՛նչ տեսելել եմ, ի՛նչ կեանք վայելել եմ, որ այդպէս շտապով թողնեմ աշխարքս ու հեռանամ: Հինգ տարիս անցաւ ծանր աշխատանքի և կինամաշ չքաւորութեան մէջ. եթէ առջևս խաբուսիկ յոյսեր չլինէին՝ իմ կեանքը ինչո՞վ պիտի զանազանուէր յանցաւորի արգելանքից և կամ նորա բռնադբօս տաժանական աշխատանքից. միայն յոյսն էր, որ փոքրի շատէ պահպանումէր իմ ոգին և տալիս էր ոյժ ամենօրուայ զրկանքս համբերութեամբ տանելու. այժմ այս յոյսն էլ կորաւ. այսուհետեւ էլ ի՛նչ կապում է ինձ այս կեանքի հետ: Ես Սօֆիային չեմ մեղադրում իմ թշուառութեան մէջ և ո՛չ Ասատուրադային. նոքա ինձ երբէք ստապատիր յոյսերով սնուցած չէին: Ես Դրօզդովին էլ շատ չեմ մեղադրում. իմ դժտութիւնը Դրօզդովի հետ բոլորովին

ուրիշ աղբիւրէ բղխեցաւ, միայն թէ ոչ ոք չգիտէ
այդ: Որի համար կենամ. որին պետք է իմ կեանքը...
խսկ Կատեան... 25, Կատեան իմ սրտի մէջ այն-
տեղը չէ կարող բռնել, որն պիտի բռնէր Սօֆիան:
Ինչո՞ւ ինքս ինձի խաբեմ. ես Կատեային միշտ կը
սիրեմ ինչպէս բարեկամ, ինչպէս քոյր. բայց ինչպէս
կին սիրել չեմ կարող նորան. եթէ ասեմ թէ կսի-
րեմ, խեղճ աղջկանը խաբած կլինեմ: Մեր մտաւոր
զարգացումը զանազան է. մենք մին մինի հաւասար
չենք, նա ինձ ընկեր-կին, բարեկամ-կին լինել չէ
կարող, նա իմ ստրուկը կլինի. ստրուկին կարելի է
մեղքանալ, դէպի նա գութ ունենալ, խնայել, բայց
սիրել երբէք չէ կարելի. բայց նա ինձ սիրում է, և
ինչպէս քնքոյշ սիրով, արդար սրտով է սիրում...
Խեղճ աղջիկ: Ժամանակից ժամանակ միտքս է գա-
լիս, թէ որքան նա տրտումէր, երբոր ինձ փոքր ի
շատէ սիրում, պատում և գուրգուրումէին Ասատուր-
աղայի տանը և ինչ ուրախութիւն էր սկսում ցոլալ
նորա աչքերից, երբ ականերեւ արհամարանք էին
ցոյց տալիս նոքա ինձ:

Այս խորհրդածութիւնների մէջ էի, որ մի
հասարակ ուսւ մարդ ձեռքս մի նամակ տուաւ:
Քացի ծրարը, նամակը կարդալու չսկսած, ուզացի
իմանալ ո՞վ էր գրողը, նայեմ՝ ստորագրուած է Կա-
տարինէ Մերջանեան: Ա՛, աւացի, Կատեայիցն է
ուրեմն այս նամակը, նայենք ինչ է գրում:

Սիրելիս եղբայր Վարդան

Ես գիտեմ, որ հրամանքդ ձեռքդ հազիր փող

չունես Մոսկով և կամ քու տեղդ գնալու. եթէ երթաս
է՛լ իսկոյն ղուլլուդ չես գտնիլ, ուրեմն մի փոքր ժա-
մանակ փողի նեղութիւն պետքա քաշես: Ես էսպէս
միտք արամ, որ դու լաւն էնա ինձ պարտք մնաս,
քանց մինի-միւսի առաջ գլուխդ ծռես: Իդ պատ-
ճառով էս նամակիս մէջ տիրամ 200 ռուբլի (և
իրաւ որ նամակի հետ այդքան փող կար), որն ու-
նէիմ փայեած իմ ժալովնից: Ես դուրս եկամ աղա-
Ասատուրի տանից, հիմիկ գընըմեմ Հաշտարիան:
Խնդրըմեմ չի բարկանաս վրէս, որ համարձակեցայ
քու գործերի մէջ խառնըւելու: Ինձանից քոմակ ստա-
նալը դու քեզ համար ցածութիւն մի համարիլ. բալ-
քի մէկ օր էլ դու ինձ պետք գաս. «տաք հացը
փոխա», ասըմայ հայի խօսքը: Երեկի Ասատուր-աղի
տանը նրա աղջկայ Սօֆիայի նշանտուքը կատա-
րուեցաւ ֆլան Դրօզով աֆիցերի հետ. բաւական
շատ վայնենըներ կանչուած էին, հայ ոչ մէկ հոգի
չկար, քահանան էլ ռուսի էր. Աֆիցերները շատ
խման, շատ անհամ բաներ արան. իրանց էնպէս
պահըմ էին Ասատուր-աղի տանը, կարծես թէ դամ-
բաղըմը իլէին. Սօֆիայի երեսին էին ծիծաղըմ, ա-
սելով՝ «բաղդաւոր պսակի արժանի լինիս»: Դրօզովն
էլ փիս քցած էր. յետման ինձ հետ էլ ուզումէր
լըրբ վարվել. ամա ես շատ չի համբերամ, քեզ նը-
ման ես էլ նրան մէկ լաւ սիլլա տուամ ու փախամ,
հիմիկ գաստիննիցումն եմ, մէկ նումրա եմ փրոնել
առ ժամանակի, և մէկ սհաթից գնալու եմ Մինե-
ռալնը ստանցեն: Դէհ, մնաս բարով, Վարդան-ջան

դօշաղ կացիր. ումուտդ մի կտրիլ Աստուածանից, որ
ես էլ քու բաղդաւորութիւնդ լսելով միշտ ուրա-
խանամ:

Մնա՛ խոստէ՛ աղբիւն ա՛ կապուի՛նէ Մէջմէնէն:

Տա՛-Ջա՛ր

18** Յուլի 14.

Նամակաբերին որքան և աշխատեցայ Հարց ու
փորձ անելու Կատեայի մասին ինչ ու ինչ կարեւոր
գիտելիք, բայց նորանից ոչինչ չիմացայ, բացի այն
թէ՝ մի աղջիկ տուել է նորան այս նամակը և պա-
տուիրել է ինձ հասցնելու. ինքն էլ պատրաստուած
է եղել գնալու իւր քաղաքը. այժմ անշուշտ, Տաք-
Ջուրից դուրս ելած պիտի լինի: Աւել ոչինչ չկարո-
ղացաւ պատմելու, վասն զի ինքն էլ աւելի բան
չգիտէր: Այս էլ աւելացրեց նամակաբերը, որ աղջիկը
իրան էլ ընծայել է հինգ մանէթ:

Աչքերիս չէի հուսատում: Առանց այլ և այլու-
թեան այս նամակը Կատեայի իրա գրածն էր. բայց
ես հինգ տարուայ մէջ իմացած չէի, որ նա գրել—
կարդալ գիտէ: Ո՞վ և երբ սովորեցրել էր նորան,—
խելքս բան չէր կտրում: Ես սովորեցրած չեմ, այդ
շատ լաւ միտս է. եթէ Սօֆիան սովորեցնէր, ան-
շուշտ, հազար անգամ արդէն ինձ ասած կլինէր:
Երեւի ինքն իրան է սովորել, թաքուն առնելով Սօ-
ֆիայի գրքերը և պատի ետեւից լսելով Սօֆիային
ասածներս ու միտքը պահելով: Բայց այս փողը: Մի

լռեղճ նաժիշտ խնայողութեամբ, մտից կտրելով, կո-
կորդից խլելով, իւր աղքատին ռոճիկը կտէկ կո-
պէկի վրայ դնելով երկու հարիւր մանէթ դարձնել
(որ մի որբ աղջկայ համար ահագին գումար է) և
այդ հինգ տարուայ աշխատանքի պտուղը մի օտար
մարդու տալ—այս ո՞չ թէ սիրոյ, այլ կանացի դիւ-
ցականութեան նշան է: Ա՛խ, Կատեա Կատեա, ինչո՞ւ
քեզ ուշ ճանաչեցի. ինչո՞ւ իմ աչքերը մինչև այժմ
կոյր էին. որպիսի մեծ հոգի ունիս դու ամփոփած
մի համեստ անձնաւորութեան մէջ. որքան փոքր եմ
ես քու առջև...

Այժմ ես սկսայ կամաց կամաց հասկանալու, թէ
ինձ Տաք-Ջուրից Էստէնթուք ո՞վ բերած պիտի լի-
նէր, ո՞վ վարձած պիտի լինէր այս սենեակը և ո՞վ
պիտի ժողոված և սպասեղ բերած լինէր իմ առար-
կաներս:

Գնացի տանտիրոջ մօտ ու հարցուցի.

— Ասացէ՛ք, խնդրեմ, ինձ հիւանդ-հիւանդ ո՞վ
աջատեղ բերեց և ո՞վ վարձեց այս սենեակը:

Տանտէրս ասաց.

— Մի դեռահաս կնիկ բերեց ձեզ աջատեղ, վար-
ձեց ինձանից այս սենեակը և մի ամսուայ բնակա-
րանի և կերակրի վարձը կանխիկ վճարեց. չափ, շա-
քար, սուրճ, ճրագ, օճառ և այլն. նմանապէս նա
բերեց ձեզ համար: Ձեր կտուիքը նա ժողովեց,
տոկեց լուացարարին լուանալու, որի համար փողը
նմանապէս կանխիկ վճարեց նրան, և ամենիս խօտիւ
պատուիրեց, որ ձեզանից փող չպահանջենք, անհան-

գլխոտ չանենք ձեզ: Եթէ դուք ամսից աւելի մնալու լինիք՝ պատկանեալ փողը նա կհասցնէ մեզ: Բայց չառաց իւր անունը և աղաչեց որ նորա մասին ձեզ ոչինչ չասենք:

Այնպիսի քնքոյշ վարմունք, այսպիսի մարդավարութիւն, այսպիսի մարդասիրական ընթացք միայն կարելի էր կրթեալ եւրոպացի կնոջմէ սպասել: Բայց մի հայ աղախինէ՝ որի սպասաւորութիւնը մի հարուստ վաճառականի տան մէջ ոչինչով չի զանազանվում անբարոյականացնող ստրկութիւնից, առաջացած այդ ամենը, պէտք է յօժարել որ՝ գրեթէ մի անհաւատալի մեծագործութիւն է: Ես արդէն՝ դարեցայ Կատեայի վրայ նայելու ինչպէս մի հասարակ հայ կնոջ վերայ. ես նշմարում էի նորա մէջ երկու անդնահատելի յատկութիւններ՝ կորովամտութիւն և աղնիւ արիւն: Այդ կոպիտ կեղեի մէջ, եթէ աշխարք էլ ինձ հաւատացնէր, որ անագնիւ սերմ կայ՝ ես չէի հաւատալ: Մարդուս մէջ կան այնպիսի յատկութիւններ, որ պատահական և ստացական չեն, այլ ծննդական ժառանգութիւն են ծնողներից: Այժմ որ Կատեան աչքերէս հեռացաւ, ուրեմն նորա լիշատակը ինձ համար թանկ է՝ միտքս բերելով նորա ամեն խօսքը, վարքը և բնաւորութիւնը՝ սիրտումս գնահատելու նորան և բարձր դասելու: Բայց անագան ստրջութիւնից ինչ շահ. դուցէ միւս անգամ երբէք նորան չտեսնեմ. դուցէ նա ինձ արդէն արհամարհումէ ինչպէս անդգայ, ապերախտ և պակասամիտ մարդ: Ի՞նչ պէտք է մեղքս ինքս ինձմէն

թաքցնեմ, ես սեւ ապերախտութեամբ հատուցել եմ Կատեայի ամեն մի մարդավարի վարմունքը ինձ հետ: Չէ, ինքս ինձի խօսք եմ տալիս՝ հէնց որ առողջացայ, իսկույն գտնել այդ աղջկան և...

Սօֆիայի լիշատակը ոչ թէ ջնջուել է մէջս, ոչ. այլ նա երևում է իմ կեանքի թերթերի մէջէն իբր աղճատած, արատաւորած ու զգուելի թերթը, որ զրուած է իմ բարոյական անկումը, իմ ամօթալի ախտերը և իմ ամենամեծ թշուառութիւնը: Միայն այժմ ես լիապէս հասկացայ, թէ կիրքը մինչև որ աստիճան կտրող է մարդուն ոտորացնելու, կուրացնելու. ես միայն այժմ հասկացայ, որ սարսափելի անբաղդութիւն է այն ամուսնութիւնը, ուր լուհեմ սիրոյ տեղ թաղաւորումէ կտր կիրքը:

Յ. Ա. Լ. 29.

Երբ որ առողջութիւնս մի փոքր կազդուրուեցաւ՝ առաջին գործը այն եղաւ, որ նորից գնացի Տաք-Ջուր (Էստէնթուքից 12 վերսթ հեռի է), ամբողջ շաբաթ գործածեցի պտուելով Կատեային. էլ ոչ մի տուն, ոչ մի բնակարան, ոչ մի հիւրանոց, ոչ մի ծառայ, ոչ մի աղախին, ոչ մի կառապան չթողի, ամեն տեղ և ամենին հարցուցի, հարց ու փորձ արի, փնտռեցի, բայց չկարողացայ Կատեային գտնելու: Ո՛չ մի ձեպակառքի քօնդուքթօր և ոչ մի կառապան չկարողացաւ ինձ տեղեակ պատմելու թէ՛ այս ինչ նշաններով աղջկայ ուր և իցէ տարել է: Նա-

մականեր թուացի մերձաւոր իջլանները, հեռագիրներ քաշեցի դանադան քաղաքներ, բայց ոչինչ բաւարար պատասխան չստացայ. «չգիտենք, լսած չենք», ահա այս այն պատասխաններն էին, որն ես տանում էի իմ աղաչանքով լցուած ամեն մի նամակին: Կորնու կորնու ինձ համար Կատեան և ինձ չարժանացուց զէթ խօսքով շնորհակալիքս լսելու: Հաշտարխանցի բարեկամներս էս էլ ինձ ծանուցին, որ այդ անունով աղջիկ չեն ճանաչել երբեք և այժմ էլ Հաշտարխանի մէջ չկայ:

Թէև Կատեայի մասին ոչինչ տեղեկութիւն ստանալ չկարողացայ, բայց Սօֆիայի մասին շատ բաներ լսեցի և այժմ ևս հետզհետէ լսումեմ:

Այն օրը տեղի ունեցած չէ՝ նորա մատանեփոխութիւնը Դրօղդօվի հետ, բայց երեք օրից, ինչպէս որ Կատեան էլ յիշումէր իւր նամակի մէջ, մեծ խայտառակութիւնով կատարուել է: Աստուր-աղան ասել է Դրօղդօվին, որ «ես Հայեր հրաւիրելու չեմ. ես այսուհետև նոցա հետ ամեն բարեկամական և արենակցական կապերս կտրելու եմ. դու հրաւիրէ քու ծանօթներին և բարեկամներին իմ տուն, և միասին ուրախութեամբ կատարենք դուտերս հարսնախօսութեան ծէսը ռուսաց քահանայի օրհնութեամբ»: Իսկ Դրօղդօվը գնացել է մի քանի իւր նման սպաների մօտ և ծիծաղելով հրաւիրել է նոցա «մի ձօխ գիներբութի», որն պիտի կարապետէ նորա «քաղաքական ամուսնութիւնը». և քահանային պատուիրել է որ գալ և իւր տիրացուների հետ միասին «բա-

ղում ամբ» բարեմաղթէ Վլադիմիրին և Սօֆիային. մատանեփոխութեան մասին ոչինչ լիշած չէ: Թէև սպաները այդ օրը շատ խաչտառակ վարել են իրանց, բայց Դրօղդօվը աշխատել է թեթեւացնել նոցա յանցանքը՝ պատճառելով գինիի առատութիւնը: Այսպէս բոլոր տնեցիք խաբուել են և կարծել են թէ՛ օրինաւոր կերպով կատարուել է Սօֆիայի մատանեփոխութեան ծէսը և միսմտուել են:

Մի քանի օրից եկել է Դրօղդօվը Սօֆիայի մօտ և ասել է թէ՛ եթէ Հայրն իմանայ, որ ես մի հասարակ Հայ աղջկայ վերայ պետք է պսակուիմ՝ երբեք չի տալ իւր յօժարութիւնը և օրհնութիւնը, իսկ եթէ ես հակառակ նորա կամքին երթամ՝ անպատճառ կըրկէ ինձ այն միլլիօներէն, որն պիտի ժառանգեմ չես նորա մահուան. բայց եթէ ես դադտնի կերպով պսակուիմ և չետոյ գամ ընկնեմ նորա ոտքերը՝ նա ինձ կ'ներէ և չի՛ զրկիլ ո՛չ օրհնութիւնէն և ո՛չ ժառանգութենէն. ուրեմն՝ այժմ ձեզ ուրիշ բան չի մնալ անելու, բայց եթէ փախչել Փարիզ և այնտեղ պսակուել: Այժմ դժուարութիւնը այն է, որ ես այդ ճանապարհորդութեան համար փող չունիմ: Եթէ դու ինձ անկեղծ և մտերմաբար սիրումես՝ պարտաւոր ես ինձ մի աննշան զոհ բերելու, որ է՝ հօրդ զրամարկըը թաքուն բանալ և մէջից որքան կարելի է շատ փող առնել և ժողովել քու թանգագին զարդերը և ակնեղէնները ու գիշերով փախչիլ աանից»:

Սօֆիան առանց ընդդիմախօսութեան յօժարել

է նորա առաջարկութեանը, հաւաքել է իւր բոլոր
և մասամբ մօր ական և մարդարիտները, դրել է մի
արկղի մէջ, թաքուն բացել է հօր դրամարկղը, մի-
ջից հանել է քսան հազար մանէթ և նոյն օրը Գրօզ-
դօվի հետ միասին փախել են գէպի Ստաւրապօլ:
աջնտեղ մի պանդոկում մնացել են երեք օր և ապա
շինճու անցադրով գնացել են Փարիզ:

Հայրը իմանալով այս փախուստը (Սօֆիան բո-
լոր այս հանգամանքը նամակով յայտնել է նորան)
ամենեւին շփոթուած ու բարկացած չէ, այլ ընդհա-
կառական, անցնող-դարձողին պատմել է թէ՛ արիս-
տոկրատների մէջ այդպիսի ռօմանթիքական պսակը
շատ սովորական բան է և յաճախ կպատահի, և բո-
լորովին հանգիստ սրտով սպասումէ եղել իւր սիրե-
կան գոտեր և ազնիւ փեսայի վերադարձը քանի մի
շաբաթից:

Այստեղ վերջանումէ բժիշկ Վարդան Յուսիկեանի
յիշատակարանը, որ ես էստէնթուքի պառաւից գնե-
ցի տասնուհինգ մանէթով: Բայց, ինչպէս ներդա-
միտ ընթերցողս տեսնումէ, պատմութիւնը թերա-
կատար է մնում: Ինձ շատ հետաքրքրելի է իմանալը՝
արդեօք այս ճշգրիտ գէպը ինչո՞վ վերջացել է. ինչ
եղան աղնուահողի կատեան, թեթեւամիտ Սօֆիան,
Ասատուր-աղան և անբարոյական Գրօզդօվը. կենդա-
նի են մինչև այժմ, թէ՛ մեռած են, եթէ կենդանի
են՝ ուր են, ինչ վիճակի մէջ են. եթէ մեռած են,

արդեօք ինչը կարճեցուց նոցա կեանքը այդ ծաղիկ
հասակի մէջ (ի հարկէ բացի Ասատուր-աղայից).
նոքա էլի միմեանց հանդիպեցան, թէ՛ առ յաւիտեան
բաժանուեցան իրարէ և միւս անգամ մէկ մէկի երես
չտեսան:

Հայկական կեանքը ցայն աստիճան միաձև, ա-
ռօրէական և ճոնճրալի է, որ փոքր ի շատէս սո-
վորականէն դուրս կենցաղ վարող հայը միշտ շարժել
է իմ հետաքրքրութիւնը. ես միշտ ցանկացել եմ
իմանալու՝ ինչ է եղել պատճառը, որ նա ընդհա-
նուրի օրինակին հետեւած չէ և հայկական կեանքի
սովորական ճանապարհէն խոտորուել է: Այդպիսի ան-
ձինք, թէ՛ առաքինի լինէին և թէ՛ մոլեկան, միշտ
գրաւել են իմ կարեկցութիւնը:

Չատ հարց ու փորձից լետու, մի օր յանկարծ
յիշեցի, որ Ռուսաստանի բոլոր բժիշկների ցուցակը
կայ, որն ամեն ղեղադործ պարտաւոր է ունենալու:
Երբ որ այդ ցուցակը ձեռքս առի և այլուբենի կար-
գով դռայ Վարդան Յուսիկեանի անունը, կարդացի
որ նա Վ. քաղաքումը քաղաքական հիւանդանոցի
գլխաւոր բժշկապետն է:

Բժիշկ Վարդանի բնակութեան տեղը իմանալէն
լետ, արդէն դժուար չէր նորա և նորա ընկերների
պատմութիւնը տեղեկանալու. այժմ էր միայն մի
քաղաքավարի նամակ դրել նորան և հարցնել ման-
րամասն տեղեկութիւն տետրակի մէջ յիշած անձանց
մասին, որ և արի իսկ: Իսկոյն նստայ ու մի նամակ
գրեցի Վարդան Յուսիկեանին, որի բովանդակութիւնը

այս էր թէ՛ պարոն բժիշկ, քու լիշատակարանը պատահամբ ընկաւ իմ ձեռք, որի համար փող վճարելով իմ սեպկականութիւնը դարձրի: Բայց, ինչպէս գիտէք, լիշեալ լիշատակարանը պարունակումէ քու, Կատեալի, Սօֆիայի, Դրօղօվի և Ասատուր-աղբի կեանքի առաջին մասը, բայց ինչպէս շարունակուել է կամ վերջացել է մնացորդ մասը՝ ես չգիտեմ, բայց ինձ շատ հետաքրքրելի էր իմանալ այդ: Եթէ արքունական պաշտօնէդ ազատ ժամանակ ունիս, քեզ շատ կ'ինդրեմ, վրադ ծանրութիւն առնես, մանրամասնաբար գրես վերը լիշած անձանց կեանքի մնացորդը, ուստի ես կարողանալի եզրակացնել, թէ ինչպէս վերջացաւ ձեր յարաբերութիւնը: Քեզ խօսք եմ տալիս, որ այդ պատմութիւնը, ինչպէս և այն տետրակը, որ մօտս է, մարդոցմէ առ միշտ ծածուկ կ'մնայ (պատուական կարգացողս տեսնումէ, թէ ինչպէս ճիշտ կատարեցի խօստմունքս):

Այս էր իմ երկար նամակի բովանդակութիւնը: Երկու ամսից ստացայ մի փոքրիկ տետրակ և հետը մի նամակ, որն բառ առ բառ այստեղ առաջ կրերեմ:

Պարոն Սիւլի-՛՛.

Ձեր լիշած տետրակը իրաւ ես կորցրել էի, բայց չգիտէի որ նորան մոռացմամբ թողել էի Խոտէնթուքի հիւրանոցի պահարանի մէջ: Եթէ փող վճարել էք ու գնելէք՝ կնշանակէ որ նա ձեր անկողնապսելի սեպկականութիւնն է և ես իրաւունք չունիմ ձեզանից պահանջելու. ճշմարիտը ասեմ՝ հարկաւորութիւն

էլ չունիմ: Եթէ ձեզ պետքական է՝ պահեցէք ձեր մօտ. միայն թէ ցոյց մի տաք մարդոց. ես չուզէի որ հաշտարխանցիների բարոյական թերութիւնները, որն ես անխնայաբար մտրակել եմ, հռչակուին միւս հայերի մէջ, թէպէտ և զրաւոր կերպով մարդկութեան պակասութիւնները ցոյց տալը, բացի օգտէն ուրիշ բան յառաջացուցած չէ:

Թէև ինձ շատ դժուար էր մտքով վերանորոգել տխուր անցեալիս լիշատակները, բայց որովհետև դուք համոզիչ խօսքերով ինդրում էք ինձ՝ ես չկարողացայ մերժել ձեր խնդիրը, ուր դուք նիւթական շահ չունիք: Բայց եթէ այս նոր լիշատակարանիս մէջ հայկական լեզուի դէմ սխալներ գտնէք՝ շատ մի մեղադրէք ինձ: Այս քանի՛ տարի է որ ես ոչ հայի գիրք առել եմ ձեռս, ոչ հայի երես եմ տեսել և ոչ հայ ժամերգութիւն եմ լսել. միայն Կատեստ է, որ իմ հայ լինելը միտս է ձգում. եթէ նա չի նէր՝ կրօն, ազգային ծէսեր և աւանդութիւններ և հայոց լեզու—բոլորը ցնդած կ'լինէին իմ մէջէն:

Ձեմ ուզում ձեզանից թաքցնել. ես ստատիկ դառնացած եմ հայերից: Առաջները ես կարծումէի թէ՛ անհնար է հայ ազգի քահանայ և վարժապետ լինելը, այժմ տեսնումեմ, որ հայ բժշկին հայ քաղաքի մէջ պաշտօն վարելն ևս դժուար է, եթէ չասեմ անհնար է: Այդ ևս բաւական չէ, մի հայ աշխատաւորի հայ քաղաքի մէջ իւր գիտութիւնը մրշակելն ևս դժուար է: Ես ինձ համար մէկ առած եմ շինել, որի կաղմուածքը թէև բանաստեղծական ոճի

գեղեցկութիւն չունի, բայց նորա մէջ բովանդակած
իմաստը զուտ ճշմարտութիւն է: «Եթէ Հայից ապ-
րուստ սպասես, ունեցած քանքարդ անօգուտ կը
դարձնես»: Հայի մէջ գործող լինելու համար մէկ
կարի հարկաւոր պայման է պէտք, և այդ պայմանն
է՝ հարստութիւնը: Հարուստ հայը եթէ կամենայ, Հայ
Ժողովրդի մէջ միշտ օգուտ կրերէ, վասն զի Հայ
ազգը միայն հարստի խօսքին սովորել է հաւատա-
լու և հնազանդելու. չքաւորի խօսքը երբէք արձա-
գանք գտած չէ և գտնելու էլ չէ Հայի սրտի մէջ:
Երբ որ ես բժշկապետութեան հարցաքննու-
թիւնս անարտեցի, քանի քանի հայաբնակ քաղաք-
ներ գրեցի թէ՛ չէին կամենալ արգօք ինձ քաղա-
քական բժշկի պաշտօն տալ. և լոկոր նամակներս
անպատասխան մնացին: Երբ որ ուսաց քաղաքներ
գրեցի, գրեթէ ամենից հրաւերներ ստացայ, մինը
միւսից օգտաւէտ պայմաններով: Ես ընտրեցի Վ.
քաղաքը, ուր ահա վեց տարի է, որ փառքի, պա-
տուի և ճոխութեան մէջ ապրումեմ իմ փոքրիկ Հայ
ընտանիքովն: Բայց ինչո՞ւ ես այս մասնաւոր նամա-
կիս մէջ թափումեմ իմ սրտի ցաւն ու դարտը. եր-
կու տետրալներումը բաւականին գրել եմ այդ ձան-
ձրալի նիւթի վրայ... Կատեա՛ս ձեզնից հոգեով չափ
շնորհակալ է, որ դուք նորա և իմ կեանքովս հե-
տաքրքրվումէք:

Ողջ ու յաջող եղէք:

Բժ. Վարդան Յուսէփեան:

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՏՐԱԿ

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՏՐԱԿ

Ամիս ու կէս իրօք պտրելով Կատեալին և ամեն աշխատանքս կորած տեսնելով՝ ես բոլորովին ատենցի կեանքը, վասն զի կեանքը մեզ այն ժամանակ է քաղցր, երբոր նա մէկ թանգագին էակի կամ մէկ քաղցր յոյսի հետ կապուած է. իսկ եթէ ոչինչ սուրբ կապեր չունի՝ կեանքը դառնում է մարդու համար անտանելի բեռ:

Մի օր տխուր նստած էի սենեակիս մէջ և ուսանողական տարիներս չիշողութանս առջև կարգաւ անցնում էին, յանկարծ պրօֆեսսորներիցս մինի խօսքը միտքս եկաւ թէ՛ «ձանրոյթի դէմ ամենահզօր դեղը աշխատանքն է»: Իսկոյն մտքիս մէջ խորհուրդ ծագեցաւ. «արի՛ նորից գնամ Մոսկով, ասացի ինքս ինձի, շարունակեմ ուսումս և բժշկապետի հարցաքննութիւն տամ: Եթէ մի առանձին շահ էլ չունենամ դորանից, զոնէ կըմեղմացնեմ ձանձրոյթս ու վիշտս, որ մաշում են իմ կեանքը»: Ինչպէս ասացի, այնպէս էլ արի: Նոյն երեկոյին ժողովեցի իրեղէններս, դրի պալուսակիս մէջ, միւս առաւօտ կանուխ զարթեցայ, թէյս խմեցի ու ընկալ ճանապարհ: Չորս օ-

րից հասայ Մոսկով, Մոսկով-գետակի միւս կողմը վարձեցի բնակարանս և վերանորոգած աշխուժով սկսայ մասամբ քաղուածք անելու բժշկական գիտութեան առարկաները և մասամբ այցելելու լսարանները և մասամբ թեթեւ վարձատրութիւնով մերձաւոր թաղերի հիւանդներին դարմանելու։ Ստացածս շատ չէր, բայց իմ այն ժամանակուայ սակաւապետ կեանքիս համար բաւական էր։ Ժամանակիս մեծ մասը անցնում էի սովորելով։ Այդ միջոցին շարադրութիւնն էլ բաւականին յառաջացել էր։

Բժշկապետութեան աստիճան ստանալու համար եմ ինքս ինձի երկու տարի ժամանակ էի որոշել տարի ու կէսը պարապելու և հարցաքննութիւն տալու, իսկ մնացած կէս տարին ուսումնական շարագրութիւնս գրելու, մշակելու և պաշտպանելու համար։ Ետքի ու կէսը անցել էր և ես մի քանի առարկաներէ հարցաքննութիւնս յաջողակ տուել էի։ Այդ միջոցին մէկ աշնան գիշեր յանկարծ դուռս ծեծեցին և հրաւիրեցին ինձ մի ծննդականի մօտ։ Հիւանդը չբաւար էր. ետեւէս կառք չէին ուղարկել, և որովհետեւ հէնց այն օրը կրկնակօշիկներ կարկատելու էի ուղարկել՝ ստեպուեցայ թաց ու ցխոտ փողոցների միջից բարակ կօշիկներով անցնել։ Երկու ժամ չարջարուելից լիտ, երբ նորածինին ընդունեցի ու առաւօտեան ժամը երեքին ազատուեցայ։ Հիւանդից, զարձեալ ստիպուածէի ռադով տուն վերադառնալու, վասն զի այդպիսի ուշ ժամանակ Մոսկովի հեռաւոր և սակաւամարդ փողոցների մէջ երբէք կա-

ռապաններ չեն լինում։ Իմ անբաղտութիւնից վերեւից էլ մանր և սառն անձրեւ էր գալիս, վրայիս բոլոր հալաւը, կօշիկներս, գոլբաներս թաց էին, ջուրը, ինչպէս ասումեն, մինչեւ ոսկորներս էր հասել։ Երբ որ տուն եկայ, թէեւ իսկոյն հագեցաւ, սրբբուեցայ, կտաւիքս փոխեցի, անկողինս մտայ ու տաք-տաք ծածկուեցայ, բայց բանը բանից արդէն անցել էր. մէկ սրտալի դողում էի, մէկ կրակի մէջ էրլում էի, բոլոր գիշեր քուն չեկաւ վրաս ու անդադար բանդադուշում էի... էլ ոչինչ չեմ յիշում։ Երբ որ նորից աչքս բացի, ինձ տեսայ պառկած քաղաքական հիւանդանոցի մէջ։ Եօթը օր (մօտիւ պառկած մէկ հիւանդի ասելովն) բժիշկները ամենւին յոյս ունեցած չեն, որ ես կենդանի կմնամ։ մահճակալիս տախտակի վրայ գրած էր լատիներէն Typhus recurrens, որն այդ միջոցին Մոսկովի մէջ օտարիկ կոտորած էր անում։ Ես, ինչպէս տեսնումէք, թէեւ չմեռայ, բայց իմս էլ ինձ հասաւ. մարմինս բոլորովին հալել էր. վրաս մնացել էր միայն ոսկոր և կաշի. եթէ ինձ կշռէին՝ փոք ու կէս կամ կլինէի, կամ ոչ։ Այսպէս անցան աշունը և ձմեռը և սկսեցաւ զարունը. բայց իմ տկարութիւնս անփոփոխ մնաց. ոչ վատթարանումէր առողջութիւնս որ մեռնէի, և ոչ բարեօքումէր, որ ազատուէի հիւանդանոցի անտանիւի օդէն, սպասաւորների ձանձրալի երեսներէն և իմ հիւանդ ընկերների սրտմաշուկ պատմութիւններէն, — ամենքը ինձ իրանց միւսնոյն ցաւերն ու դարտերն էին պատմում

ամեն օր, ասես թէ իմերը ինձ բաւական չէին։
 Վերջապէս հասաւ ապրիլ ամիսը, ձիւնահալքը
 սկսեցաւ. արեգակը արձակեց իւր կենսատու ճառա-
 գայթները դետնի վրայ. երկաթի նման կարծր սա-
 ռոյցները լուծուեցան և քայքայուեցան. ձիւները
 հալեցան ու խոխոջալով հեղեղներ կազմեցին ու գլո-
 բուեցան դէպի գետը, օդը լցուեցաւ տեղափոխիկ
 թռչունների և հաւերի ձայներովը, որոնք օրհներ-
 գում էին նորածին դարնան գալուստը. ձիւնի տա-
 կից գլուխները բարձրացուցին ձիւնածաղիկը, արջի
 ականջը, մանիշակը, վայրի քրքումը, ու բիւր տե-
 սակ դալարիք և ծաղիկներ։ Վեր, վայր, աջ և ձախ
 — ամեն տեղ ուրախութիւն և բերկրանք էր. միմի-
 այն իմ սրտումը իւր արմատները խոր տարածել էր
 վիշտը։ Ո՞վ իւր ուշքը պիտի դարձնէր մի խեղճ
 պանդխտի վրայ, ո՞վ պիտի հոգար նորա մասին, ո՞վ
 մի թեթեւ ախ պիտի քաշէր նորա անբազու վիճակի
 վրայ։ Լուռ և անտրտունջ արագ քայլերով մօտե-
 նում էի անաջլուս վաղ փորած գերեզմանին։
 Մի այսպիսի պայծառ օր թոյլ տուին մեզ հիւ-
 ւանդներին. ման գալու հիւանդանոցի պարտէզի ու
 բակի մէջ։ Զբօսնելու ժամանակ յանկարծ տեսայ մի
 գեղեցկակազմ, թանդաղին հալաւներ հագած կին,
 որ հեռուից ուղիղ դէպի իմ կողմն էր գալիս. եր-
 կու աղախինն էլ կտաւիքով լցրած մի անհղին կո-
 դով բերում էին նորա ետեւից. երբ որ կինը ինձ մօ-
 անցաւ, աչքերիս չհաւատացի, կարծում էի թէ՛ ե-
 րազիս մէջն եմ. «Կատեան, անսացի, այդ դ՞ու ես,

նորեղից ես գալիս, ինչ դորձ ունիս այս անիծած
 տեղը, ուր ամեն ծակ ու ծուկ զանազան տեսակ
 մահերով է լցուած»։ Իմ ձայնս երևի շատ փոխուել
 էր և խաղոտ էր դարձել, որ Կատեան լսելով սաս-
 տիկ վախեցաւ։

— Տէր Աստուած, ասաց Կատեան. Վարդան՝
 միթէ դուք էք, միթէ դուք այստեղ էիք. այս ինչ
 ողորմելի վիճակի մէջ էք. այս ինչպէս նիհարել
 էք. եթէ անունս չի տալիք, եթէ հետս չխօսէիք,
 տասր տարի էլ որ ձեր երեսին նայէի՝ չէի ճանաչիլ,
 — այնքան փոխուել էք։ Ի՞նչ կերպով ընկաք այս-
 տեղ, ինչ պատահեցաւ ձեզ»։

Եւ համառօտ խօսքով պատմեցի նորան վերջին
 երկու տարուայ իմ զլխով անցած ամեն բաները.
 Կատեան ինձ լսելով թաշկինակը անդադար աչքե-
 րին էր տանում և սրբում էր արտասուքը։ Տեսնելով
 նորա անկեղծ արտասուքը, ես էլ շատ լացի այն-
 տեղ։ Վերջապէս Կատեան ինձ ասաց.

— Պարոն Վարդան, գիտէ՞ք ես ինչ եմ ուզում
 ասելու. ձեր այստեղ մնալը անհնար է. այս հիւան-
 դանոցի մէջ (սորա հանգամանքը ես շատ լաւ գիտեմ)
 չեմ ասում որ դուք կմեռնիք — Աստուած մի արաս-
 ցէ —, բայց երբէք, ինչպէս որ պետքէ, չէք կադու-
 բուիլ և չէք առողջանալ։ Ո՞րքան կարելի է շուտ պի-
 տի փոխել թէ՛ ձեր բնակարանը, թէ՛ կերակուրը և թէ՛
 բոլոր ապրուստը։ Ես իսկոյն կերթամ, կխօսիմ այս
 մասին զլխաւոր բժշկի հետ...

— Կատեան, ասացի, ինչ որ ասուես՝ շատ լաւ

է, ես քեզ հետ չեմ վիճիլ. բայց դու գլխաւորը ինձ չպատմեցիր, ինչպէս պատահեցաւ, որ դու միւս անգամ յայտնուեցար Մոսկովի մէջ... Ես քու հետքը Տաք-Ջուրումը կորցրի, դու այնտեղից ո՞ր գնացիր և այս երկու տարին ո՞ր էիր և ի՞նչ էիր անում:

Կատեալի պատմածի համառօտութիւնը այս է՝ որ նա երբ որ ինձ տեղաւորեց Խոսէնթուքի հիւրանոցի մէջ, նոյն օրը նստաւ շոգեկառգ և ուղիղ գնաց Մոսկով: Ի բնէ առողջակազմ ու աշխատասէր լինելով, նա Մոսկով հասած-չհասած պտրել է աշխատանք և անյապաղ մտել է մի Փրանսիացի լուացարար կնոջ գործարան: Փրանսիացի կինը առաջին ամսուայ վարձ նշանակել է նորան երեք մանէթ. երկրորդ ամիս, տեսնելով՝ Կատեալի հմտութիւնը, ժրաջանութիւնը և պարտաճանաչութիւնը, կրկնապատկել է նորա ռոճիկը. չորս ամսից Փրանսիացի կինը իւր բոլոր բանւորների վրայ կարգել է վերատեսուչ և նշանակել է քսան և հինգ մանէթ ռոճիկ. այսպէս շարունակուել է այլ ևս երեք ամիս: Յանկարծ Փրանսիացից նամակ է ստացել, որ նորա մերձաւոր հարուստ ազգականներից մինը մեռել է, բայց մահից առաջ նորա անունով կտակել է իւր բոլոր ինչքը ու փողը: Որովհետև այս եօթն ամսուայ միջոցին Կատեան իւր հաւատարմութիւնով, ժրաջանութիւնով և քաղաքավարութիւնով կարողացել է նորա սիրտը սաստիկ զրաւելու, այդ պատճառով, ի նշան իւր բարեկամութեանը իւր բոլոր գործարանը շատ աժան, գրեթէ չնչին գնով ծախել է նորան, և

ինքը գնացել է իւր հայրենիքը: Թէև այս գործարանը Փրանսիացի կնոջ ձեռքին մեծ անուն է ունեցել, բայց Կատեան իւր խոհեմ ընթացքովն կարողացել է շատ ու շատ աւելի բարձրացնելու Մոսկովի մէջ, այնպէս որ՝ քառապատկելով զովորների թիւը, ընդ նմին և քառապատկել է իւր արդիւնքը: Այժմ նորա գործարանին քսան հազար մանէթ տուող գնող կայ: Այս է համառօտիւ Կատեալի պատմութիւնը այս երկու տարուայ միջոցին, երբ մենք երկու տարի առաջ Տաք-Ջուրումը միմեանցից բաժանուեցանք:

Երբ որ երկուսս բաւական լացինք և տխրեցանք, ես հարցուցի Կատեալին՝ «բայց միջ հիւանդանոցումը դու ինչ գործ ունիս»: Նա ինձ ասաց որ՝ կտպալով առել է ո՛չ միայն այս, այլ և շատ հիւանդանոցների, արքունի վարժարանների և ուրիշ հաստատութիւնների կտաւիքի տարեկան լուացքը. ունի հարիւր յիսուն վարձկան, որոնք գիշեր ցերեկ աշխատում են նորա գործարանի մէջ. իսկ այժմ այս մեծ կողովովը լուացած կտաւիք է և պիտի ստանայ իւր ամսական վարձը:

— Այժմ, աւելցուց նա, ես կերթամ հիւանդանոցի վերատեսչին, ստանալիքս կստանամ և քու մասին ևս կիօտեմ: Դու հանգիստ սպասէ մինչև իմ գալս: Եւ գնաց:

Այսպէս՝ Նախախնամութիւնը նորից մօտեցուց մեզ, և ես արդէն նախազգում էի, որ Կատեան իմ կեանքի մէջ մեծ դեր պիտի խաղայ և ինձ համար պահապան հրեշտակ պիտի լինի: Եթէ իմ մէջ չլի-

նէր այն խստելի նախապաշարմունքը, որ թանձր քօղով ծածկումէր աչքերս, ես պէտք է վաղուց նկատած լինէի, որ մի գերբնական զօրութիւն օրէ օր աւելի և աւելի մօտեցնումէր մեզ մին մինի, և ասես թէ մենք անդուստ ի վերուստ միմեանց համար աշխարհ էինք եկած: Իմ ժամանակաւոր կուրութիւնը պատճառ եղաւ իմ այսքան տանջանքին:

Հազար անգամ արդէն ես պատրաստ էի ընկնել Կատեալի ոտերը և խնդրել թողութիւն իմ կատարած ամեն կոպտութեան համար. բայց մի բան ինձ կանգ առնել էր տալիս. Կատեան չէր կարող կարծել, որ ես ծունր եմ դնում ոչ նորա անձին, այլ նորա ունեցած հարստութեանը առաջը. չէր կարող նա մտքի մէջ այսպէս խորհել՝ «Քանի որ ես մի աննշան, փոքրաւոր աղջիկ էի՝ դու ինձ արհամարումէիր, վրաս նայելու անգամ չէիր արժանացնում ինձ, և երբ որ դու փայլուն յոյսերիդ մէջ սխալեցար, երբ ես քեզ օգնութեան ձեռք կարկառեցի, երբ ակաները փաստերով ցոյց տուի, որ քու կարծածի չափ անպիտան, անարժան աղջիկ չեմ, այն ժամանակը դու սկսար առջևս սողալու»: Ի հարկէ, եթէ նա այսպէս կարծէր կամ ասէր՝ պիտի մեղանչէր իմ առաջըս, վասն զի ես երբեք հարստութեան առջև ծունր դրած ու երկրպագութիւն արած չեմ. բայց միայն կանանց արտաքին փայլէն խաբուել են իմ աչքերը և ես այնքան խորագիտութիւն ունեցած չեմ, որ կոշտ կեղևի տակից նշմարեմ թագուցած թանգագին ակը: Անդրկովկասի կիսավայրենի քաղա-

քաղիւղի մէջ մեծացած, աչքս ճոխութեան և զեղխութեան փայլին չընտելացած, կեանքի ամեն գեղեցկութիւններէն զրկած՝ միթէ զարմանալի բան է, եթէ Սօֆիայի արտաքին փայլը ինձ լուսաւորութեան արգասիք երևէր ու ես բոլոր պատանեկական եռանդովս անձնատուր լինէի նորան, ինչպէս մէկ չնաշխարհիկ եթերական էակի: Սիրելու համար պէտք է բաւականի հոգեկան զարգացումն. արդեօք ունէի ես այդ, իսկ մարդուս կիրքը շարժելու համար—կիրքը՝ որ շատերը, ու գրեթէ ամենքը մեր համագիտներէն ընդունումեն զուտ սիրոյ տեղ—պէտք է դեռահաս տարիք, եռացող արիւն, երեսի նախշուն տիպարք, աղուաշ աչքեր, թարմ թշեր—ահա պատրաստ է ասիական սէրը, որի համար վարդն էլ իւր թերթիկները բացումէ, սոխակն էլ արևազալից մինչև արևի մուտքը հնչեցնումէ իւր դալլալիկները, սիւզն էլ հրեշտակի բերանից դուրս եկած ման ու ման է զալիս դալարազարդ ծառի պտուտը...

Ի հարկէ ես այժմ զարշումեմ Սօֆիայից, և այդ զարշանքի մէջ կայ կշիռ և գիտակցութիւն. ես և միայն ես գիտեմ, թէ մինչև որ աստիճան անբարոյական, անուղղայ ու թշուառ արարած է նա. ես հրաժարվումեմ այն զգացմունքներէն, որ անխոհեմաբար սնուցանումէի մէջս գէպի նա... Բայց այդ ամենը կհաւատայ արդեօք հարստացած և իւր գինը արդէն ճանաչող Կատեան... Տէր Աստուած, Տէր Աստուած, ինչպէս անբաղտ մարդ եմ ես. իմ սիրտը տակաւին սիրոյ համը—հոտը չառած՝ պիտի ջախ-

Ջախուի և անպտուղ թառամի: Ինչո՞ւ, ինչո՞ւ: Մի՞թէ քսան Հինգ տարեկան Հասակիս մէջ ես արդէն աշխարքէս խաբուած, նորա ամէն քաղցրութենէն զրկուած պիտի Համարիմ ինքս ինձի: Ինչո՞վ մեղանջել եմ մարդոց առջև: Կատեան վաղուց ինձ սիրում էր, և իմ Հոգիս վկայում էր, որ նա մի օր ինձ պիտի յաղթէ, ինձ էլ սիրել պիտի տայ իրան— ինչպէս որ կատարուեցաւ իսկ—: Բայց արդեօք մի օր նա իմ երեսով չի տալ այսքան ժամանակուայ սառնութիւնս դէպի նորան և ձգտումս դէպի Սօֆիան. նորա Հոգու մէջ բուն չի դնի արդեօք յաւիտենական կասկածը, որ իմ սիրտը կիսուած է արդէն, կուսական անարատութիւն չունի... Ո՛չ, ո՛չ. Կատեան թող վստահ լինի (այս ամենը ես նորան Հէնց այսօր կասեմ), որ իմ սիրտը ամբողջ է, կիսատ չէ. ապականուած չէ. այո՛, Սօֆիան նորան խոցոտեց, բայց չի կտրեց ու կէսը Հետը չի տարաւ: Այժմ իմ սիրտը բոլորովին բուժած է, ամբողջ է ու ազատ է. որին որ ես կուտամ՝ ամբողջ և առողջ կուտամ և կուտամ Ի Հարկէ... Կատեանին, վասն զի...

Այդ միջոցին Կատեան ուրախ դէմքով մօտեցաւ ինձ:

— Դէհ, սիրեկան Վարդան, գնա՛ ներս և պատրաստուիր. ես կերթամ քեզ Համար ինչ-ասես Հարկաւոր բաներ կպատրաստեմ և իսկոյն կվերադառնամ, որ քեզ ազատեմ այս ապականուած, ձանձրալի տեղէն, որ քու կեանքը ամեն ըոպէ աւելի և աւելի թունաւորում է: Չատ Համբերել ես, էլի մի փոքր

Համբերէ՛. սիրտդ պինդ պահէ՛. զուարթ կանց. տկարութիւնդ թող չի ընկճէ քեզ. միայնակ եմ, անտէր եմ էլ մի ասիլ. երկու առողջ ձեռքեր ամեն օր կաշխատեն քեզ Համար և մէկ տաք սիրտ էլ ամեն ըոպէ պատրաստ է քու արիւնաթոր, Հիւանդոտ սիրտը գրկելու և նորա մէջ կենսատու ջերմութիւն մտցնելու...

— Կատեա-ջան, Կատեա-ջան, մի՞թէ ես արժանի եմ քու այդքան գորովին, ասացի ու ոտքերին փաթաթուեցայ. Կատեա՛, մի՞թէ դու ինձ կարող ես ներել: Մի՞թէ ես արժանի եմ, որ իրաւունք ունենամ ուղիղ աչքիդ մէջ նայելու. մի՞թէ դու բացի արհամարանքէն ուրիշ բան կը զգաս դէպի ինձ: Չէ՛ չէ՛, դու ինձ մի խաբիլ, դու ինձ երբէք չես սիրել, վասն զի ես քու սիրտը խոր խոցել եմ, ասացի և երեխայի նման լալիս էի:

— Ի՞նչ իլաւ քեզ, ի՞նչ իլաւ, Վարդան-ջան, երեխայ մի լինիլ, մարդիկ կան, նայում են մեր վերայ, ամօթ է, տղամարդ իլիր, զօջաղ կանց, այդ ի՞նչ փոքրողութիւն է, ու գրկեց ինձ, զետնէն բարձրացուց. նիստ աչտեղ, Հանդոտացիր, (նստեցուց ինձ մի մօտաւոր նստարանի վրայ): Դու ինձ ի՞նչ վնաս ես արել, երբ և ինչո՞վ ես իմ սիրտը ցաւեցրել. ընդհակառակն, դու դէպի ինձ միշտ մարդասէր և քաղաքավարի ես եղել: Եթէ երկու տարի առաջ Հաւանել էիր Սօֆիային՝ մի՞թէ այդ մէկ յանցանք է. Սօֆիան չի կարողացաւ քեզ Հասկանալու և սիրելու՝ այժմ ես եմ քեզ սիրում: Տխրելու, լա-

լու, յուսահատուելու տեղ. դու, ընդհակառակն, պէտք է ուրախ լինիս և զուարճանաս: Դէհ, երեսայ մի լինիլ, ղօջող կաց. ես շուտ կվերագառնամ ու կառնում, կտանեմ քեզ: Ասաց ու համբուրեց ճակատս. ես առի նորա ձեռքը երկար և տաք համբոյր կրնքեցի վրան:

Կատեան գնաց. ես էլ մտայ հիւանդանոցի դահլիճը, հրամայեցի հալաւներս բերելու—այնտեղ արդեն գիտէին, որ ես դուրս պիտի գամ այսօր—, հաւաքեցի իրեղէնքս, դրի պալուսակիս մէջ, ինքս էլ հագուեցայ: Բոլոր հալաւներս պարկի նման կախկախ էին վրաս, ցայն աստիճան նիհարացել էի: Փամ ու կէս անցած-չանցած Կատեան եկաւ, միասին նստանք կառք ու գնացինք:

Կատեան ինձ համար մի մեծ, մաքուր, փափուկ կահկարասիքով զարդարած սենեակ էր վարձել. թէյ, սուրճ, ճաշ, ընթրիք—բոլորը հետը. ամեն օր նշանակած ժամանակին այցելումէր մի գերմանացի բժիշկ և դարմանումէր ինձ: Բժշկի խնամքը, բնակարանիս մաքրութիւնը և յարմարութիւնը, կերակուրների առատութիւնը և մանաւանդ Կատեայի յաճախ այցելութիւնը շուտ վերագարձուցին իմ կորուսած առողջութիւնը, այնպէս որ մի շաբաթից ես արդէն սենեակիս մէջ ազատ և հաստատուն քայլերով կարողանումէի մանգալ, երկու շաբաթից՝ օրէնք քանի մի ժամ թոյլատրած էր ինձ քաղաքական պարտէզների և ճեմելիքների մէջ զբօսնելու. իսկ մի ամսից արդէն կատարեալապէս առողջացայ:

Մի օր Կատեային ասացի՝ «Կատեա՛ ես վաղուց ուզումեմ՝ քեզ մի գաղտնիք յայտնելու, բայց չեմ համարձակում...»

— Ասա, տեսնենք, ի՞նչ գաղտնիք ունիս ինձ յայտնելու, ասաց Կատեան այնպէս սիրուն երեսնելով, ասես թէ մի քնքոյշ մայր իւր փոքրիկ երեխայի թոթովանքն է պատրաստվում լսելու:

— Ես բժշկապետութեանս հարցաքննութեան կէսը արդէն սուարտել եմ, այժմ մնումէ միւս կէսը...

— Այդ ի՞նչ գաղտնիք է, ասաց Կատեան ծաղրը երեսին. եթէ հարցաքննութիւնդ կիսակատար մնացել է, ինքն-իրան հասկացվումէ, որ պէտք է աւարտես, այստեղ ի՞նչ գաղտնի բան կայ...

— Գաղտնիքը այն է, որ եթէ՝ հարցաքննութիւնս աւարտեմ և բժշկապետ լինիմ՝ որքի՞նչ օգուտ տուած պիտի լինիմ: Աշխարքիս համար բոլոր մէկ չէ, թէ ես ուսեալ բժշկապետ եմ, կամ հասարակ բժիշկ, կենդան եմ, կամ մեռած. ո՞վ իմ ուրախութեանս ուրախակից պիտի լինի և տխրութեանս—ցաւակից...

— Ի՞նչ ես ուզում ասել, ասաց Կատեան կարմրելով:

— Այն եմ ուզում ասել, ի՞նչ որ սիրտդ էլ քեզ այս վայրկենիս ասաց. Կատեա՛ այն ժամանակը կաշնո՞ղ եմ յուսալ, որ դու ինձ սրտանց կներես և ինձ կսիրես այնպէս, ինչպէս որ մի ժամանակ սիրումէիր...

— Միթէ այժմ ես քեզ չեմ սիրում:

— Այո՛, սիրումես, բայց քրոջ պէս...

Պատասխանի տեղ, չզիտեմ ինչպէս եղաւ երկուսս էլ մին մինի սովորականէն աւելի մօտեցանք, գրկուեցանք և շրթունքներէս թուան շատ տաք համբոյրներ:

Յունիսի վերջերին աւարտեցի հարցաքննութիւններս և յուլիսի մէջերը համեստ կերպով կատարեց մեր պսակը նոյն բարեսիրտ Մովսէս քահանան:

Պսակիցս քանի մի շաբաթ անցած ես դանազան հայաբնակ քաղաքներ խնդիրներ ուղարկեցի, որ ինձ քաղաքական բժշկի պաշտօն տան. բայց ոչ մէկ տեղէ հրաւեր չի ստացայ: Զատ սպասելից յետ՝ ուրիշ քաղաքներ ուղարկեցի խնդիրներ և ամեն կողմից ստացայ հրաւերներ: Ես ընտրեցի Վ* քաղաքը: Կատեան իւր գործարանը ծախեց երեսուն հազարի (վերջին տարին չնա տասը հազար զուտ արդիւնք ունէր) ինքն էլ մօտ քսան հազար աշխատած ունէր զբամանոցի մէջ. ամենը միասին պետական զբամանոցը զրեց — նեղ օրուայ համար — և տեղափոխուեցանք Վ*, և ահա վեց տարի է, որ այստեղ կենումենք հանդարտ, առողջ և յաջողակ:

Աստուած մեզ երեք զաւակ պարգևեց, երկու որդի և մի դուստր, նոցա անուններն են՝ Վահան, Աշոտ և Բրաբիոն:

Ահա իմ և Կատեայի պատմութեան շարունակութիւնը և վերջը:

Իսկ եթէ կամենումէք իմանալ ինչ եղաւ Սօփիան, ահա լսեցէք: Երբ որ Դրօղդօվը նորան փախցրեց, նախ գնացին նոքա Ստաւրապօլ, ուր հիւրա-

նոցումն երեք օր մնացին, լետոյ, ճարելով մի շինծու անցադիր, գնացին Փարիզ: Փարիզ հասնելով, Դրօղդօվը յայտնել է Սօփիային, որ նորա հետ պսակուելու ամենևին դիտաւորութիւն չունի, այլ «միասին կենանք, ասել է, այնպէս, ինչպէս որ այժմուայ նիհիլիսթներն են կենում, այսինքն՝ մինչև այնքան, որքան որ մեր փոխադարձ սէրը կտուի. մէկ մէկից ձանձրանալից յետ՝ էլ միասին ապրելը անհնար է. ես կերթամ իմ ճամփով, դու էլ կերթաս քու ճամփով»: Բայց այդքան ևս կարողացած չէ իւր խոստմունքը կատարելու. հէնց առաջին շաբաթից սկսել է կամաց-կամաց խաբելով ձեռքից փողերը առնելու ու անառակ երիտասարդների ու լիտի քօքօթների հետ Փարիզի պանդոկներումը և զբօսարաններումը զուարճանալու: Երբ որ Սօփիայի քսան հազար մանէթը մսխել է պրծել՝ այնուհետև սկսել է Սօփիայի ակնեղէնները գողանալ և ծախել. այդ ևս երկար տևած չէ: Մէկ պատուական օր Սօփիային յանձնել է իւր անառակ բարեկամներից մէկին, և ինքը փախել է. ոչ ոք չիմացել, ուր: Այս կերպով Սօփիան կարճ միջոցումը ականայ սիրուհի է դարձել մի անպիտան ֆրանսիացի երիտասարդի, որ ժամանակէ ժամանակ, երբ փողի պակասութիւնը շատ նեղում է եղել նորան, Սօփիայի սէրը ու գիրկը ծախում է եղել այս կամ այն վաւաշոտ ծերուկին և ստացած փողովն երկուսը միասին ապրումեն եղել քանի մի ժամանակ: Այսպիսի կեանքէ ձանձրացած, մի օր Սօփիան փախել է այդ ֆրանսիացիի մօտից և մտել է այնպիսի

տուն, ուստի կինամարդը երբեք կենդանի չի դուրս գալիս, նա մեռնում է՝ թէ ֆիզիքապէս, թէ բարոյապէս:

Այս չար լուրը հասնում է Ասատուր-աղայի աւանջին. առաջին նուազ նա ամենևին չի ուզում հաւատալ, բայց սաստիկ վրդովվում է: Բարեկամների խորհրդով մի նամակ է գրում Փարիզումը բնակող ուսաց հիւպատոսին և մանրամասնաբար յայտնում է նորան իւր լսած անախորժ լուրերը և հարցնում է նորան՝ ճշմարիտ են արդեօք այդ ամենը: Հիւպատոսը ստանալով նորա նամակը, իւր գործակալներին մինին ուղարկում է տեղեկատու, արդեօք ճշմարիտ է այս չարաբաստիկ եղելութիւնը: Գործակալը աչքով տեսել է, որ մարդոց պատմածի մէջ ոչինչ ստույգ չկայ: Այդպէս էլ ծանուցել է հիւպատոսը Ասատուր-աղային: Այս բոլոր ստանալով, նոյն գիշերը կաթուածը երկու անգամ դարկել է Ասատուր-աղային և միւս առաւօտը նա արդէն անկողնէն դուրս չի կարողացել դնել ոտերը: Բժիշկների խորհուրդը պարզապէս յայտնել է, որ նորա կեանքը մեծ վտանքի մէջ է:

Ասատուր-աղան իւր բոլոր ահագին հարստութիւնը կտակել է, որ յետ մահուանը ընծայուի պետական գանձարանին և կտակի մէջ այսպէս գրել հրամայել է «Տաք գկայսերն կայսեր»: Եւ ինքը շուտով մեռել է: Մեռնելից առաջ փոխել է հաւատը, թէ ոչ, այդ ոչ ոք չգիտէ, միայն այս գիտեն, որ նորա մարմինը հայ քահանաներով չէ թաղուել:

Այսպէս եղաւ Ասատուր-աղայի վախճանը:

Մի երեկոյ նոր էի վերադարձել հիւանդանոցից և Կատեայի և երեխերքիս հետ միասին նստել էինք թէյի սեղանի առջև, յանկարծ նախասենեակումը մի շփոթ բարձրացաւ. մէկ մարդ ներս է ուզում մըտնել, բայց ծառաս չի թոյլ տալիս. մարդը տալիս է իմ և Կատեայի անունները, բայց ծառաս դարձեալ չի թողնում նորան ներս գալու, ասելով Куды такая дрянь лѣзетъ къ господамъ? вѣдь срамъ, ей Богу! Զտապով դուրս գնացի տեսնեմ թէ՛ ի՞նչ է: Յանկարծ ծառայիս ձեռքից փախ-ընկած ներս թռաւ մի պատառոտած հալաւով, ցիր ցան եղած մագերով, կարմիր խոցերով ծածկած երեսով մի ալլակերպ կին. ըոպէի մէջ սենեակը օղիի գարշելի հոտով լցուեցաւ. ներս մտնող կինը սաստիկ հարբած էր:

— Պարոն Վարդան, Կատեա, այսքան միայն կարողացաւ ասել նա, և յետոյ սկսաւ մէկ լալու և մէկ ծիծաղելու:

Ես և Կատեան ապշած նայում էինք և չէինք կարողանում իմանալու, թէ ո՞վ պիտի լինէր այս թշուառականը, վասն զի չէինք լիշում, որ երբ և իցէ, ո՞ր և իցէ այսպիսի կնոջ հետ ծանօթութիւն ունեցած լինէինք:

— Պարոն Վարդան, Կատեա՛ ինձ չճանաչեցիք... ես Սօֆիան եմ...

Բաւական է. չեմ ուզում նկարագրել այս գարշելի և ցաւալի պատկերը:

Սօֆիան սաստիկ հիւանդ էր: Իսկոյն տարի հիւանդանոց և պատուիրեցի օգնականիս ամեն կերպ հանգստացնէ ողորմելի աղջկանը: Ամբողջ վեց ամիս թափեցի վրան իմ բոլոր բժշկական հմտութիւնը, և հազիւ հազ կարողացայ ապաքինելու նորա խորունկ և հնացած զազրելի խոցերը: Բոլոր այդ ժամանակ Կատեան հաշթայթում էր նորա ամեն պիտոյքը, չայ, շաքար, սուրճ, կաթ, կարագ, մեր խոհանոցում պատրաստած կերակրից—մէկ խօսքով՝ ինչ որ պէտք էր առատ-առատ ուղարկումէր նորան: Երբ որ բոլորովին առողջացաւ, ես հարցուցի Սօֆիային թէ՛ ինչ միտք ունի ձեռնարկելու. «կամենաս՝ մնա իմ տանս, ասացի, կամենաս՝ գնա հաշտարխան,—ես քեզ ամեն կերպով պատրաստ եմ օգնելու: Գուցէ մի օր մի լաւ մարդ գտնես՝ պսակուիր. քու օփտը ես կպատրաստեմ»...

—Հա՛ հա՛ հա՛, ծրձաղեցաւ Սօֆիան, բաղդի դուներն այսուհետեւ իմ առաջը չաւիտեան փակուած են: Ես ձեզանից միայն շնորհք եմ խնդրում, որէ՛ թող տաք ինձ, որ ես ձեր տան մէջ նաժիշտ լինիմ: Այս է իմ մէկ հատիկ փափազը, ձեզ երկուսիդ ծառայութիւն անելէ զատ ուրիշ բաղդ չի կայ ինձ համար:

Զատ զօր արի, որ հրաժարուի այս ցնորական դիտաւորութենէն, բայց համոզել չկարողացայ, և զիջանելով նորա աղաչանքին և արտասուքին, վերջապէս, յօժարեցանք նորան մեր տան մէջ դայեակի պաշտօն տալու:

Ամբողջ տարի ջերմեռանդութեամբ կատարեց

Սօֆիան իւր վրայ առած ստոր պարտաւորութիւնը. ոչ մէկ աշխատանք նորա համար ծանր, տաղտկալի կամ նուաստացուցիչ չէր երևում. ոչ մի անգամ նա թոյլ տուած չէ, որ կամ ես, կամ Կատեան, կամ երեխաներս իրանից անգոհանակ մնայինք. ինչ որ ինքը կարողանումէր անելու, երբէք թող չէր տալիս, որ ծառաները անէին. տանս մէջ ոչ մէկ անկարգութիւն չնկատեցի ամբողջ մի տարի, ամեն բան իւր տեղումն էր, ամենայն ինչ սենեակի մէջ մաքուր էր. երեխերքս միշտ մաքուր հագուած էին: Բոլոր օրը ոտքի վրայ էր Սօֆիան. մէկ կահկարասիքի փոշին էր սրբում, մէկ սենեակներն էր աւելում կամ հաւաք-տեղակ անում, մէկ երեխերքի պատառոտած հալաւներն էր կարկատում, մէկ նոցա ցխտած կօշիկներն և մաշիկներն էր սրբում, մէկ լուացք էր անում, մէկ ձծի երեխիս էր օրօրում. միով բանիւ՝ միշտ գտնումէր տան մէջ գործելու մի գործ. նա չգիտէր թէ ինչ է նշանակում մէկ բոպէ նստել ու հանգստանալ: Որքան էր կանուխ զարթէի՝ Սօֆիան միշտ արթնացած էր ու տան աշխատանքովն էր զբաղուած, որքան էլ գիշերը ուշ վերադառնայի տուն՝ նա զարձեալ արթուն էր և զարձեալ մի աշխատանք կունենար: Եթէ աշխատելու բան չլինէր՝ նա սկսումէր երեխերքիս համար գուլպաներ գործելու: Քանի՛ քանի անգամ Կատեան և ես ասել ենք՝ «բաւական է, Սօֆիա-ջան, այդ որքան աշխատես. ինքդ քեզ խնայէ, մի փոքր էլ նիստ, դադար տուր ոտքերիդ ու ձեռքերիդ»:

—Ա՛խ պարոն կամ տիկին, ասումէր նա, այս ի՛նչ աշխատանք է որ իմ արածը, եթէ դուք տեսնէիք օտար աշխարհի կնանիք ինչպէս աշխատել գիտեն, այն ժամանակ դուք ինձ մէկ ըսպէ՛ք ձեր տանը մէջ չէիք պահել: Ու նորանոր եռանդով շարունակումէր իւր ընդմիջած գործը:

Սօֆիայի գալովը ասես թէ՛ մի բարերար գեղեցիկ ճառագայթ փայլեցաւ իմ տան մէջ. քանի՛ քանի անգամ այս խօսքերը ինձ ասել է Կատեան: Երեխայքս խօ մօր պէս սիրում ու պատումէին նորան. նորա գրկից ցած չէին իջնում. «սիրուն Սօֆիա, բարի Սօֆիա, ոսկի Սօֆիա» այս էր նորա անունը երեխերքիս բերանումը:

Ո՛չ մի անգամ չիշեց Սօֆիան ո՛չ իւր և ո՛չ մեր անցեալը. չիշեց իւր ծնողաց անունները, չիշեց իւր բողբոջը և չարաբաստիկ օրերը. ասես թէ Սօֆիան անցեալ չունէր և նորա կեանքի սկիզբը այն օրն էր, երբ առաջին անգամ իբրեւ նաժիշտ մտաւ նա մեր տուն: Կուզէք հաւատացէ՛ք, կուզէք չէ՛, բայց ես այս նոր Մագդաղինացի Մարիամին շատ անարատ կոյսերի հետ չէի փոխիլ, եթէ ամուրի երիտասարդ լինէի:

Թէ՛ւ ես ստանումեմ հայոց լրագիրներ՝ Մեղու Հայաստանի, Մշակ, Արձագանք, և այլն, բայց ամենևին ժամանակ չունիմ նոցա կարդալու. բայց Կատեան ո՛չ մի թուահամար չի թողնում չի կարդացած: Նորա լրագիր կարդալու ժամանակնէ տասնմէկից մինչև տասներկուսը, իսկ և իսկ այն ժամանակ, երբ

ես անպատճառ հիւանդանոցումն պիտի դառնայի: Կատեայի ասելովն, Սօֆիայի աշխարքիս երեսին մի հատիկ սիրած բանը եղել է լսել Կովկասից ոտացած լուրերը:

Առ այժմս այս է Սօֆիայի վախճանը:

Իսկ Գրողովի մասին ձեզ այս կասեմ: Տարի ու կէս սորանից առաջ պաշտօնական գործերով Պետերբուրգ էի գնացել: Մի անգամ Յելիբէկով խա՛նութումը Կատեայիս և երեխերքիս համար ոտնամաններ էի ընտրում. յանկարծ ներս մտաւ ցնցոտի նշանազգեստով, մի ոտին պատառոտած կոշիկ և միւս ոտին գութափեռ չէ կրկնակօշիկ հագած, արրըշուութիւնից քիթը կարմրած ու կապուտիած, գլխու մազերը թափած, ինքն էլ սաստիկ հարբած մի սպայ և մօտենալով ինձ, մասամբ ուսերէն և մասամբ ֆրանսերէն ասաց «Պարոն, ձեր սաջև կանգնած է՝ ռուսաց քաջ զօրքի ազնիւ սպան. ես ձեր երեսից տեսնումեմ, որ դուք բարի և ազնիւ մարդ էք. եթէ մի քանի րուրի կարող ես բաղդաւորացնել ռուսաց քաջ զօրքի ազնիւ սպային, խնդրեմ, մի՛ խնայէք, վասն զի տանս մէջ մայրս մեռած է, սեղանի վրայ դրած է, թաղելու փող չունիմ. կինս հիւանդ պարկած է, ճարի փող չունիմ, եօթը երեխայքս սովից մեռնումեն հացի փող չունիմ»: Խանութի տէր պարոն Յելիբէկով, լսելով այս ճառը՝ ասաց. «պարոն սպայ՝ այս քանի տարի է, որ դու միլենոյն երգն ես երգում. եթէ ասածդ ճշմարիտ լինէր՝ մայրդ վաղուց հող դարձած պիտի լիներ, կինդ

և եօթը զաւակներդ էլ մեռած: Առ այս Հինգ կո-
պէկը ու զնա՝ օղի համար քեզ այս քանիցս աւել
հարկաւոր չէ:

Ուշադրութեամբ նայեցայ սպայի երեսը և խ-
կոյն ճանաչեցի իմ ախոյեան Վլադիմիր Գրօզովին:
Քացի քսակս մէջից երեք մանէթանոց հանեցի և
տուի իրան: Տեսնելով այսպիսի անակնկալ բազդ-
Գրօզովը բռնեց ձեռքս և ուղումէր պաղնել. բայց
ես զգուսնքով լիտ քաշեցի: Այս վերջին անգամն էր,
որ նորան տեսայ: Սոցա նմանների վախճանը յայտնի
է. ձմեռուայ մէկ ցուրտ գիշեր անշուշտ սառած կը
գտնեն սուրան կամ օդետան մօտերը, կամ մէկ խուլ
փողոցի տան պատի տակ:

Սօֆիայի մայրը, Օտաննան, մինչև այժմ կեն-
դանի է, և կենում է Պոսկովի անկելանոցների մինի
մէջ: Նորա սիրած խօսակցութիւնն է, ասում են հա-
յերին հայհօյելը, որոնք իբր թէ, նորան այս ան-
բազդութեան հասցրել են:

Վ Ե Ր Զ

7/21-1922

Հ. Բ. Ա. ՄԱՍԿԱՆՈՎ

15697

2013

